

ՍԻՈՆ

ԼՍՏԱԳԻՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ՆՐԱՏ ԵՐՈՒՍՈՒԼՅԱՆ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹՅԱՆ

ՆՈՐ
ԵՐԶԱՆ 1957

ԼԱ
ՏԱՐԻ

«سیون» مجله ارمنیة شهریة، ادبیة، ادبیة، ثقافتیة، للغة والبیان

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

«ԱՌՈՆ»-ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒՂՔԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԳՈՐԱՆԸ
ՇՆՈՐՀԱԿԱՂՈՒԹԵԱՄԲ ՍՏՈՑԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱՂ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- ԱՌՈՑԵԱՆՆԵՐ - Հրատ. Գանատայի Ձեխ Մարմնակրթական Միութեան:
 ԵՐԿՈՒ ՏԱՆԻՄԱՐԳՎՈՑԻ ՅՈՒՔԵԼԵԱՐՆԵՐ - Նուէր Գէորգ Իփեհանէ:
 Բէքինի Ազգ. Մատենադարանէն ստացանք 7 Անգլերէն զիրքեր:
 ՀԱՅ ԱԶԳ. ԲՈՒԺՍՐԱՆ - Ազունիէ, Լիբանան: Տարեկան Տեղեկագիր 1956 տարեշրջանի:
 Հ. Կ. Ե. Մ. Ի ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻ - Ա. Հնգամեակ: Պէյրուի: Նուէր
 Դաւիթ Էվէրէկեանէ:
 ՔՍՈՒԱՆԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՑ ԼՈՎԷԼԻ -
 Նուէր Կարէն Քոյ. Կտանեանէ:
 ԽԱՐԵՆԳ ԵՒ ԻՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ - Մանուկ Գ. Ճիզմէճեան (նուիրատու):
 ՀԱՅՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ (Ը. Տարի, 1957) - Վարդան Քոյ. Ժամկոչեան (նուիրատու):
 U. S. A. - A reprint of a new article on U. S. - Presented by A. Der Tatevassian.
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱԼՊՈՄ Հայ Գեղարուեստասիրաց Միութեան - 35 ամեակ: Նուէր Վար-
 Լկարիչ Աւօէն ստացանք. - [չութեանէն:
 ՅԵՂԱՓՈՒԿԱՆ ԱԼՊՈՄ, Բ. Տարի, Թիւ 4, Մ. Վարանդեան. Եւ Թիւ 5՝ Շ. Միսաբեան:
 Աւետիս Տէր Սահակեանէ ստացանք. - ա) ԵԴԻՊՏԱԿԱՆ ԱՒԱՆԴԱՎԷՊԵՐ - Յ. Պ. Գա-
 լէմբարեան: բ) ԿՈՄԻՏԱՍ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳՈՐԱՆ - Բ. Հատոր, 1957:
 Պ. Պ. Աճէմեան կը նուիրէ. -
 ա) ԴԺՈՒՔԸ - Խ. Ի. Պօսթանճօղլու: բ) ՈՒՂԵՑՈՅՑ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ:
 գ) Նոյնը - Քննութեան հարցումներ: դ) ԱՍՏՈՒԾՈՑ ԾԱՌԱՆ: ե) Նոյնը - Քննիչ. հարց.:
 ՍԿՍՈՒՈՄԲ ՈՒԹ ԶԱՅՆԻՑ ՇԱՐԱԿԱՆԱՑ, (Բազմաազրուած) - Նուէր Ս. Գ. է:
 ՏԱՅԻ ԿԱՐԱՊԵՏ ԿՈՄ ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ՓԵՍԱՑՈՒՆ - Կատակերգութ. 3 Արար: Նուէր Կ.
 Արտասահմանի Հետ Մշակի. Կապի Ընկերութեանէն ստացանք. - [Տօնիկեանէ:
 ա) ԵՐԿԵՐ - Վ. Տէրեան: բ) ԵՐԿՐ - Եր. Օտեան: գ) ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ - Սիսամանթօ:
 դ) ՀԱՅԿԱԿԱՆ ԶՍՐԴԱՐՈՒԵՍ - Ա. Շ. Մնացականեան: ե) ՀԱՅԿ. ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՊՈՍԸ
 - Յովսէփ Օրբէլի: զ) ՀԱՅԿ. ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԺՈՂՎՐԴ. ԵՐԿԵՐ - Ա. Մնացականեան:
 է) ՅԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԵԱՑԲ - Վ. Փափագեան:
 ՍՈՒՐԲԲ ԵՒ ՏՕՆԲ (Բ. Տպրթ.) - Թորգոմ Պատրիարք: Նուէր Ս. Աթոռոյս Տպարանէն:
 Հ. Եփրեմ Տէր Ղազարեանէ ստացանք. -
 ա) ԹԱՓԱՌՈՂ ՈՂԻՔՆԵՐ: բ) ԲԱՌԱՐԱՆ (Ֆրանս. - Հայերէն):
 ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԵՐԿԵՐ - Պաշտօն Հոգեհանգստեան: Դաշնա-
 տրեց Վարդան Սարգսեան - (Ազգամազրուած):
 (Շարունակիկ)

ԼՈՅՍ ՏԵՍԸԻ

Ս. ԱԹՈՒՈՅՍ ՏՊԱՐԱՆԷՆ

Օ Ր Ա Յ Ո Յ Ց

1958

ՔՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

(ԸՍՏ ՀԻՆ ՏՈՍԱՐԻ)

էջ՝ 176

Գին՝ 100 Ֆիլս

Յառաջիկայ Ամանորի եւ Ս. Ծննդեան Հրաշափառ Տօնին առիթով ՍԻՈՆ յանուն Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր եւ Սրբոց Յակոբեանց Միարանութեան, օրհնութեան եւ շնորհաւորութեան ողջոյններ կը ներկայացնէ իր պատուական աշխատակիցներուն, բաժանորդներուն, ընթերցողներուն, համակիրներուն եւ սիրեցեալ ազգիս լրութեան:

ՍԻՈՆ սրտագինս կը բազձայ եւ կը մաղթէ որ Նոր Տարին աշխարհին եւ մեր ժողովուրդին համար խաղաղութեան տարի մը ըլլայ եւ մանկացեալ Յիսուսի հաճութեամբ, մոռցնել տայ ազգային-եկեղեցական ներքին վէճերն ու անհասկացողութիւնները:

Սրտագինս կը բազձայ մեր եկեղեցին հաստատուն պահէ եւ ամէնքս առաջնորդէ երանաւէտ հորիզոններ:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

	ԻՐԵՆ
Հայրագեական Ծննդեան շնորհաւորութիւն	297
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
— «Թեւամիջ առն ընտանիք իւր»	298
Խրիմեան որպէս գործիչ	ԿԻՐԵՂ ՎՐԻ. ԳԱՔԻԿԵԱՆ 302
Գրագէսը՝ Հայոց Հայրիկ — Մ. Խրիմեանի մեջ	ԶԱԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ 305
Խրիմեան Հայրիկի անսխալ մեկ նամակը	310
ԿՐԹՆԱԿԱՆ	
— Ծնունդի երգը	ԳԲ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ 312
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ	
— De Profundis	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ 315
ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
— Պապ Աբգակունքի	ՀՐԱՆԳ Բ. ԱՐՄԷՆ 317
ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԿԱՆ	
— Միջնադարեան հայ կոմպոզիտորներ	ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ 320
Կալկարայի Ս. Նազարէր եկեղեցւոյ նիւնարկութեան 250-ամեակը	ԱՍԱՏՈՒՐ ԿԻՒԶԷՂԵԱՆ 323
Պատեմական Հայորդագրութիւն Ս. Արոտոյ Գիւմրէի	326
Նախկոպոսական ձեռնագրութիւն	327
Շնորհակալութեան գիր՝ Երանաշահի Տ. Կիւրեղ Պատրիարքի շիրմին շինութեան առիթով:	327
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ	
— Մասնակի նորոգութիւն Ս. Յակոբեանց Տաճարին մէջ	328
— Ճաշկերոյքի պահու Յարգանքով Վեհափառ Թաղաւորին	328
— Ամերիկեան զեպպանի այցելութիւնը	330
— Պէյրուքի Ամերիկեան Համալսարանի Տնօրէնին եւ Ամերիկեան ու Անգլիական Հիւպատոսներուն այցելութիւնը	330
— Հեռագիրներ	331
— Եկեղեցականք - Բեմականք	332
— Պատեմականք	333
— Հայոց Հայրիկ Մկրտիչ Ա. Կարոյիկոս Խրիմեանի մահուան 50-ամեայ նահապետութիւն	333
Բարեպատեմական նուէրներ	334
Յանկ նիւրոց 1957 տարւոյ	335

— ≡ Ս Ի Ո Ն ≡ —

Լ.Ա. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1957

◀ Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Բ ▶

Թ Ի Ի 12

ՆԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԱՐՔ

Ե Ի

Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թ. 675/2

11 Դեկտեմբեր 1957 թ.

Ս. ԷՋՄԻԱՄԻՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԱՅԵԱՆԻՆ,
ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԱՐՔԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ,

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Փրկչի Իջման Սուրբ Սեղանի առաջ աղօթք կը կարգանք առ Ասուած որ «խաղաղութեան եւ ի մարդիկ հանութեան» Սուրբ Ծննդեան երկնառաք օրհներգը իջնէ առասպէս երկրի վրայ եւ առաջնորդ ու զօրավիգ դառնայ մեր օրերու մարդերուն եւ ժողովուրդներուն ի փառս Ասուծոյ եւ ի փրկութիւն ազգի մարդկան:

Մեր Տիրոջ Ծննդեան եւ Ասուածայայտութեան մեծ եւ սփանչելի աւետիսով բոլր բացուին դռները Նոր Տարիի մը որ հետք բերէ բարի օրեր եւ խաղաղութիւն հաւե հայ ժողովուրդին ու Հայաստանեայց Եկեղեցիին, հեռաւոր եւ մերձաւոր մեր բոլոր զաւակներուն պահելով պահպանելով զանոնք ամբողջ ու անխռով եւ սիրով միաբան, մեր սուրբ հաւասքի վէմին վրայ անւարժ, առաքինի ու եկեղեցանուէր ու ազգաւէն գործոց փառաւոր յաջողութեամբ:


Ձերդ Ամենապատուութեան, Ձեր Սուրբ Աթոռի Միաբանութեան եւ համայն մեր սիրեցեալ հաւասացեալ ժողովուրդին ողջոյն եւ օրհնութիւն Հայրապետական եւ արժաբոյս մարքանք վասն Ձեր բոլոր ֆաշառողջութեան, արեւաժողութեան եւ բարօրութեան:

Ողջ մնացէ՛ք, ճանապարհ մնացէ՛ք եւ ֆաշալեռուցէ՛ք Սուրբ Ծննդեան շնորհներովը զօրացած, եւ գործեցէ՛ք սուրբ եռանդով գօտեպինդ, խաղաղ ու լաւատես, Ձեր հայեացքը սեւեռած դէպի Սուրբ Էջմիածին՝ ասուածակառոյց հաւասքի սրինք ամենայն հայոց:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ, եւ սէր ու խաղաղութիւն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ, ամէն:

Վ Ա Ջ Գ Է Ն Ա .

ՆԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԽՄԻՍԵԱՆ ԲԱՆԿԱՆ

“ԹՃՆԱՍԻՔ ԱՌՆ՝ ԸՆՏԱՆԻՔ ԻՒՐ”

(ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՀՈՒԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌՔԻԻ)


Այս տարի լրացաւ Մկրտիչ Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահուան յիսներորդ տարին: Հակառակ կէս դարու այս անշրպետին, որ մեծանուն Հայրապետը կը բաժնէ մեր օրերու սերունդէն, անոր յիշատակը սակայն անթաւաւ կը մնայ իր զաւակներու մտքին ու սրտին մէջ: Այս իրողութեան հաստատումն ու պաշտօնականացումն էր Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսին այն կարգադրութիւնը սրով իր Հօտին ուշադրութիւնը հրաւիրեց այս կարևոր տարեգարձին վրայ հրահանգելով «հանդիսաւոր հոգեհանգիստ կատարել և խօսիլ հայրենասէր մեծ Հայրապետի կեանքին և գործին մասին»:

Հայութիւնը գրեթէ ամենուրեք սիրով կատարեց որդիական ու ազգային այս քաղցր պարտականութիւնը և վերջիշեց անոր ներշնչող կեանքն ու գործը: Գրութեանս յաջորդող էջերուն մէջ կ'ուրուազծուի արդէն մեծ կաթողիկոսին գէմքը իբրև գործիչ և գրող: Պիտի շուգեմք կրկնել իր մասին բազմիցս բուսածները: Պիտի փոփաքինք սակայն անգրադառնալ Խրիմեան Հայրիկի կեանքին մէջ պարզուած որոշ մէկ երեւոյթի մասին, որ ոչ միայն այժմէական՝ այլ անվարան կարելի է ըսել թէ յաւիտենական հարց մըն է մեր հայ իրականութեան մէջ: Մեր մեծ վէրքերէն մէկն է որուն բուժումը միայն մեզ պիտի կրնայ դնել մեր նպատակներու և իտէալներու իրականացման ճամբուն վրայ: Անվարան կարելի է ըսել որ Հայրիկի մեծ գործին և իտէալներու իրականացման արգելք եղող այս ժխտական երեւոյթը պատճառն է մեր գրեթէ բոլոր ազգային դժբախտութեանց: Այս դատապարտելի երեւոյթը ինքզինքը շեշտուած ձեւով կը կրկնէ նաև մեր օրերուն մէջ, և որ ուրիշ բան չէ եթէ ոչ Աւետարանական դառն ասացուածքի մը իրականացումը մեր մէջ. «Թշնամիք ան՝ ընտանիք իւր»:



ԺԹ. դարու հայկական Զարթօնքի ռահվիրաներէն մէկն է նաև Խրիմեան Հայրիկ: Սակայն ինք շեշտակի ձեւով կը զատորոշուի իր ժամանակակից գործիչներէն իր ողիով, գործելու իր մեթոտներով և մանաւանդ՝ իր գործի դաշտով:

Հայ Զարթօնքի միւս նախակարապետները, թէ՛ Արեւելեան Հայաստանի և թէ՛ Արեւմուտքի մէջ, իրենց ներշնչումը և իտէալները կը ստանան, բացի Խ. Աբովեանէն, օտար կրթական օճախներէն, և կը գործեն, թէև հայաշատ կեդրոններու մէջ, բայց հեռու՝ հայրենի ՀՈՂէն, և այդ հողին կապուած իսկական ՀԱՅՈՒԹԵՆէՆ: Խրիմեան սակայն իր թափը կը ստանար հայրենի ՀՈՂին վրայ ապրող իր ժողովուրդէն և իր գործունէութեան դաշտ կ'ունենար նոյնինքն այդ ՀՈՂը: Իբրև հարազատ գաւազն հայկական գաւառին, անխաբելի բնազդով հա-



մտղում կը գոյացնէր որ ազգին մէջ մնայուն եւ տեսական կրթական ու ընկերային արդիւնքներ ձեռք բերելու համար անհրաժեշտ էր գործել հայ ժողովուրդի սեպհական ՀՈՂին վրայ:

Արդարեւ ճամբայ ելնելով այս առողջ բնազդէն Խրիմեան զրեթէ իր ամբողջ գործունէութիւնը, ըլլայ այդ ուսուցչական, հովուական և զբաղման, կը կեդրոնացնէր զաւանի հայութեան վրայ: «Ժողովուրդ որ նստէր ի խաւարի, ետես զլոյս մեծ»: Ս. Գրական այս զեղեցիկ ասութիւնը արդարեւ սկսած էր իրականանալ դարերով անտեսուած հայ զանգուածներու մէջ Խրիմեանի զաւան բերած մամուլով և ձեռնարկած կրթական գործով: Ուսումնարան, թերթ, զբաղման, թանգարան և նման դաստիարակչական հաստատութիւններ իրականութիւն գործած էին պատմական Հայաստանի բուն իսկ սրտին վրայ: Նման ձեռնարկներ, Խրիմեանի թէև ազատաշունչ բայց ջերմապէս կրօնազգած շունչին տակ, արդէն իսկ հիմքերը դրած էին ազգայնական առողջ շարժումի մը: Այս շարժումը գրուած ըլլալով ազգային շօշափելի և թանձրացեալ արժէքներու վրայ, անոր մասնակիցները որքան լուրջ նոյնքան ալ ինքնավստահ իրատեսութեամբ կը լեցնէր: Նման հաստատ և առողջ հիմքի վրայ գրուած դաստիարակութիւն մը պիտի ազատէր հայութիւնը այն ահաւոր աղէտէն որուն ի վերջոյ անխուսափելիօրէն ենթարկուեցաւ ան առաջնորդուելով իրենց իտէալներու սնունդը, մղումը և ատաղձը օտար միջավայրերէ և վերացական զաղափարներէ ստացող գործիչներէ . . . :

Խրիմեանի սկսած գործը հազիւ թէ արմատ սկսած էր բռնել հայ հոգիներու մէջ երբ «իրեններն» իսկ թոյլ շտուիին որ խաղաղ ու լռիկ այս մեծ և սուրբ գործը պսակուէր իր ամբողջական յաջողութեամբ: «Թշնամիք ան՝ բնտանիք իւր»: Քիչ «ընտանիքներու» մէջ Աւետարանական այս դտուն ճշմարտութիւնը այնքան ողբերգականօրէն իրականացած է որքան մերինին մէջ: Անհատնում են վկայութիւնները մեր պատմութենէն այս գծախա իրականութիւնը հաստատող: Ի դուր է մեր աշխարհագրական դիրքին կամ այլ արտաքին ազդակներու մէջ միայն որոնել մեր գծախտութեանց պատճառները: Մերինին հետ նոյն աշխարհագրական պայմաններու մէջ գտնուած են մեր արևելքն ու արևմուտքը երկարող Իրանական ու Փոքր Ասիական բարձրաւանդակներուն բնակիչները: Սակայն այս երկու երկրամասերուն մէջ ալ անպակաս եղած են կայսրութիւններ պատմութեան մէջ, և գոյութիւն ունին այսօր իսկ Մերձաւոր Արևելքի երկու մեծ պետութիւնները: Մեր շարունակաբար «պղտիկ ածու» մնալուն պատճառները ամենամեծ չափով ներքին են: Մեր գծախտութեանց իբրև պատճառ՝ արտաքին ազդակներ միայն մասնանշելը բացատրելի է «բանայնացում» կոչուած հոգեբանական բառով, ըստ որում անհատ մը իր անխոստովանելի տկարութիւնները կը ջանայ ծածկել կամ բացատրել «բանաւոր» նկատուած պատճառաբանութիւններով, փոխանակ մատը բուն իսկ վէրքին վրայ նկատուած պատճառաբանութիւններով, փոխանակ մատը բուն իսկ վէրքին վրայ և ազգերու նկարագրի և ճակատագրի կերտումին մէջ: Սակայն հակառակն ալ նոյնքան և աւելի ճշմարիտ է. ազգեր և անհատներ լաւագոյնս օգտագործելով իրենց միջավայրը կը շինեն իրենց ճակատագիրը: Ասոր մեծագոյն օրինակը իրենց միջավայրը կը շինեն իրենց ճակատագիրը: Ասոր մեծագոյն օրինակը այսօրուան աշխարհի հզօրագոյն պետութիւնը եզոյ Միացեալ Նահանգներն է:

Նոյն այս երկրին ու միջավայրին մէջ դարերով ապրած են աշխարհի ամենէն յետամնաց ցեղերէն ոմանք որոնք այսօր ընդհանուր անունով Ամերիկեան «հրն-դիկներ» կը կոչուին, առանց ստեղծելու մեծ քաղաքակրթութիւն մը, կամ առանց վերածուելու մեծ և հզօր պետութեան մը:

Առանց խորանալու մեր պատմութեան բաւիղներուն մէջ, հաստատելու համար որ մեր «պղտիկ» մնալուն պատճառը միշտ մենք իսկ ենք եղած, յիշենք լոկ Խրիմեանի պարագան: Իրմով ազգային յոյժ խոստովալից շարժում մը սկսած էր Հայաստանի հողին վրայ որ եթէ նոյն թափով և նոյն ուղիով շարունակուէր ի վերջոյ պիտի պսակուէր մեր դարերու երազին իրականացումով: Սակայն «խաւարին մէջ դարանակալած անձնական ոստիութիւններ», Խրիմեանի կենսա-դրին իսկ բառերով, ողի ի բռին աշխատեցան մարելու իր վառած ջահը, և յա-ջողեցան... յանդարմանելի վրաս համայն ազգին:

Մեր մէջ դժբախտաբար շինարար ու դրական նման ձեռնարկներ շարու-նակաբար բաղխած են «Հարամազ թշնամութիւններու», բղխած միշտ՝ «ընտա-նիքի» անդամներէն: Հայրիկ որ համակ նուիրում և բարութիւն էր, ենթարկուած է քանիցս մահափորձի. իր կեանքին դէմ դաւադրութիւններ սարքուած են: «Հայրիկ մահանիւց կը լինի կառալարութեան, իբրև պետութեան վտան-գաւոր անձ մը...»: «Իր դէմ նիւթուած դաւադրութեան մէջ կը հաստատուի կարգ մը հոգեւորականներու գործակցութիւնը փուրջ յելուզակներու հետ...»: Խրիմեանի կենսադրէն մէջըբերուած այս սեղմ տողերուն մէջ կը կարգանք մեր իսկ ժամանակներու պատմութիւնը: Հայրիկ իր ժամանակին կ'եղերգէ. «Ասացի զնին հրագ վառեմ, ո՛հ, յիսերիմ շիշուցիմ զայն»: Նոյն զգացումը իբրև հա-ռաշանք և իբրև ազրում կը փրթի այսօր յաճախ՝ Հայրիկի շաւիղէն քալող շատ մը հողիներու խորէն...:

Այդ «հին ճրագի վառման» նուիրուած են մեր նուիրապետական Աթոռ-ները թէ ի Հայաստան և թէ յԱրտասահման: Փակուած եկեղեցիներ կը բաց-ուին, ձեմարաններ կը վերածուին հողեր լոյսի կեդրոններու. հողիներու մէջ առկայծող Աւետարանի լոյսը կ'արձարձուի: Մոռցուած ու լքուած երբեմնի գաւառէն տղաքներ կը բերուին և համբերատար աշխատանքով անոնց մտքի և հողիի աչքերը կը բացուին կրօնական և մշակութային անմեռ արժէքներու. խախտուած սրբութիւններ կ'ամրապնդուին և անանձնական նուիրումի և կար-գաւորութեան վատուած ողին կենդանացնելու ջանքեր կ'ըլլան: — Նուիրա-պետական մեծ Աթոռներու այս շինարար, դրական և առողջ աշխատանքներուն իրենց ճիգերը կը խառնեն բազմաթիւ այլ կրթական ու ընկերային ազգային կազմակերպութիւններ միշտ վառ պահելու համար Խրիմեանի ակնարկած «զհին ճրագ»:

Սակայն այս սրտապնդիչ և հողեպարար ճիգերու դէմ կան խօլ և խրդային սաղայէլական ոյժեր, որոնք «գործակցութեամբ կարգ մը հողերականներու», ինչպէս Խրիմեանի օրերուն, այսօր ալ կը «մոլեգնոտին» մարելու համար Ս. Լուսաւորչի և Ս. Մեսրոպի վառած հողիի և մտքի ջահերը: Իրենց կործանիչ նպատակներուն հասնելու համար այդ դիւային ոյժերը «կը դիմեն զրպարտու-թեան ամենէն զուրկի և զգուցելի հնարքներուն», ինչպէս բրած էին Խրիմեանի անձին դէմ: «Գիւական այս հնարքները» ուրիշ բանի չեն ծառայեր սակայն

բացի ազգին անունը արատաւորելէն, մեր ժողովուրդը շարունակ նկուն և «պզտիկ» պահելէն, և զանոնք երկնողներու գէժ, ազգային և արտաքին շքր-ջանակներու մէջ, զգուանք ու զայրոյթ ստեղծելէ: Հայրիկի «ոխերիմները» անցած են պատմութեան՝ Աստուծոյ և ամենքիս դատապարտութեան անջնջելի խարանը իրենց ճակտին: Սակայն Հայրիկ կ'արժանանայ Աստուծոյ և ազգին յաւերժական օրհնութեան:

Երբ կանգ կ'առնենք այսպէս, գէթ պահ մը, Խրիմեանի լուսապսակ յիշատակին առջև, յայտնելու համար ազգովին զգացուած մեր երախտիքը՝ հանրային ծառայութեան դաշտին մէջ իր ցոյց տուած ամբողջական նուիրումին համար, լաւագոյն առիթը չէ՞ արդեօք, ներկայ գէպքերու լոյսին տակ, մեր ուշադրութիւնը կեդրոնացնելու այն ժխտական երեւոյթի մասին որ Խրիմեանի սրբազան զործին արգելք հանդիսացաւ, և որ միակ պատճառն է հայ ժողովուրդի զրեթէ անցեալ ու ներկայ բոլոր վրիպանքներուն:

«Թ՛չնամիք ան՝ ընտանիք իւր»: Հին Տարուան այս վերջալոյսին, կամ նոր Տարուան արշալոյսին յարմարագոյն առնելու չէ՞, եթէ զրկուած ենք Աստուծոյ մասնաւոր լոյսէն, գէթ Խրիմեանէն իսկ եկող լոյսին տակ, վերադնահատութեան ենթարկելու այն անխտրական միջոցները զորս կը զործածեն մեր մէջ կարգ մը շրջանակներ ձեռք ձգելու համար վաղանցիկ և ժամանակաւոր յաջողութիւններ, զուտ անձնական կամ հատուածական փառասիրութիւններ զոհացնելու համար: Առնելու չէ՞ անդրադառնալու որ ստելու, զրպարտելու, եղծելու և խեղաթիւրելու անբարոյական չափանիշները, որոնք ընդունուած օրէնք դարձած են մեր կարգ մը շրջանակներու մէջ, կը ծառայեն լոկ խաթարելու և եղծելու մեր ցեղային նկարագրի մնացած առաքինական գիծերը, զմեզ ազգովին անպէտ հաւաքականութեան մը վերածելով: Մեր ժողովուրդը ցարդ կեցած է, և ասիկէ վերջ ալ կրնայ կենալ լոկ բարոյական և հոգեկան մնայուն արժէքներու վրայ: Երբ քաշուին անոնք իր ոտքերուն տակէն, պիտի նմանի ան աւազի վրայ կառուցուած շէնքի մը որ պիտի փլչի անխուսափելիօրէն երբ անձրեւները իջնեն և փոթորիկները յառնեն: — Հայ ժողովուրդի «ընտանիքի» անդամներէն ոմանք, իրենց բարոյականէ զուրկ և պատեհապաշտ զործունէութեամբ այս է որ կ'ընեն, սուտի և խեղաթիւրումի շարունակական ներարկմամբ միտքեր և հոգիներ խաթարելով, և բացէ ի բաց և պաշտօնապէս դիմելով «զրպարտութեան ամենէն դոճիկ և զգուելի հնարքներուն . . .»:

Լոյսի մշակներ, որոնցմէն էր Մկրտիչ Ա. Ամենայն Հայոց կաթսղիկոսը, յետ բազում նեղութեանց և շարշարանաց, «արմաւենիներու պէս պիտի ծաղկին»: Իսկ ասոնց գէժ շարունակական պայքարի մէջ եղող խաւարի որդիներուն վրայ պիտի իջնէ Աստուծոյ արդարութեան և պատմութեան դատապարտութեան մճիւղը կապարային ծանրութեամբ որուն ներքեւէն «յաւիտեանս չեն կանգնելոց»:

Առնելու չէ՞ եկած արդեօք, այսքան վրիպանքներէ վերջ, լսելու և զործադրելու մեր իսկ պատմութենէն և Խրիմեաններէն եկող իմաստութեան ձայնը. — դադրեցնել «ընտանիքիդ թ՛չնամին» ըլլալու անփառունակ դերակատարութիւնը. միացնել մեր փոքր ոյժերը ազգային և եկեղեցական մեծ խեղախնայութեամբ շուրջ: Նոր Տարիի պատգամն ալ այս է:

ԽՐԻՄԵԱՆ ՈՐՊԷՍ ԳՈՐԾԻԶ^(*)

Մարդեր կան որոնց կեանքի վերլուծումը, վերլուծումն է ամբողջ դարաշրջանի մը, որովհետև անոր մէջ կը գտնէք ամբողջ դարաշրջանի մը խտացումը իր ձգտումներով և իրագործումներով։ Խրիմեան Հայրիկ անոնցմէ մէկն է։

Ձինք երկնող շրջանը կը սկսի իր ծնընդեան թուականով (1820) և կ'երկարաձգուի մինչև 1850։ Ասիկա շրջանն է ազգային-եկեղեցական, գրական, կրթական, քաղաքական աչքառու յեղաշրջումներու։ Հայ Զարթոնքի դարն է այդ։

Խրիմեան որ կը ծնի իբրև գեղացի մը, յետոյ վարժապետ մը և կրօնաւոր մը, այս բոլոր վերիվարումներուն մէջ պիտի ունենայ իր գերը, իբրև կրօնաւոր, հայրենասէր, քաղաքական գործիչ, յեղափոխական, վարժապետ, կրթական գործիչ և այլն։ Ու պիտի մեծնայ այսպէս կեանքի ամենէն խոնարհ խաւերէն մինչև կաթողիկոսական աթոռի բարձունքը, ըլլալու համար հայոց պատմութեան հականերէն մին։

Այս առթիւ զանց պիտի առնենք իր կենսագրութեան ժամանակագրական թուումը, և պիտի կեղերոնանանք իրեն անձնաւորութեան յատուկ կարգ մը յատկանշական կողմերուն վրայ։

Ա. — Կրօնաւոր Խրիմեանի մեջ. — Իր մասին մեր խօսքը կը բանանք այս վերնագրով, անոր համար որ ունէ անհատի մէջ կրօնքը անոր կեանքին ուղղութիւն տուող, անոր գործին ձև, կերպարանք, արժէք տուող գերագոյն իսկութիւնն է։

Այս տեսակէտի մասին կայ սակայն խոտոր ըմբռնում մը։ Որովհետև մարդերէն շատերուն համար կրօնքը, անոր շուքն ու բոյրը՝ պերճանք մըն է ու կրօնքին պաշտօնեան ընկերային կամ ազգային գործիչ մը միայն։ Այս պարագային կրօնաւորին ու հաւատացեալին համար կրօնքը ու կրօնքին ասպարէզը կը դադրի ներշնչում ըլլալէ, իր խօսքն ու գործը չունենար ճշ-

մարտութեան համոզումին ոյժն ու զերը։ Եկեղեցւոյ բեմն ու կեանքը կը վերածուի հողեոր ապրումէ մը աւելի՝ ճարտարամտութեան և գերակատարութեան ասպարէզի։

Խրիմեանի մէջ չենք կրնար ողջունել բարձրագոյն դաստիարակութենէ անցած կրօնքի տեսարան մը, շոնթալից աստուածաբան մը, և կամ տիաղոսակիր մը։ Բայց իր մէջ կրնանք ողջունել այն ինչ որ աւելին է քան այդ բոլորը. իրաւ քրիստոնեան եւ նօստիս կրօնաւոր։ Խրիմեան հեռու մեծ ոտաններու հակակրօն լիկումներէն, հասակ առած հայ զաւառի կրօնաբոյր մաքուր մթնոլորտին մէջ, կրօնը պայմանաւոր է իր մէջ խորունկ հաւատքով մը։ Կրօնը իր էութիւնը պարուրող ոգիկնող աստուածային մանանան է։ Խրիմեան չեզու երբեք կրօնքին արհեստաւորը, այլ մանաւանդ ճշմարտութեան համոզումով լեցուն կրօնքին իսկական արուեստաւորը, ճշմարտութեան առաքեալ մը, Աստուծոյ գործող աջը հայութեան թշուառ զանգուածներէն ներս, միշտ այն յստակ համոզումովը թէ կրօնքին իրաւ ապրումն է միայն կեանքին և ընկերութեան չարիքներուն, ցաւին, տագնապին պաշտանը։ Այս տեսակէտէն սքանչելի էջեր են իր կրօնաբարոյական ու քարոզչութեան գրութիւնները։ Կրօնական ապրումի, համոզումի, առաջնորդութեան անփոխարինելի էջեր, ու հայելին Խրիմեան աստուածախօս կրօնականին, ու կրօնաւորին, որ իր ժողովուրդին հերոսն է, իբրև առաքելափոխ վարդապետ ու հայրապետ։

Բ. — Հայրենասէր Խրիմեանի մեջ. — Դժուար է սահմանել հայրենասիրութիւն յղացքը այս օրերուն մանաւանդ, ուր ան եթէ մէկ կողմէն կը շփոթուի զանազան քաղաքական դաւանանքներու հետ, միւս կողմէն վերածուած է ազմուկի, պողտութի, ցուցամոլութեան և ունայնամիտ փառասիրութեան, որ միտումն է ճշմարիտ և շինարար հայրենասիրութեան։ Ատոր կարկատուն օրինակն է սփիւռքահայ աշխարհը այս օրերուն մանաւանդ, ուր այս տեսակի աման հայրենասիրութիւն մը քառուի է վերածած մեր Եկեղեցին, մեր զբոսը, մեր ընտանիքը և ընկերութիւնը։

(*) Խօսուած 14 Դեկտ. 1957, Շարաք օր, Խրիմեան Հայրիկի մահուան յիսնամեակի հանդէսին։

ձշմարիտ հայրենասիրութիւնը նուիրական բան մըն է, այնքան որ նոյնիսկ կրօնքը դայն չի հակասեր, վասնզի ազգն ու հայրենիքը արժէքներու գրոյթներ են, որոնց մէջ իսկ կը ծնի մարդ, և որոնց հաւատարիմ ծառայութեան պարտքին տակն է արիւնին իսկ ճամբովը, Ասուածադիր բնական օրէնքներու իսկ պարտադրանքովը:

Սրբիմեանի մէջ մենք կը գտնենք հայրենասէրը իր բիրեղ ամբօթեան մէջ, վեր շուկայիկ հաշիւներէ, վեր քաղաքական դաւանանքներէ, ու մարդկային ունայնամիտ յաւակութիւններէ, շինարար հայրենասիրութիւն մը որ ըլլայ համակ սէր և անկաշառ նուիրում իր ժողովուրդի և հայրենիքի արժէքներուն: Հայրենասիրութիւնը Սրբիմեանի մէջ օժուէ է իմաստութեամբ, որով ան չի գտնար վտանգաւոր, հոգմերու ալետատան քմայքին բացուած առագաստ մը, և որով կարելի ըլլար մեր ազգային կեանքի քասը բերել կարգի ու ներդաշնակութեան ի հաշիւ ազգին մեծ բարիին: Հայրենասիրութիւնը Սրբիմեանի մէջ օժուէ է յայնմաստութեամբ, որով վեր կը բերուն, կը բացայայտուն ժողովուրդի մը արժէքները: Որոնց հրապոյրին մէջ ոչ միայն պիտի խաղաղին քանզոյ բնազդները մարդկային հոգին, այլ ազգին բոլոր տարրերը, հոգեկան շլացքի մը մէջ պիտի մագնիսաւորուն ի սպաս այդ արժէքներու վերածաղկումին, և ազգային գերագոյն միութեան մը ի հաշիւ: Տակաւին հայրենասիրութիւն մը որ խաբստուած է հաւատքի, համոզումի հիմին վրայ: Այսպիսի գաղափարական ձգտութեան մէջ շատ անհրաժեշտ է հաւատքը, որ տեսակ մը հաւատարիք է, վստահութիւն է, որով մարդ իր ուղիին մէջ չի դալթիր, զանազան տաղնապներու ի տես: Գաղափարական մարդու համար, աստուածային առաջնորդութիւն, ներշնչում է հաւատքը, որ պիտի ոգեկրնէ հաւատաւորը, կեանքի փշուտին մէջէն անգաղբում յարատեութեամբ քալելու դէպի յաղթանակներ:

Ահա Սրբիմեանի հայրենասիրութիւնը, բարեխառնուած իմաստութեան, յայտնատեսութեան և հաւատքի մեծ առաքինութիւններով: Այսպիսի հայրենասիրութեամբ մը և խոստովանողի մը հաստատակամութեամբ գինուած, ան յառաջացաւ յափըշ-

տակուած իր ժողովուրդի փայլուն ապագային, Մեծ բարիին տեսուկանովը:

Գ. — Քաղաքական գործունէութեան մարդը Սրբիմեանի մէջ. — Գաւառի ծնունդ և սնունդ, գաւառի ու գաւառացիին սէրը պաշտամունքի խորութիւն ունի իր մէջ, գաւառի տաղնապները, հարստահարութիւններն ու ջարդերը բոցավառ կրակ է ամէն ժամ զինք այրող ու ասնջող: Ու գաւառացին, իր բոլոր տաղնապներուն, իր մէջ, միշտ ալ տեսաւ նախախնամող ձեռք մը: Ու ամէն աղէտէ կտր դո՛ւնէ դուռ մինչև հեռաւոր կազկաս օփ պիտի տանէր կազմակերպելու համար հանգանակութիւններ, օգնութեանց ձեռնարկներ և այլն:

1869ին իր քաղաքական գործունէութիւնը պիտի աւնէ աւելի կազմակերպիչ կերպարանք, անով որ ազգը զինք կ'ընտրէ յԱթոս պատրիարքութեան կ. Պոլսոյ. ու գաւառը իր լուսաւորութեամբ ու զուլումներով մանաւանդ, որ մինչև այն ատեն տեղ չունէր պոլսեցիներու քաղքենի թիվն ապրումներուն մէջ, պիտի դառնայ ազգային շրջանակներու հրատապ հարցը: Ու Բազմաթիւ Բաշքիներ պիտի տեղան առ Բարձրագոյն Դուռն ամօքելու համար գաւառի տաղնապը: Նոյնիսկ իր կարճատե պատրիարքութեան շրջանէն յետոյ Սրբիմեան և զաւարթուն և անկաշառ պահակը գաւառի հայութեան և անոր ցաւին նկատմամբ անտարրեր խիղճերը խաբանող հրաշէկ խաբանը, ջանաց ու նիւթեց մինչև որ Պոլսոյ պատրիարքարանին միջոցաւ Հայկ. Հարցը նիւթ գարձաւ միջազգային հետաքրքրութեանց:

1878ին զինք կը գտնենք Լոնտոն և ապա Պերլին, որպէս ազգային պատուրակ Պերլինի վեհաժողովին: Եթէ կայ ձախողանք մը այս պատուիրակութեան պարագային, ասիկա Սրբիմեանէն աւելի ձախողանքն է մեր ժողովուրդին, քանի որ Սրբիմեան մեր ժողովուրդի քաղաքական հասկացողութեան և ընկերային ըմբռնումներուն ծնունդն է պարզապէս: Պերլինէն վերադարձին Սրբիմեան եղաւ Թուրք կառավարութեան աչքին փուշը, մինչև որ կարելի եղաւ իրն աքսորական քշել հայ շրջանակէն հեռու դէպի երուսաղէմ (1890):

Սակայն հայ ժողովուրդը մոռացու-

թեան մէջ չի լքեց իր Հայրիկը, և հազիւ երկու տարիներու օքտօրի շրջանը բոլորած զինք կ'ընտրէ կաթողիկոս Ամենայն Հայոց (1892), այն ակնկալութեամբ որ Ռուսիոյ հովանիին տակ ու կաթողիկոսական գահին շուքով Հայրիկ պիտի կարենայ աւելի ձեռնուտու միջոցներ ստեղծել Հայ դատի լուծման համար:

Ճիշդ չեղան սակայն հաշիւները, վասն զի անպատասխի տաղանապաներ Ռուս կառավարութեան կողմէ անպակաս եղան իր կաթողիկոսութեան ամբողջ շրջանին, և Հայրիկի կորովը սպառեցաւ այդ տաղանապանութեան լուծման ի խնդիր: Կոտորելու համար Հայ Հոգիին ինքնագիտակցութեան հզօր թափը Ռուս կառավարութիւնը փակեց ուստայ դպրոցները, գրաւեց Հայ եկեղեցւոյ կալուածները, և յետոյ սարքեց Հայ-Թաթարական ընդհարումները: Հայրիկ հզօր թափով գլխաւորեց ինքնապաշտպանութեան գործը, ներշնչուեցաւ ու ներշնչեց, կոտեցաւ անձկագիրնս, մինչև որ յաջողեցաւ այս տաղանապանը վանել Հայաշխարհէն, մեզի նպատատւոր պայմաններով:

Դ. — Յեղափոխականը. — Իր ժողովուրդին տառապանքը եղաւ սակայն երկունքի տաղանապ մը իր մէջ ստեղծելու համար ուրիշ մէկ երեսը իր անձնաւորութեան որ եղաւ Խրիմեան յեղափոխականը. (ոչ այսօրուան իմաստով սակայն, — տաղանապ սփիւռքահայ գաղութին):

Յեղափոխականը Խրիմեանի մէջ. հանդէպ ջարդերու, զուլումներու անօրինակ հրդեհին պոթկացող արդարութեան կոչն է:

Սովին, հայրենիքին գատարկացումին դէմ պատուար կանգնող անընկճելի թումբն է Խրիմեան յեղափոխականը:

Իր ինքնապաշտպանութեան տարրական բնագիւ խկ կորսնցուցած, անտէր ոչխարներու պէս մորթատուող հայութեան զանգուածներուն, արթնութեան և կուռի շեփորն է Խրիմեան յեղափոխականը:

Ներքին եղբայրացաւ մատնութիւններու, զիրար հակասող ազգաբանոց մոլեռանդ խմբաւորումներու ձաղկիչ, հզօր ձայնն է Խրիմեան յեղափոխականը:

Աւ վերջապէս այս բոլոր դժբախտութիւնները պայմանաւորող տգիտութեան խաւարին դէմ շողարձակուող լոյսի և զրուտութեան ջահն է Խրիմեան յեղափոխականը:

Նը, Վասնզի Հայրիկ ժողովուրդներու կեանքին յեղաշրջման գործին մէջ շատ մեծ կը նկատէր դաստիարակութեան գերը:

Ե. — Կրթական գործիչն ու ուսուցիչը. — Ահա թէ ինչու շատ վաղ տարիքէն այս մեծ առաքեալին կեանքը կը բացուի կրթական գործիչի եւ ուսուցչի վսեմ ասպարէզով:

Ուսուցիչ գաւառի, ուսուցիչ մայրաքաղաքի, ուսուցիչ Տարօնոյ և Վարազի Ժառանգաւորաց վարժարաններուն: Աւ գեղինուած եկեղեցւոյ ու հայրենիքի վսեմ գաղափարականներով՝ ան տունէ տուն, վարժարանէ վարժարան, սիրտէ սիրտ, հարաւորներու պիտի փոխանցէ եկեղեցւոյ և հայրենիքի սիրոյն սրբազան կրակը: Կ'ըսեն թէ գաւառացի ուսուցչին ամպիոնը անգիմադրելի հրապոյրն ունէր, երբ ան կը խօսէր այդ սրբութիւններէն:

Իր կրթական ճիգերուն ամենէն աչքառու արտայայտութիւնները եղան Վարազի և Տարօնի Ս. Կարապետի Ժառանգաւորաց վարժարանները և Վանայ մէջ աղջկանց Սանդիստեան վարժարանը: Իր առաջնորդութեան օրով վանքը ապրեցաւ դպրոցներու, մամուլի և կրթական ընկերութիւններու ծաղկեալ շրջանը: Այս բուրբ թրքական կայսրութեան տուեալ յետամնաց պայմաններուն մէջ, լուսաւորութեան աչքառու նուաճումներ են:

Զ. — Սահմանադրական ժողովրդավար սկզբունքներու մարդը. — Խրիմեանի անձին յատուկ մեր թուած բոլոր առաքինութիւններն ու յատկութիւնները՝ այնպիսիներ են որոնց բոլորին սլացքը և ուժգնութիւնը մէկ ազգակէ ծնունդ կ'առնէ. սէրը իր ժողովուրդին, պաշտամունքի հասնող սէր մը, որ իր մէջ կերտեց ամէն բանէ անդին նաեւ ժողովրդավար սկզբունքներով Սահմանադրասէր մարդը: Ան եղաւ Զարթօնքի սերունդին հեա Ազգ. Սահմանադրութեան կազմակերպիչներէն մէկը, յետոյ նաեւ Վանայ գաւառի հայութեան սահմանադրական սկզբունքներով վարչութեան հիմնադիրը: Իր կաթողիկոսութեան օրերուն իր մտասեռուսներէն մին եղաւ Սահմանադրական կարգերու հաստատումը Ռուսահայ թեմերէ և Հայց. եկեղեցւոյ կեդրոն Ս. Էջմիածնէն:

ներս: Եւ սակայն Խրիմեան, անկեղծ զգացումներով ուղիղ մարդը, երբեք չի կրցաւ հաշտուիլ բոլոր այն անուղղայ, այսպէս կոչուած հապիտ Սահմանադրականներուն հետ, որոնք ոգիէն աւելի կառչած տասին, այլեւայլ հակումներով Սահմանադրութիւնը դարձուցին իրենց կիրքերուն և անուղիղ հակումներուն շահաստան:

* * *

Անա Խրիմեան իր կարգ մը մեծ գիծերուն մէջ իրրե գերազանց առաջնորդ մը, ու հայր մը իր ժողովուրդին, որուն համար իսկ իր կենդանութեան և յետ մահու կոչուեցաւ արտոյտով մը Հայոց Հայրիկ: Այս իսկ բաւական է իրրե փաստը իր մեծութեան և արժանիքին, վասնզի ժողովուրդը ժլատ է յաճախ իր արժեքորումներուն մէջ, ու գիտէ շուտով զգեանել իր պաշտածները, եթէ անոնք պայմանաւոր չեն անխորտակելի արժանիքի մը գինով: Այդ կոչումը գինն է հօտապեալն ժողովուրդին, և փոխադարձաբար ժողովուրդէն հովուապետին, բացառիկ սիրոյն և նուիրումին: Հայոց Հայրիկ՝ գնահատանքի հօրաբազոյն արտայայտութիւնը ժողովուրդին, ու այդ երկու բառերուն մէջ մեր ժողովուրդը խտացուց իր պատմութեան հզօրագոյն պարունակներէն մին — Խրիմեան Կարօղիկոսի մեծ անձն ու գործը —:

ԿԻՒՐԵՂ ՎՐԴ. ԳԱՅԻԿԵԱՆ



ԳՐԱԳԷՏՐ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ — ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆԻ ՄԷՋ^(*)

Ժողովուրդին ծոցէն ծնած և ժողովուրդին համար զոհուած և ուրեմն ժողովրդական զէմքեր կան որոնց անունը և յիշատակը անմոռանալի է զիրենք երկնող ազգին մէջ. անոնք իրենց զոհողութեան շափովը ժողովրդական հերոսներ են:

Կան նաև կեղծ հերոսներ որոնք չես գիտեր ինչպէս իրենց անունին շուրջ առասպելներ հիւսել կուտան և վաղորդայն օր երկրորդ կը ժողովրդականանան: Ժամանակը սակայն կեղծ ու պատիր փառքերը կը հարթէ. ծիրանիներն ու քղամիդները կ'իյնան, ինչպէս ժամանակի ընթացքին զիպուածով կամ այլապէս պիտի փշրուէր կաւէ արձան մը:

Մ. Խրիմեան — Հայոց Հայրիկը — ապահովաբար առաջին խումբին պատկանողներէն է որուն զործուենայ կեանքը և արդիւնքը աւելի Հայոց Ազգային պատմութեան մէջ կարեւոր է դասել և որուն գրական արդասիքը, պատուաւոր վաստակ մը՝ Հայոց Գրականութեան պատմութեան մէջ:

Մօտաւորապէս հարիւր տարիներ առաջ երբ արեւմտահայ ժողովուրդը երիտասարդ սերունդի մը ջանքերովը կը զարթնուր իր թմբիրէն և կը խլրտար վասն ազնիւ գրպութեան, բնականաբար ե՛ւ մեր ժողովուրդը ե՛ւ մեր գրողները չունէին գրական հասկացողութիւն, ճաշակ, լեզու, ճկունութիւն և մտամբ նորին, այնքան որքան ըսենք 70 տարիներ ետքը, գրական ա՛յն

(*) Սոյն յօդուածը նախ խօսուած է Շարաթ, 14 Գեկտեմբերին, Երուսաղէմի Ժառ. վարժարանի սրահին մէջ, Մ. Խրիմեանի մահուան 50-ամեայ յիշատակի երեկոյթին:

Այս առիթով հետեւեալ գիրքերը աչքի առջև ունեցած եմ և օգտուած եմ անոնցմէ: —

1. — Թորգոմ Եպս. Գուշակեան, Խրիմեան Հայրիկ, Տպ. 1925, Փարիզ:
2. — Յ. Օշական, Համապատկեր, Գ. Հատար, Մ. Խրիմեան, էջ 193-309:

խուճրին ներկայացուցիչներուն նման որոնք կը կոչուին Գեղապաշտ Սերունդ: Հետեւաբար՝ անհրաժեշտ է մեր գործներն ու անոնց գործերը դատել և արժևորել զուգընթացաբար նկատի առնելով ժամանակն ու պայմանները: Այսօր շատ աւելի ի գրականն անհանդուրժող ենք քան 100 տարի առաջ:

ԺԹ. դարու կիսուն, Մ. Խրիմեան մեծահամբաւ գրող մըն էր ու ազգային գործիչ: 19րդ դարը լիցնող անուններէն թիւրես Ղ. Ղ. Ալիշանն է միայն որ կը մտանայ Խրիմեանի ժողովրդականութեան, միշտ ի գրականն անշուշտ (*). վասնզի Խրիմեան՝ իր անձին համարով ու գործին գրաւչութեամբ, գոհողութեան ոգիով գտեր էր իր ժողովուրդի հոգիին ճամբան: Այսպէս է որ ըմբռնելի կը դառնան այն բազմաթիւ երգերն ու ոտանաւորները որոնք գրուեցան ու երգուեցան իր անունին շուրջ մեծին ու պղտիկին կողմէ հաւասարապէս:

Ժողովուրդը երբեմն ժլատ է պարզեւատրելու իր մեծ գաւակները. բայց հանրային կարծիքը քիչ անգամ կը վրիպի թիւրն ու ճշմարիտը զանազանելու խնդրին մէջ: Եւ որովհետեւ ժամանակը մարդոց գործերը կը ստուերտէ, գեղարուեստական ստեղծագործութիւններուն մէջ բացատրիչներն ու — եթէ կ'ուզէք —, հանճարալիններն են որոնք կը զիմանան ժամանակին աւերիչ ու ժին ու դարերու մշուշներուն մէջէն կը պահեն իրենց պայծառութիւնը: Օրինակ, Հոմերոսի Իլիականը, Պղատոնի ուսուցումները, Միլիթոնի Գրախս Կորուսեալը, Շէլլքորի որեւէ մէկ գործը, և մեր մէջ, Շնորհալին ու Նարեկացին: Արդ՝ Մ. Խրիմեանի գիրքերուն գրուելէն մօտաւորապէս զար մը յետոյ, անոր գրութիւններուն հանդուրժելի ըլլալը, կարգացուիլը ու մեզ շահագրգռելը արդէն իսկ բաւարար գրաւական մըն է մահուան յիսնամեայ այսպիսի տօնակատարութեան և յիշատակի երեկոյթի մը համար: Յետոյ տակաւին, 20 տարի առաջ Ամերիկայի մէջ անոր ամբողջական գործին հրատարակուիլը ուրիշ ապացոյց՝ Խրիմեանի մեր ազգին մէջ վայելած ժողովրդականութեան:

Սակայն, անմիջապէս հարկ է աւելցնել

նաև որ Խրիմեան իր շրջանին, գրականութեան մէջ շահեկան ըլլալէ աւելի ազգային խնդիրներու, դպրոցասիրութեան և լուսաւորումի ինչպէս նաև ազգային քաղաքականութեան խորհրդանշան մըն էր:

Իր գործունէութիւնը բազում մարդերու վրայ տարածուող, այսօր երեան կը բերէ իր վաստակը պրիսմակի մը ետեէն, գոյներու բազմազանութեամբ մը. անաւսիկ թէ ուրիշ, ինչո՞ւ և ի՞նչպէս իր կեանքն ու գործը ծնունդ տուած է մէկէ աւելի մեծագրութիւններու, ինչպէս Թորգոմ Եպո. Գուշակեանինը, Աւետիս Թէրզիպաշեանինը, կամ Հայկ Աճէմեանինը, բազմաթիւ ուրիշ վերագնահատման փորձերու քովը ի վեր:

Բազմազանապէս ու մեր ժողովուրդին մէջ խոշոր համբաւ վայելող մէկը ուրեմն՝ որուն գրական արդիւնքը քննելու տանն անպայման նկատի պէտք է առնել նաև անոր տաղանդին միւս երեսներն ալ, վասնզի մեր պատմութեան վերջընթեր յիսնամեակին քաղաքական և ուրիշ բոլոր բախտորոշ հանգրուաններուն վրայ հանդիպելի տիպար մըն է իր ամբողջական փառքով:

* * *

Մ. Խրիմեան մեր գրականութեան մէջ կը պատկանի այն խուճրին, որուն սովորաբար Զարթօնքի սերունդ անունը կու տանք: Այս սերունդի գլխաւոր ներկայացուցիչները անոնք են մանաւանդ որոնց ծնողներն ու մեծ հայրերը հաստատուած էին Պոլիս կամ Թիֆլիս, ու տնտեսական բարեպատեհ միջավայրէն օգտուելով, կարող եղած էին իրենց գաւակները զրկել Եւրոպայ, բարձրագոյն կրթութեամբ դաստիարակուելու: Իրենց վերադարձէն ետք, անոնք շոգեպինդ կերպով ու զոհաբերութեամբ նուիրուեցան Ազգային Զարթօնքին: Որովհետեւ մեր ժողովուրդը գաւառներուն մէջ, քաղաքական դժնդակ պայմաններու բերումով յետանկեալ տարր մը եղած էր, աղճատ ու բարբառային խառնուրդ լեզուով մը: Ուրեմն, անոնք դպրոցներու ցանց հաստատեցին, թերթ հրատարակեցին, ճառեր ու կրօնաբարոյական գրքեր հրատարակեցին: Ասոնք կը մեան գրականութեան պատմութեան լուսանցքին մէջ, վասնզի գրականութիւն մը կարելի ընող հոգը, գետինը

(*) Յ. Օշական, Համապատկեր, Դ. Հատոր, էջ 194:

պատրաստեցին. և ինչպէս քիչ վերը յիշեցի, գրական ըմբռնումը այն չէր անոնց մտքերուն մէջ, ինչ որ է հիմա ատիկա: Թրիմեան այս սերունդին ամենէն երախտառատ ներկայացուցին է, անոնց բարձրագոյն ուսումնարաններ յաճախած ըլլալու առաւելութիւնը ունենալու իր վրան: Ծատե՛ր կան որոնք վկայականներ՝ որպէս զարդ ու բարենիշ կը կրեն իրենց անձերը զարդարելու: Թրիմեան իր ժողովուրդի զաւակներուն օգտակար ըլլալու ետանդով հրդեհուած՝ ցեղին առհաւական ու թաքուն ուժերը, արժանիքները կը վերբերէր: Իր պատկառազգու անձը լծակ մըն էր շարժելու համար ի քուն եղող կարելիութիւններ: Ժողովրդական հերոսները, իրենց ցեղին ու իրենց ժամանակին ոգին անձնաւորեալ արտայայտութիւնն են:

Ամէնքս ալ գիտենք որ արուեստի ճշմարիտ գործերը կ'անդրանցնին մարդերը, ժամանակէն դուրս կը նային, որովհետեւ մարդերը որքան ալ որ իրենց ժամանակին ոգին ըլլան, իրենց պատկանած ժողովուրդին արժանիքները անձնացնեն իրենց մէջ, ենթակայ են ժամանակի ընթացքին ազաւազման և ազօտացման:

*

Արուեստը աշխարհը տեսնելու, կեանքը զգալու և ներդօր կերպով ապրելու և այդ ապրումը արտաքնացնելու իւրայատուկ ձև մըն է: Այս տեսանկիւնէն դիտուած, Թրիմեան գլխաւորաբար կը ջնկուի Զարթօն քի սերունդ կոչուած խումբէն, ըլլալու համար բոլորովին իւրատեսակ գրող մը, տրուած ըլլալով որ գրողները որոնց խումբին կը պատկանէր ինք, վիպապաշտ ուղղութիւն ունէին իբրև Սքոլասթիք ըմբռնում: Ամբողջ իր կարողութիւններն ու ուժերը լարած էր ազգային արժանապատուութիւնը ոտքի կեցնելու ու ինչպէս անհատներու, անանկ ալ ժողովուրդներու առաքինութեանց սկիզբը, արժանապատուութեան գիտակցութեան կը յատաճագայի: Հայոց աշխարհին ու հողին պաշտամունքը և փառաբանութիւնը ընող, մեր ժողովուրդին դարերու սերպը եղող ազատագրութեան տենչը իր անձին հետ պտըտցնող, տեսակ մը առաքեալ է Թրիմեան, շրջուն հոգի ուր քիչ մը ամենուրեք իր սրտին

հուրը կը շողարձակէ բեմերէն, դասարաններէն, մեծահարուստներու տուներէն, և վերջապէս իր գիրքերու էջերէն:

Մասնաւորելով մեր խօսքը Հայրենիքի զաղափարին և ազգային հարցերու շուրջ, կրնանք ըսել թէ Պոլսոյ մէջ մեր գրողները յընդհանուրն, իրենց փափկաճաշակ բառերով, գրական աշխատանքներու համար ընտրած բեմաներովը հեռու էին լրջութենէ: Բանաստեղծական ըմբռնումը, մէկ քանի բացառութիւններով, տաղաչափական հասկացողութենէ անդին չէր անցնէր: Իսկ Վենետիկի Միաբանները, տեսարան-քննադատներու համաձայն, պատմական հայրենասիրութեան ջատագոյններն էին, որոնց բառերու շքեղ հաւաքածոյին մէջ կարծես նուազած ըլլար կեանքը, գեղեցիկ գեղօրներու նման որոնց մէջ չի բարասեր սիրտը:

Իբրև հոգեբանական և կենսոբանական էակ, կը գործենք և գոյութիւն ունինք ամենէն աւելի այն տուրքերով որոնք ժառանգական են և դաստիարակութեամբ ձեռք բերուած. կազմութեան շրջանն ու վայրը, է՛ն կարեւոր ազդակներն են հետագայ կեանքին: Մ. Թրիմեան կազմուած է մեր հայրենիքին . . . սրտին մէջ: Կ'ըսեն թէ Այրարատի նահանգը գարեւր շարունակ Հայոց աշխարհին գանկը հանդիսացած է. իսկ Վասպուրականի նահանգը, ուր ծնաւ Թրիմեան, Հայոց աշխարհին սիրտը(*):

Աւրեմ Մ. Թրիմեան իր գրականութեան տարրերը կ'առնէ մէկ կողմէ Հայոց աշխարհէն, միւս կողմէ Ս. Գրքէն՝ սրուն հարուստ ենթահողը հոգեկան և իմացական ամենէն վեհ և բարձր սլացքներ ընելու ատակ կը գարծնէ օսէ մէկը: Մինչդեռ՝ օրինակ Հ. Ղ. Ալիշան, Վենետիկի մէջ տաղաչափութեամբ երբ Հայրենիք կ'երգէ, կը հեռզգայ զայն ու երևակայութեան թընթիք տալով, պատմական ու վիպապաշտ հայրենասիրութեան քիփիփ օրինակը տուած կ'ըլլայ, ինչ որ մեզ մեծ չափով մը անհաղորդ կ'ընէ իր քերթողութեան:

Պոլսոյ մէջ իր հոգեկան և նիւթական կարիքներուն գոհացում տուող ասպարէզը ուսուցչութիւնն է. հայրերէնի և ազգային պատմութեան դասեր կ'աւանդէ զպրոցնե-

(*) Յ. Օլական, Համապակեր, Գ. Հատոր, էջ 204:

րու մէջ և մեծահարուստներու զուականներուն, իրրև Հայաստանցի «սրտախօսիկ» վարժապետ: Սիրելի, մտերիմ, ազգու մէկը պէտք է եղած ըլլայ, որ իր երկտասարդ հոգիին հրայրքովը կը խանդավառէ ու կը խանդավառուի, թմրածներ բորբոքելու կրօնքի ու հայրենիքի ճամբով: Հայրենիքէն կուգայ ան ու ճշմարիտ վկայութիւններ կը բերէ հոնկէ, անոր հողէն ու քարէն, երկնքէն ու ջուրէն և մարդերէն, բանաստեղծ զգայնութեամբ մը հագներգելով հայրենիքի սէրը, հզօր, յուզիչ ու սրտագրաւ կերպով: Ահաւասիկ թէ ինչու և ինչպէս կը հրատարակուին Հրաւիրակ Այրաւսեան երգերը:

Խրիմեան լուսաւորութեան տեղաւոր հոգի մը՝ գաւառին մէջ պաշտօնավարութիւններուն ընթացքին հրատարակեց իր միջոցներով Արձուիկ Տարօնոյ եւ Արձուի վասպուրականի: Այս գործանէնութիւնը իր անունին հետ զուգորդ մեծագոյն բարենիշը կ'ապահովէ իրեն: Հայոց Աշխարհի լեռներուն վրայ կ'աթիւնապէրկի մեքենան առաջին անգամ հրաշքի պէս բան մըն էր իր միջոցներով միայն կարելի դարձած:

Բազմաշնորհ այս գրագէտին գործը ներկայացուած ատեն երևան կուգան անոր տաղանդին զանազան կողմերը և այն կարևոր հանգրուանները որոնք անոր կեանքը կերպարանեցին: Տիկնամիք և վերին աստիճանի աշխատասէր մարդ մըն է Խրիմեան որ տրուած ժամանակաշրջանի մը մէջ կարևոր ու օգտակար գործ մը կ'ընէ անպայման: Իր կեանքին թուականներուն հետեւելէ աւելի թուենք այն երեսները, կամ արդի բառով մը այն բնագաւառները որոնց առաւել կամ նուազ շահեկանութեամբ տէրը եղաւ ինք իր կեանքի ընթացքին:

Նախ վարդապետ (մեր լեզուին մէջ վարդապետ կը նշանակէ ուսուցանող) որ միշտ ուսուցանեց հակառակ իր համալսարանական մը չըլլալուն:

- Եկեղեցականը
- Քարոզիչը
- Ազգային գործիչը
- Գրագէտ-բանաստեղծը և հուսկ ապա Հայոց Հայրիկը:

Բայց ամբողջական բացատրութեան մը համար, և գրագէտը իր ժամանակին մէջ

տեղաւորելու և արժեքորելու համար անհրաժեշտ է մատնացոյց ընել իր հոգին տալնապեցնող հարցերը:

Ազգային պատմութեան խոսովակոծ մէկ շրջանին, ներքոյիշեալ զարմեան ցանկը արդարև արժանի կը կացուցանէ զինքը բազմելու պատուական տեղ մը Հայոց գրականութեան պատմութեան մէջ:

- Հրաւիրակ Այրաւսեան, 1851 Կ. Պոլիս
- Հրաւիրակ երկրին Աւետեաց, 1851
- Մարգարիտ Արալայրեան երկնից, 1867
- Խաչի ձառ, 1876 Պոլիս
- Ժամանակ եւ Խորհուրդ իւր, 1876 Պոլիս
- Վանգոյժ, 1877 Պոլիս
- Հայգոյժ, 1877 Պոլիս
- Գրալիսի Բնական, 1878 Պոլիս
- Սիրաք եւ Սամուէլ, 1879 Պոլիս
- Պապիկ եւ Թողնիկ, 1894 Էջմիածին
- Թագաւորաց ժողով, 1900 »
- Ողբացող Խորհեացիք, 1902:

Այս հատորները գրուած են մէջ ընդ մէջ իր կրօնական պարտականութեանց օտընթեր: Եթէ ընդարձակ այս ցանկը ուզեն սեսակաւորել, անոր մէջէն պիտի գտնենք.

- ա) Քրիստոնէութեան ջատագովը.
- բ) Բարոյախօսը.
- գ) Բանաստեղծը.
- դ) Գիւղագիրը.
- ե) Հայրենախօսը. և
- զ) Հրագրարկագիրը կամ խմբագիրը:

Խրիմեանի բանաստեղծական վաստակին մեծ մէկ մասը տուրքն է իր ժամանակի հասկացողութեան: Պարագայական և հանդիսական առիթներու գրուած ստանաւորներ որոնք չեն շահագրգռեր մեզ: Աւշագրաւ պարագայ մըն է իր մօտ պատմողական բանաստեղծութիւնը որ գրական մասնաւոր սեռ մըն է. անգլիացիներուն Narrative Poetry ըստը: Օրինակ Հրաւիրակ Արաւսեանը որ չորս նուագներէ կը բաղկանայ: Տարաշխարհիկ հայ ժողովուրդը կը հրաւիրէ դէպի Արարատեան դաշտը, ներշնչուելու համար պատմական և նուիրական վայրերէ: Հայկական տաղաչափական արուեստով ընդարձակ նկարագրութիւններ ունի էջմիածնի, Անիի, Աւարայրի, և Վանի մասին: (Տեղի չգոյնութեան

պատճառաւ անհնար կ'ըլլայ մեզի մէջըրու մեք ընել այստեղ):

Վանկոյժը գրուած է 1876ի Վանի մեծ հրդեհին առիթով, երբ Վանի շուկան հրոյ ճարակ դառնալով կը սնանկացնէր հայերը: Խրիմեան գրած է այս գիրքը իբրև «կոյժ մի ջուր, իմ՝ այրած հայրենեաց վերայ սրտկելու»:

Հայկոյժը ճշմարիտ պատկերն է քաղաքական մտայլ իրադարձութիւններուն: Ամբողջ ժողովուրդի մը խզմտանքին և հաւատարմութեան վրդովումն է և անոր արձագանգը երբ կը գրէ «Աղբամ գքեզ Հայոց Աշխարհ...»: Հայկոյժը երկարապատում ողբ մըն է հայրենիքի տառապանքը, վիշտը լացող: Ահաւասիկ երկու տող — «Ով լուսին, լուսին, Հայոց Աշխարհէն կու գաս, այնպէս կը թուի որ գիշերաժամուն, շառաւիղներդ արիւնոտ գիակներու վրայ գարնելով՝ երեսդ շառագուներ է. Վասպուրական Աշխարհի Աղբակու գաւառէն անցա՞ր, Մասիսի գագաթէն անցա՞ր, էջմիածնի պարսպին տակ թափած Հայոց գողթական ժողովուրդ տեսա՞ր»:

Դեմիսի Անտանիք, ինչպէս նաև Սիրախ Եւ Սամուէլը բարոյախօսական հատորներ են: Առաջինը կը պարունակէ 18 ճառեր, տիպար ընտանիքի մը կազմութեան մանրամասնութիւններով: Աւետարանական մէջբերումներով և յառաջացեալ տարիքի բերումով աւելի փորձառու գրելով, Խրիմեան այս գրքերուն մէջ, գաղափարի և արտայայտութեան տեսակէտէն աւելի հետաքրքրական և շահեկան կը դառնայ սակայն դուա իր գրական երկերուն վրայ նոր պատուհան մը կը բանայ ուրիշ կալուածի մը վրայ որ բարոյախօսութիւնն է:

Խաչի ձառը գրքոյն մըն է քրիստոնէական խորունկ հաւատքով ու ոգիով գրուած: Այս պատիկ ծաւալով գրքին մէջ հեղինակը մեծ ներշնչեալ մըն է: Կը բաժնուրի գլուխներու, Յիսուսի վերնատան մէջ վերջին ընթրիքէն մինչև Համբարձում բուր անցքերը ներկայացնող և խորհրգածութիւններով համեմուած: Տնօրինական շարթուան անցքերը արդէն, ինքն ըստ ինքեան քրիստոնէութեան մեծ խորհուրդը, տրամաթիք իրողութիւններով, մարդկութիւնը յուզող եղելութիւններէն մին է:

Իր գիրքերուն մէջէն սակայն ամենէն

աչքառուն և արժէքաւորը, գրական մնացուն շնորհներով օժտուած՝ Պապիկ Եւ Թոռնիկն է, որուն նիւթը գաւառի մը կեանքն է: Հոս, Խրիմեան իր թունիկին զիւղական տնտեսութեան դասեր կուտայ: Յայտնութեանկան շունչով ու մարգարէական ոգիով կը զգայ ու կը հաւատայ որ հայ ժողովուրդը պէտք չէ գաղթէ, այլ կառչած մնայ իր հողերուն վրայ և հոն տքնաջան աշխատի: Այս գրքին հայեցի շունչը, հովուերգական քաղցր մթնոլորտը, մարդկայնական սրտազրաւ իրականութիւնը, վսեմ բան մը ունի որ Խրիմեանի անունը կ'անմահացնէ մեր գրականութեան մէջ:

Վերջացնելէ առաջ, պէտք է ի փառս իր անուան, յիշատակել որ իմէ ետք, իր սկօսներուն վրայէն իրենց ընթացքը ընող սերունդ մըն ալ պատրաստեց որուն գլխաւոր ներկայացուցիչը եղաւ Գարեգին Եպս. Սրուանձտեանց, իր ազգագրական, հաւաքչական և բանասիրական գործերովը:

Աւրիմն՝ ընդհանուր ակնարկի մը մէջ առնուած, Մ. Խրիմեանի վաստակէն մաս մը ժամանակի ընթացքին տժգունած է. բայց կարեւոր մասը որ բազում զոհողութեամբ հրիտակեց մեր գրականութեան գանձարանին, կը մնայ թանկ և արժէքաւոր:

Հայ ժողովուրդը արդար տիազուններով կը ճանչնայ իր մեծ գաւառները: Վարդանին ըսած է քաջ. Սահակ Հայրապետին՝ սուրբ. Ներսէսին՝ ճնորհալի, իսկ Մ. Խրիմեանին՝ Հայոց Հայրիկ. ու ան իրեն տրուած այս անունը լիովին կ'արդարացնէ:

ԶԱԻԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ



Խրիմեան Հայրիկի Անտիպ մէկ Նամակը^(*)



ԿԱՌՈՒՂԻԿՈՍ

ԱՄԷՆ.ՍՅՆ. ՆՍՏՈՑ

Անտիպ մի. վերաբերեալ ինչ կարգադրում
կա Պատրիարք տանը Սեբեասի.

Տեսնուցանելով ինձ ինչպիսի
էր այժմ վերաբերեալ ի կարգադրումը Սեբեասի.
մի կարգ վե՛ր պարտէ. Սեբեասի ի.
ՅՈՒ ԿՐԻՍՏՈՍ. պարտաւոր թէ անկողն
կենցաղի Գործակալ իր ինչպիսի
վերաբերումը ինձ ինչպիսի
Սեբեասի ինչպիսի պարտաւոր ինձ
պարտաւոր ինչպիսի ինչպիսի
Սեբեասի ինչպիսի ինչպիսի
էր այժմ վերաբերեալ ինչպիսի
Սեբեասի. ինչպիսի ինչպիսի
Սեբեասի. ինչպիսի ինչպիսի
Սեբեասի. ինչպիսի ինչպիսի

Գերապատիւ Տ. Գէորգ Եպիս. Ո՛վ հրաժարեալ Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ,

ձառնադիրներու մէջ կարդացած եմ, եւ այժմ լինացի մի նշանաւոր վի-
պասան, մի նոր վէպ գրած է, Մակագրութիւնն է. Յո՞ երբաւ. պատմում է թէ

(*) Ս. Յակոբայ Գիւանասան բարձրագոյն մէջ ունին 6 կտոր նամակ-
ներ Խրիմեան Կարողիկոսէն, ուղղեալ Նուսադէմի Միաբան Գեորգ Եպս. Նեք-
եանի որ ընտրուած էր Կիլիկիոյ Կարողիկոս, եւ որ հրաժարած էր ընդունիլ այս
պատեօնը: Խրիմեան Հայրիկը հայաբար կը յորդորէ որ շխուսափի նման սրբազան
լուծի մը ներքեւ իր պարտաւորը դնել. սակայն ի զուր կ'անցնին իր յորդորները:

ԽՄԲ.

անգութ ներոնի ժամանակ երբ հաւատացեալ Քրիստոնեայններ անխնայ կոտորուում էին Մարտիրոս ժողովուրդն Պետրոսէն խնդրեցին որ ինքն պահ մի խոյս տայ Հռովմէն. մտադրութիւն ունեցաւ Պետրոս, բայց նոյն գիշեր երազ մի տեսաւ որպէս թէ Հռովմէ դուրս կ'ելնէր, Քրիստոս ելաւ իւր դէմ, հարցուց Պետրոս՝ Sker յո՞ երբաս, ասաց կ'երթամ ի Հռովմ, խաչուիլ ձեր տեղ :

Է՛ սիրեմ զքեզ, խոյս տուիր Կիլիկիայէն, Յիսուս քեզ չպատահեցա՞ւ եւ դու ի՞նչ պատասխան տուիր: Թոյլ արա ինձ, Տէր, ոչ կարեմ. առ քո խաչ ասացիր եւ դու խոյս տուիր:

Ստացեալ եմ վաղուց ձեր եւ պատրիարքին այն երկու փոխանակուած ընդարձակ նամակներ, որոց մէջ կային մեծամեծ կուտակեալ փաստեր, միայն Աւետարան չկար:

Ես Արքազան Պատրիարքին մի խորհրդաւոր նամակ գրեցի, յայտնեցի իմ իրաւացի սուր դիտողութիւն թէ ինչո՞ւ այնչափ աճապարեցիրք. վեց տարի տատանուած էր այդ խնդիր թող վեց ամիս եւս տատանէր, ինչո՞ւ այնքան համոզիչ առաքեալներով նեղեցիր զինք: Թոյլ չտուիր որ նա ժամանակ ունենար իւր խղճին հետ հաշտուելու: Տուիր վերջնական հրաժարականդ. եւ կարծում ես թէ հանգիստ ես եւ սիրտդ անխռով է, ոչ դու հանգիստ կարող չես լինել: Յոլովակի փաստերուդ մէջ դու մի բան յառաջ բերում ես, այն է դու կը ցանկաս եւ սիրելի (է) քեզ մնալ խոնարհ վիճակում իբրեւ Միաբան Ա. Երուսաղէմի, այսինքն խաչի երկրին՝ առանց խաչի եւ մնալ եպիսկոպոս Մայր Աթոռին քան լինել Կաթուղիկոս քանդուած Աթոռին: Յաւէտ եւս լաւագոյն չէ՞ր որ դու լինէիր Քրիստոսին եւ Քրիստոսով համակցորդ երկուցուն եւս: Քա՛ւ թէ ես այս մտածութեամբ համարիմ զքեզ Քրիստոսէն հեռացած. ոչ դու Քրիստոսին եւ Աւետարանին աշակերտութեամբ. Միայն նորա խաչէն խոյս տուիր. Պետրոսի նման չուզեցիր Թափօր լեռնէն վար իջնալ, Քաղաքային եւ աշխարհային մտածումներ զքեզ յոռետեսութեամբ վարեցին: Սրտմտեցար էնթրիկներուն համար եւ լուծ թօթափեցիր: Անցաւ քէնէ այդ բաժակ բայց դու մի կարծեր որ խաչի աշակերտին բաժակներ կը պակսին: Օ՛ն ուրեմն պատրաստեա դու քեզ երկրորդ բաժակին. թէ մեռանի ձերունի Հայրիկ, զրիս յիշատակաւ յիշէ դու զիս:

Աղօթակից ձեզ

Վշտակիր

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

1902 Մարտ 29



ԿՐԹՆԱԿԱՆ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

«Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»
(ՂՈՒԿ. Բ. 14):

Յիսուս Քրիստոսի ծնունդը տեղի ունեցաւ շատ աննշան պայմաններու ներքեւ, բայց քաղաքակրթութեան պատմութեան մէջ անոր ստեղծած յեղաշրջումը խիստ նշանակալից է: Կրօնից պատմութեան մէջ արձանագրուած չէ ծնունդ մը որ մարդկային ցեղին կրօնական փորձառութեան վրայ աւելցուցած ըլլար կազդուրիչ ու ազնուացուցիչ այն ազդեցութիւնը, ինչ որ ըրած է Բեթղեհէմի մտուրին մէջ տեղի ունեցած այս համեստ ծնունդը: Ծնունդ մը՝ որ մարդկային ցեղին կենցաղին նոր ուղղութիւն տուած և մարդկութեան ճակատակրթ բարեփոխած է հիմնովին:

Այս ուրախալի դէպքին առջև երկինք չէր կրնար լուսն ու մունջ մնալ, առանց յայտարարելու անոր աւետիսը մարդկութեան: Հրեշտակներ իրենց փառաբանութեան հմայիչ երգովը, «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» ըսելով բաժին առին այս խրատաճանութեան մէջ:

Երկու հազար տարիներէ ի վեր Քրիստոնէական Եկեղեցին կ'երգէ ծննդեան այս գեղեցիկ երգը, յիշեցնելու համար Բեթղեհէմի մէջ տեղի ունեցած անփոփոխանակ՝ բայց խորիմաստ ծնունդը և անոր մեղի տուած փրկարար պատգամը:

Ա. — Աստուծոյ սվառնք տալ՝ ծնունդի երգին առաջին պատգամն է: Պատճառներ շատ ունինք փառաբանութիւն մատուցանելու Աստուծոյ, քանզի Անոր շնորհաց ներքև կ'ապրինք ամէն վայրկեան: Ի՞նչ է շնորհը: Ծնոր՝ կ'ըսենք այն բոլոր բարիքներուն և օրհնութիւններուն՝ զորս կը վայելենք ձրիօրէն, առանց բան մը տալու անոնց փոխարէն: Աստուծոյ մարդկութեան ըրած երեք մեծ շնորհներէն առաջինն է՝ մեղի այս աշխարհի մէջ ապրելու պատեհութիւն տալը, երկրորդ՝ Իրեն հետ հօր և

որդի չհաղորդակցելու առանձնաշնորհումը, իսկ երրորդը՝ Իր միածին որդին՝ Յիսուս Քրիստոսը աշխարհ զրկելը: Վերջինը Իրեն շնորհներուն մեծագոյնն է:

Աստուած սէր է, և սէր ըլլալուն համար կը շնորհէ, և այսպէս Աստուծոյ մեծագոյն շնորհը պէտք է նկատուի մասնաւորաբար Իր Որդին մեղի տալը: Ուստի շատ ի դէպ է որ Ծնունդի սոյն հանդիսաւոր օրերուն փառք տանք Աստուծոյ, Իրեն այս անպատմելի պարգևին համար:

Փառաբանութեան զգացումը ինքնաբերաբար կ'արթննայ մեր մէջ երբ հանդիպինք այս տեսակ բարիքներու: Ապերախտներու զօրծն է միայն չզնահատել երախտիքը: Կրկերուն կ'ըսէ. «Երախտագիրտութիւնը ոչ միայն մեծագոյն առաքինութիւնն է, այլ նաև բոլոր առաքինութեանց մայրը»: Բարիք մը ճանչնալ, զոհողութիւն մը դնահատել, և կամ ծառայութեան մը արժէքը անաչառ ոգիով ճշգիւլ՝ աւելի բարձր մարդկակի մը վրայ ապրուած կեանքի արտայայտութեան նշան է: Աստուծոյ բարիքներուն հանդէպ ապերախտ ըլլալ՝ ապերախտ ըլլալ է նաև բարոյական մեայուն ու տիեզերական արժէքներու:

Ծնունդի երգը կը զգուշացնէ մեզ ապերախտութեան այս վարակիչ հիւանդութենէն, և միանգամայն կը ներշնչէ մեզի փառաբանութեան զգացումներ ունենալ միշտ Աստուծոյ անհուն շնորհներուն նկատմամբ:

Բ. — Ծնունդի երգը «Ի բարձունս Աստուծոյ» խօսքով կը մատնանչէ մեզի Աստուծոյ տիեզերքի մէջ ունեցած զիրքը: Ըստ այս բաներու իմաստին, Աստուած բարձունքներու վրայ կը բնակի, և կամ բարձունքներու վրայ բնակելու արժանի էակ մըն է: Եստիկին կրօնքներու մէջ մեհեաններ և Աստուծոյ նուիրուած սրբավայրեր ընդհանրապէս բարձունքներու վրայ կը հաստատուէին: Հին Ուրալի մէջ Արրտհամ իր զօնը մատուցանելու համար լիով մագլցեցեալ: Մովսէս Աստուծոյ աւելի մօտենալու և Անոր հետ մօտէն հաղորդակցելու նպատակաւ Սինա լեռան վրայ ելաւ: Սաղմոսերգուն աշօթելու ատեն իր հայեացքը դէպի լեռները կ'ուղղէր, «Համբարձի զաչս իմ ի լեռինս, ուստի եկեցէ

ինձ օգնութիւն» ըսելով: Նոր Ուխտի մէջ, Յիսուս երբեմն լերան վրայ կը քարոզէր, և յաճախ հոն ալ կ'աղօթէր: Այլակերպութեան օրը աղօթելու համար բարձր լերան վրէ վրայ ելած էր: Քահանան եկեղեցոյ մէջ պատարագը մատուցանելու համար բարձրութեան վրէ վրայ կ'ելլէ:

Ասոնք ցոյց կուտան թէ կրօնքներ բարձրութիւններու վրայ նկատած են Աստուծոյ բնակավայրը:

Մարդկային ցեղին կրօնական այս ըմբռնումին մէջ գեղեցիկ իմաստ մը կայ, այն է արեւելքի մէջ բարձրագոյն աթոռը Աստուծոյ յատկացնել: Աստուած թէև ամենուրեք է, արեւելքի մէջ չկայ վայր մը որ Քր ներկայութիւնը զգալի եղած չըլլայ: ոչ թէ Աստուած արեւելքի մէջ՝ այլ արեւելքը իր անհունութեամբը Աստուծոյ մէջ գոյ է, բայց և այնպէս եթէ նրա թական ըմբռնումով Անոր համար բնակութեան վայր մը ենթադրուի, ատիկա պէտք է որ ըլլայ բարձրութիւններու վրայ: Որովհետև Անոր կը վայելէ միմիայն փառք, պատիւ և երկրպագութիւն, և բարձրագոյն զիրք այս արեւելքին մէջ:

Արդարև Բարձրեանը Աստուած արժանի է այս մեծարանքին, անոր համար որ Ինքն է տէրը և արարիչը արեւելքին, ամէն ինչ Իրեն միջոցաւ գոյութեան եկած է: Եւ ոչ միայն Նա արարիչ է, այլ նաև կեանքի աղբիւրն է միաժամանակ: Իրմէ ծագում առած է կեանքը համայն բնութեան մէջ: Նայնպէս Ինքն է որ բովանդակ արեւելքը ներդաշնակ ու գեղեցիկ դրութեան մէջ կը պահէ: Ուստի իրաւամբ Իրեն պէտք է յատկացնել մեր սրտերուն ալ բարձրագոյն գահը, որ Ա: բազմի հոն, իրրև մեր կենաց առաջնորդը և փառաց թագաւորը:

Գ. — Ծնունդի սուրբ զիշերը, երկնային զօրքերը իրենց «և յերկիր խալսալուրբիւն» օրհներգովը աւետեցին մարդոց թէ Բեթղեհէմի մէջ պատահած այս ծնունդը տարբեր է հասարակ ծնունդներէ:

Բեթղեհէմի այս Մանուկը տակաւին չծնած, Անոր անունը արդէն կը կոչուէր «Իշխան խաղաղութեան»: Քանզի Անիկա հասարակ մէկը չէր, այլ հոգեւոր իշխան մը, լաւ և ս է ըսել փառաց թագաւոր մը,

և «թագաւոր թագաւորաց»: Այս արքայից արքային կամ հոգեւոր թագաւորին իշխանութիւնը հիմնուած էր խաղաղութեան վրայ: Անիկա ծնաւ խաղաղութեան աւետիտներով, մեծցաւ խաղաղութեան գիտակցութիւնը Իր սրտին մէջ կրելով, քարոզեց խաղաղութեան աւետարանը և Աւետարանին խաղաղութիւնը, ապրեցաւ խաղաղութեան կեանքը, և բաժնուցաւ այս աշխարհէն թողլով խաղաղութեան կտակը Իր աշակերտներուն, «Խաղաղութիւն զիմ տամ ձեզ» խօսքերը արտասանելով:

Շօ անուն հեղինակ մը կ'ըսէ. «Խաղաղութիւնը առաքինութեան ձգած փափուկ ու նուիրական շուքն է»: Ուրիշ հեղինակ մը՝ Կոլթըն կ'ըսէ. «Առաքինութիւնն ու խաղաղութիւնը անբաժան են իրարմէ, առաջինը հոգիին արևն է, իսկ երկրորդը անոր երեկոյեան աստղը»: Ըստ Բեզրաքի, «Մեր մէջ կը բնակին խաղաղութեան հինգ մեծ թշնամիներ — ազահութիւն, փառամոլութիւն, նախանձ, բարկութիւն և հպարտութիւն»: Եթէ ասոնք մեզմէ վտարուին, այն ատեն կը վայելենք մեայուն խաղաղութիւն: Էմբոսն կը յայտարարէ. «Ոչ մէկ բան քեզի խաղաղութիւն պիտի բերէ բացի քեզմէ»: Քորլըս կ'ըսէ. «Երանութիւն արուած է ոչ թէ յաղթանակ շահոյն, այլ խաղաղութիւն հաստատողին»: Իսկ Սրբազան Մատեանը կը պատգամէ. «Երանի խաղաղարարաց զի նոքա օրգիք Աստուծոյ կոչեսցին»:

Ի՞նչ օգուտ սակայն Յիսուս Քրիստոսի աշխարհ խաղաղութիւն բերելէն և կամ խաղաղութիւն կտակելէն, եթէ մենք զիրար կ'ատենք և չենք ապրիր այդ խաղաղութեան կեանքը: Ասոնք են միայն Աստուծոյ իրական օրգիները, որոնք թէ կ'ապրին և թէ՛ կը տարածեն այս խաղաղութիւնը մարդոց մէջ: Քրիստոս խաղաղութեան ակնադրուին է և Իր հիմնած քրիստոնէութիւնը խաղաղութեան կրօնք է: Աշխարհ այսօր ըման չի վայելիր այս խաղաղութիւնը, քանզի ասանց Քրիստոսի կ'ապրի: Երբոր մարդիկ Քրիստոսի աշխարհ բերած պատգամներուն հետեին և Անոր փրկարար սկզբունքներուն համեմատ ապրին՝ կը տիրանան այս խաղաղութեան իրենց սրտերուն մէջ, և կը տեսնեն անոր օրհնարքը արգիւնքները իրենց սոսրեայ

կեանքին և իրարու հետ ունեցած յարա-
բերութիւններուն մէջ:

Գ. — Ծնունդի երգին վերջին պատգամն է «Ի մարդիկ հանութիւն»: Հաճութիւն բառը երկու որոշ իմաստ ունի. նախ՝ հաճութիւն մարդոց միջև, և ապա՝ հաճութիւն մարդոց և Աստուծոյ միջև:

Յիսուս երբ աշխարհ եկաւ, գաստկարգային դրութեանց պատճառաւ մարդոց միջև կը պակսէր հաճութիւնը, այսինքն իրարու հանդէպ բարեկացեալ վերաբերումը, համերաշխութեան, հաւասարութեան և եզրաչափացութեան ոգին: Հարուստը նուաստութիւն կը համարէր յարաբերիլ աղքատին հետ, ազնուականը շինականէն ինքզինքը աւելի վեր կը դասէր, գիտունը ազէտը կ'անարգէր, կրօնականը աշխարհականին վրայ ցած աչքով կը նայէր: Տգիտութեան, մոլեռանդութեան և ցեղային ատելութեան իրրե արդիւնք, մարդիկ այսպէս տարբեր հատուածներու բաժնուած, մէկը միւսը ատելով, մէկը միւսին վրայ իշխելով գատապարտուած էին ապրելու և տառապելու:

Մարդկութիւնը խորապէս կը հառաչէր և կարօտը կը քաշէր պատգամի մը՝ որ ըսէր. «Ձիք խտիր, ո՛չ հրէի և ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի և ո՛չ ազատի, ո՛չ արուի և ո՛չ իգի, զի ամենեքին մի էք ի Բրիստոս Յիսուս» (Պաղտ. Գ. 28): Այս ցնցիչ ու յեղաշրջող պատգամին սկզբունքը աշխարհ քարոզուեցաւ առաջին անգամ հրեշտակներու կողմէ, ծննդեան առթիւ, «Ի մարդիկ հաճութիւն» օրհներգով: Այս պատգամի հիման վրայ մարդիկ պէտք է ապրին իրենց շահը միշտ ուրիշին շահուն մէջ փնտռելով, «Մէկը ամենուն և ամէնը մէկուն համար» խօսքին սկզբունքը հետպնդելով, և Աւետարանի «Ոսկեղէն կանոն»ը իրենց նշանաբան ընտրելով:

Աստուծոյ և մարդոց միջև նաև կար խրամատ մը: Հին ատեն մարդիկ զԱստուած կը նկատէին անմատչելի վեհապետ մը, և իրենք զիրենք Անոր առջև ստրուկներ: Յիսուսի աշխարհ գալը փոխեց այս սխալ ըմբռնումը: Յիսուս քարոզեց թէ Աստուած հայր է և մարդիկ Անոր զաւակները, հոգ է թէ իրարմէ տարբեր ցեղերու պատկանած ըլլան: Յիսուսի «Էմմանուէլ» (Աս-

տուած մեղի հետ) անունը ինքնին ցոյց կուտայ արդէն որոշապէս թէ Աստուած և մարդ իրարու ազգակիցներ և բարեկամներ են, իրրե արարիչ և արարած և իրրե հայր և որդի:

Հետևաբար Բեթղեհէմի մէջ տեղի ունեցած մեր Փրկչին ծնունդը կը վերցնէ ոչ միայն մարդոց միջև եղած խտրութիւնները, այլև կը վերցնէ Աստուծոյ և մարդոց միջև դրուած անտեղի պատուարը: Ծնունդի երգը կը յայտարարէ եզրաչափացութիւն և հաւասարութիւն մարդոց մէջ, և առանց արգելքի ու անկաշկանդ կապակցութիւն և յարաբերութիւն մարդոց և Աստուծոյ միջև: Մեր և Աստուծոյ միջև, իրրե իրական քրիստոնեաներ, ո՞ր տատիճան գոյութիւն ունի այս ներքին հաղորդակցութիւնը:

Յիսուս՝ աշխարհ գալովը, ոչ միայն Աստուծոյ մասին մարդոց աւելի նոր ու բարձր գաղափարներ հաղորդեց, այլ նաև բարձրացուց մարդուն անհատական արժանիքն ու բարոյական մակարդակը: Նոյնպէս ազնուացուց իրական սեռին ընկերական զիրքը քաղաքակրթութեան թափարարման վրայ, և մանուկներու շուրջ ալ մեծ հետաքրքրութիւն ստեղծեց և գանձեք հոգածութեան առարկայ գարձաց իր հիմնած կրօնքին մէջ:

Ծնունդի այս հրաշափառ տօնին առթիւ արեւելքէն եկած երեք մոզեր լայնօրէն բացին իրենց գանձերը, — ոսկիով, խունկով և զմուռսով — և իրենց լաւագոյն նուէրներով պատուեցին Բեթղեհէմի մէջ ծնած Յիսուս մանուկը՝ իրրե իրենց Տէրը և Փրկիչը: Կ'արժէ որ մենք ալ այս պատեհ առիթով մեր սրտերը նուիրենք Անոր, որպէս մեր լաւագոյն նուէրը: Աստուծոյ առջև ամենաընտիր նուէրը մարդու սիրան է: Բանաճք լայնօրէն մեր սրտերուն զոնները՝ որ խաղաղութեան այս իշխանը մեր սրտերուն մէջ ալ ծնի, իր անպատմելի շնորհներով և օրհնութիւններով առ ի:

Գ. Ա. ՍՍՐԱՅԵԱՆ

Յրէզնօ, Գալիլի.

DE PROFUNDIS

«

I

Պիսի դառնանք, այո՛ ... արբեր ձեւերու մէջ
 Սիրելիներն պիտ' հանդիպին կարօտագին,
 Զատուին նորէն, ու միանան նորէն, անվերջ,
 Մութին՝ լոյսին՝ ցուրտին՝ կրակին:

Եղեր ենք միտ, պիտի ըլլանք յաւերժապէս,
 Սակայն արբեր ձեւի մը մէջ ամէն անգամ.
 Մարդը, պրտակը բընութեան, հըպարտ կամ հեգ,
 Վաղը զեռուն է անպայման:

Վաղը ծիլ է, ու մասնիկներ ծաղիկի մէջ,
 Վաղը բոյր է, ու հառագայք է աննըւան ...
 Ու կեանքն այսպէս յաւերժական մի ելեւէջ ...
 Օ՛, այս կասակ մըն է անհամ:

Եղեր ենք միտ, բայց ո՞վ գիտէ ո՛ւր կամ ինչպէս,
 Ո՞վ կը յիշէ անցեալ ձեւերն իր բիւրաւոր ...
 Անհուն հիգով հասնիլ մինչեւ կասարն այս վէս,
 Յետոյ իյնալ բաւալըրոր,

Ու քայքայուիլ, ու ձեւերուն դառնալ նախկին,
 Ինչ որ էիր միլիոնաւոր դարեր առաջ,
 Ու նոյն ձեւով նոյն վերելք փորձել կրկին —
 Այս է գաղտնիքը վերան բաց:

II

Բայց ո՞վ լուծած է գաղտնիք մանէն անդին ...
 Այս լոյսին մէջ մենք մանուկներ ենք խարխափող,
 Քանձր խաւար է մեր առջեւ, եւ անդունդին
 Անբափանց է գաղտնիքին հողն:

Կեանքն ալ գաղտնիք է սակաւին մեզի համար,
 Բայց բանաւոր օրէնք մ'անուուս կը վարէ գայն.
 Նիւթն ալ ունի իր գաղտնիքները անհամար...
 Մեր շուրջը ի՞նչ գաղտնիքներ կան:

Ի՞նչպէս կըրնանք մենք նիւթեղէն մեր աչքերով,
 Զըննել նիւթը եւ գաղտնիքին բանալ փականքն.
 Շարժումն ի՞նչպէս կ'ըլլայ նուագ մը հոգեբով,
 Կամ կ'ըլլայ լոյս, կ'ըլլայ երանգ:

Եւ ո՞վ կըրնայ ըսել թէ նիւթն է ամէն բան,
 Թէ ոչինչ կայ անկէ անդին մեզի անհաս,
 Թէ ոյժը լոկ անօրագած նիւթ է միայն,
 Անօրք նիւթ՝ Մեր ու երագ:

Եւ թէ ոչինչ կը մընայ մեր էութեանէն...
 Թէ պրոպագանդա մ'է կեանքը խեղճ ազամորդուն,
 Փրփուր միայն որ խաղալիկ կ'ըլլայ հովէն,
 Կը լուծուի մէջ անհուն ծովուն:

III

Ջանն երբ փրփի, կաւարին է իշխանութիւնն.
 Լարն երբ փրփի կը լրուէ ձայնը յաւիտեան.
 Կեանքն երբ դադրի, ա՛լ չի գործեր միտքը մարդուն.
 Այս է Օրէնքը Բընութեան:

— Զի փրնանար լոյսը սակայն, հեղ մ'արձակուած,
 Զայնը լարին կ'ըլլայ շարժում յաւերժական,
 Տիեզերքին մէջ ոչինչ է անհետ ջրնջուած,
 Այս ալ օրէնք է Բընութեան:

Շարունակիկ

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՊԵՏՐԵ-ԲԵՆԵՍԻՐԵԿԵՆ

ՊԱՊ ԱՐԹԱԿՈՒՆԻ

Գ Լ Ո Ւ Խ Թ Գ Գ

ԴԱԻԱԴՐՈՒԹԻՒՆ

1. ՊԱՊ ԵՒ ՇԱՊՈՒՆ

Մուշեղ Մամրիկյան, որ սկիզբէն իսկ ինքզինքը հայութեան տէրը կը կարծէր, և տնօրինողը հայ պետական քաղաքականութեան, վրդովմունքով և դժգոհութեամբ կը զիտէր Պապ թագաւորի ինքնիշխան գործունէութիւնը:

Թագաւոր և սպարապետ մէկէ աւելի անգամներ բախում ունեցած էին: Երկուքին միջև հաշտութեան փորձեր կատարուած, սակայն կրակատար և դատապարտուած ձախողելու, քանզի արքան կը պնդէր իր վեհապետական իրաւունքներուն տէր տիրականը ըլլալ, իր որոշումները ինք կայացնել, և թոյլ չտալ որ Մուշեղ ըլլայ թագաւորին թագաւորը:

Որքան պայքարը կը խտանար Պապի և Մուշեղի միջև, այնքան թագաւորը իր խորհրդականները կ'ընտրէր՝ ոչ միակ այն երիտասարդ իշխաններէ, որոնք իրեն հետ միասին Պոլսոյ գտնուէր էին, այլ նաև Մուշեղի հակակիր անձերէ: Այս կէտը յոյժ կը ջղայնացնէր Մուշեղը և ան կը բողոքէր այդ մասին թէ՛ թագաւորին և թէ՛ Ներսէսին, երբ այս վերջինը ողջ էր. ըսելով որ Պապ ահանջ կուտայ սպարապետին դէմ եղած ամբաստանութիւններուն, կը հաւատայ անոնց, և այդ պատճառաւ իրեն հետ կը թշնամանայ, և այլն⁽¹⁾: Մուշեղ ինքզինքը նախատուած կը զգար, որ արքան փոխանակ զինք ընդունելու իր գլխաւոր — եթէ ոչ միակ — խորհրդատուն, և իր փորձառու ցուցմունքներով ու խրատներով շարժելու, ինք իր ուզածին պէս կը շարժէր

կը ձեւէր, և երբ խորհուրդի պէտք ունենար, կը զիտէր «նոր» անձերուն: Մուշեղն է որ կարելի դարձուցած էր Պապին Արշակունի գահ բարձրանալը: Ի՞նչպէս ուրեմն Մուշեղ կրնար համբերել ստորագոյս աստիճանի մը վրայ գտնուել ինքզինքը:

Մուշեղի յուսախաբութիւնը խորացնող, և Պապ թագաւորի հանդէպ իր գրգռութեան աւելի հատու և վտանգաւոր շեշտ տուող պատճառներէն, գոնէ երեքը Մուշեղ կը նկատէր այնպիսի յարաճուն երկիւղով, որ յուսահատ զայրոյթը իրեն պիտի թելադրէր արքայի դէմ ձրագրել այնպիսի յանդուգն ձեռնարկ մը, որմէ իր հայրը Վասակ և մեծ հայրը Վաչէ պիտի սարսափէին:

Առաջինը, Ներսէսի մահէն վերջ, Պապ թագաւորի արմատական տնօրինութիւններն էին Ներսէսի հաստատած վանքերու, կուսանոցներու և աղքատանոցներու դէմ: Անոնց և Եկեղեցիի անբաւ կալուածներէ մեծ մասին յարքունիս գրաւուումը: Ապա, Ներսէսի յաջորդի ընտրութեան առթիւ թագաւորի խիզախ ելոյթը, որ կեսարիոյ հեղինակութիւնը կ'ոչնչացնէր Հայաստանի մէջ: Մուշեղի Բիւզանդասէր Մուշեղի ըմբռնողութեամբ, արքային այս քայլը կրօնականէն աւելի քաղաքական ալ անդրադարձում կրնար ունենալ: Չէ՞ որ Վաղէս կայսրը Բարսեղը Հայաստան զրկելու հրաման արձակած էր, որպէսզի Բիւզանդական կապը չթուլնայ հայ աշխարհի մէջ:

Երկրորդ պատճառը Պապի յարաճուն ժողովրդականութիւնը, Հայեր, մանաւանդ հասարակ խաւերու, արհեստաւոր ու շինական, մեծ խանդավառութեամբ ողջուններ էին արքայի վերոյիշեալ հաստատութիւններու դէմ առած քայլերը, իրենց վրայէն

(1) Փաւստոս, Ե. 2, 3:

ծանր բեռ մը վերցուելը, ինչպէս նաև շատ մը հողերուն իրենց յատկացուելը:

Թագաւորի վայելած այս ժողովրդակա- նութեան կը վկայէ Ամմիանոս, երբ կը նկարագրէ Պապ Թագաւորին՝ կիրիկիոյ մէջ իրեն համար պատրաստուած մահացու թա- կարդէն ազատուելով, Հայաստան վերա- դարձը: Հոն, կ'ըսէ արդարամիտ պատմիչը, «Թագաւորը ընդունուեցաւ ամենամեծ ու- րախութեամբ իր հպատակներուն կողմէ»⁽²⁾:

Երրորդ, և Մուշեղի աչքին ամենա- ծանրակշիռ պատճառ, Պապի մշակել փոր- ձած արտաքին քաղաքականութիւնն էր:

Մուշեղ ամենասերտ յարաբերութիւն կը մշակէր Տերենտիոս կոմսի և միւս բարձ- րաստիճան Բիւզանդական զինուորական- ներու հետ, որոնք Հայաստան կամ մտա- կայ Վրաստան կը գտնուէին: Անոնց միջո- ցաւ ալ Հայ սպարապետը կը հաղորդակցէր Վաղէս կայսեր հետ, զինք տեղեակ կը պա- հէր Հայաստանի անցուդարձերուն, և հայ- բիւզանդական զինակցութիւնը ամրացնելու միջոցներուն մասին կը խորհրդակցէր, ինչ- պէս, բերդեր և զինուորական կայաններ շինել Հայաստանի մէջ, կամ կայսեր ծախ- քով զինել հայ ազնուականութիւնը⁽³⁾:

Շապուհի դեսպանները «զաղտնի պատ- զամաւորներ», կ'ըսէ Ամմիանոս, իրարու ետեւէ Պապի մօտ կուգային խորհրդակցե- լու: Ծերունի պարսիկ արքան, պահ մը զին- ուորական գործողութիւններէ խուսափե- լով, ձեռք կ'առնէր զիւանագիտական զէն- քերը: Ան կ'ուզէր սիրաշահիլ Պապը: Գիտ- նալով որ Պարսկական կուսակցութիւնը, վերջին զէպքերէն յետոյ, գրեթէ քայքայ- ուած վիճակի մէջ է Հայաստան, Շապուհ Պապի հետ ունեցած բանակցութիւններուն՝ անշուշտ հայ թագաւորի համար հրապուրիչ զիջումներ և նպաստաւոր խոստումներ կ'ը- նէր:

Սոյն բանակցութիւններու ընթացքին, Պապ թագաւոր շատ ալ հաղորդակից չէր ընել Մուշեղ Մամիկոնեանը անցած դար- ձածին: Բայց երբ Պապի և Շապուհի միջև համաձայնութիւն մը զոյանալու նշանները շատցան, Մուշեղ և իր խորհրդակիցները բողոքեցին Պապին որ սխալ էր իրեն համար

Բիւզանդիոնի կայսրէն երես դարձնել և Շա- պուհի խոստումներուն վստահելով, անգամ մըն ալ պարսկական ազդեցութիւնը տա- րածել Հայաստանի մէջ⁽⁴⁾:

Երկտասարդ արքան անտարբեր մնաց այս բողոքներուն: Իր հայեցակէտով, պար- սիկ թագաւորի հետ խաղաղութեան դա- շինք մը, որ Պապին ապահովէր անկախ տիրապետութիւն իր երկրին մէջ, գերա- դասելի էր ներկայ կացութեան, ուր հայ թագաւորը Բիւզանդական զօրապետներու շարունակական հսկողութեան տակ պիտի մնար, միաժամանակ ալ ռազմունակ Շա- պուհը վերջ ի վերջոյ մղէր զինուորական ամենի արշաւանքի մը:

Շապուհ իր բանակցութիւններու ըն- թացքին, Պապին դժգոհութիւն յայտնեց թէ այն երկու հայերը, Գղակ և Արրաբան, որ Արտազիւսը պաշարող պարսիկ զօրքե- րու մեծամասնութեան դաւադրաբար կո- տորուելուն պատճառ եղած էին, զեռ ի պատուի էին Պապի կողմէ: Սա Պապի ան- կեղծութեան վրայ կասկած կը ձգէր, և բարեկամական մեայուն համաձայնութեան մը արդիւք կրնար ըլլալ:

Յիրաւի, Գղակ մեծ աշխոյժով հակա- պարսիկ գործունէութեան տուած էր ինք- զինքը: Տերենտիոս կոմսի և Մուշեղ Մա- միկոնեանի վստահութիւնը շահած, Մուշեղ իրեն յանձնէր էր արեւելեան սահմանի մօտ գտնուող հայ բանակի հրամանատարու- թիւնը⁽⁵⁾:

Եթէ Գղակ հաւատարիմ մնար իր նոր տէրերուն, Շապուհ իրեն դէմ դաւող այս հայէն նեղուելու պատճառներ պիտի ունե- նար: Այս նկարագրով մարդիկ, որոնք կողմ փոխելու լպրճուն մարզանքներով իրենց միտքը կը գրաղեցնեն շարունակ, երկու կողմերուն ալ կասկածելի կրնային ըլլալ՝ անոնց թաքուն արհամարհանքին ենթակայ ըլլալէ զատ: Հաւանաբար Փաւստոսի պատ- մածը շիտակ է թէ, Մուշեղին կողմէ ա- րեւելեան զօրաց հրամանատարութիւնը ըս- տանձնելէ վերջ, պարսիկ սահմանին մօտ իր այդ ապահով կայանէն Գղակ սկսու գաղտնի զիմումներ ընել Շապուհին, Մու- շեղը և նոյնիսկ Պապ թագաւորը պարսիկին յանձնելու մասին:

(2) Ammianus, XXX, 1, 15.

(3) Փաւստոս, Ե. 34:

(4) Փաւստոս, Ե. 32: (5) Փաւստոս, Ե. 6:

Գղակի մասին կասկածիլ սկսաւ Պապի ամենէն վտանհելի և նուիրեալ խորհրդակիցը Կենի Անձեւացի իշխանը, որ իր կասկածը հաղորդեց Պապին:

Թագաւորը, բարեկամութիւն ձեացնելով՝ իր մօտ հրաւիրեց Գղակը, իբր թէ հայպարտկական մերձեցման մասին կարեւոր խորհրդակցութեան համար: Պապ որոշած էր Գղակը և Արրաբանը մահուան դատապարտել: Այս կերպ ոչ թէ երկու անվտանգելիներու հաշիւը կը մաքրուէր, այլ Շապուհին ալ մէկ կրկնակի բողոքը վերջ կը գտնէր:

Գղակ և Արրաբան գլխատուեցան, և անոնց գլուխները Շապուհին զրկուեցան⁽⁶⁾: Այս երկու քին սպանութիւնը, և մանաւանդ Պապ թագաւորին յամառ ջանքը Շապուհին հետ լեզու գտնելու, ա՛լ աւելի գրգռեց Մուշեղը Պապի դէմ:

Այլևս սպարապետի համար որոշ էր որ Պապ երբեք պիտի չենթարկուէր իր ազդեցութեան: Իսկ դժուար չէր իրեն համար կռահել թէ, եթէ Պապ և Շապուհ յաջողէին խաղաղութեան դաշինք մը կնքել, իր դիրքը բոլորովին պիտի նսեմանար: Հեղինակութիւնը, զոր դժուարութեամբ ձեռք ձգած էր և մաքառելով կը պահէր, պիտի ջլատուէր, ու Բիւզանդական գորապետներու օժանդակութենէն ալ զրկուած, սոսկական զինուորական մը պիտի ըլլար:

Այս ցրտին պատկերը սարսափեցուց Մուշեղը: Ան թաղելու էր իր անհամբեր փառասեննութիւնը, և քաղաքական տիրակալութեան բաժակը, որմէ հազիւ ումպ մը ճաշակեր էր ու այնքա՛ն արբշտած, պէտք է վերջնականապէս իյնար ձեռքէն:

Պապ կամ ինք:

Պապն ալ որքա՛ն երխտասորդ էր, հազիւ քսաներեք տարեկան, և ո՞վ դրա՛է դեռ քանի երկար տարիներու կեանք ունենար:

Մուշեղի խորհուրդները վտանգաւոր դարձուած ք մը ստացան:

Պապ Հայաստանի թագաւոր մնալու չէր:

2. Տ Ա Ր Ս Ո Ն

Թագաւորը գահէն հեռացնելու երկու ճամբայ կար, կամ ստիպել արքան հրաժարելու, և կամ սպաննելու զինք:

Պապը սպաննելու գաղափարը եթէ ի

սկզբան անցած էր Մուշեղի մտքէն, վախով մէկդի կը գնէր: Եթէ ա՛յ մէկ ուրիշ մտածում իր վրայ զսպիչ դեր չկատարէր, Պապի վայելած մեծ ժողովրդականութիւնը բաւ էր կասեցնելու իր չարանենդ խորհուրդը: Կար նաև ուրիշ պարագայ մը: Մուշեղ, ինչպէս իրմէ ստաջ և վերջ միւս Մամիկոնեաններ, եզրաշրջապան և հայրասպան կրնային ըլլալ առանց խղճի խայթ ունենալու, սակայն արքայասպան՝ երբե՛ք, պայմանաւ որ արքան Արշակունի տոհմին պատկանէր: Ստարագղբ Մամիկոնեաններու բարերար այս թագաւորական ցեղը՝ անոնց կողմէ նկատուած էր նուիրական: Մանաւանդ Մուշեղը, որ ոչ թէ հայ թագաւորի, այլ նոյնիսկ օտարի: Երբ Զիրաւի ճակատամարտին Աղուաններու Ուռնայր թագաւորը իր ձեռքը ինկաւ, Մուշեղ ազատ ձգեց զինք ըսելով թէ, «Փառք տուր, որ թագաւոր մարդ ես, և զլիսիզ թագ կը կրես, ես թագաւոր մարդու չեմ սպաններ եթէ նոյնիսկ նեղը իյնամ»⁽⁷⁾:

Այն Մուշեղը որ հարիւրաւորներ, հայ և օտար, մորթագերմ ընել տուած էր:

Կամ Մուշեղի եզրայր Մանուէլը, երբ քանի մը տարի վերջ՝ վարագրատ թագաւորի դէմ պատերազմի ելաւ, և կոտել մէջ թագաւորը նեղ ինկած, Մանուէլի երկու սրղիները պիտի սպաննէին զինք, Մանուէլ արդիւնց գանոնք ըսելով. «Այ, տիրասպան մի՛ ըլլաք»⁽⁸⁾:

Ոչ, ոճիրը յուսահատ և ճարահատ ելք էր: Այդ մասին մտածելու էր երբ այլևս Մուշեղի համար ուրիշ ամէն դուռ զոցուած էր:

Անմտութիւն էր նաև մտածել թէ Մուշեղ և իր արբանեակները կրնային ստիպել Պապը հրաժարելու գահէն՝ հակառակ իր կամքին:

Հապա՞ վաղէս կայսրը:

Ա՛հ, Մուշեղ լոյս մը տեսաւ: Ինք անմեղ հանդիսականի դեր պիտի կատարէր երբ Պապ կը հեռացուէր իր գահէն:

Եւ այս մանուածապատ գաւազրութեան համար ճիշդ մարդն ալ գիտէր Մուշեղ:

Տերենտիոս կոմսն էր այդ:

Շարանակէն (28) ՀՐԱՆԳ Գ. ԱՐՄԷՆ

(6) Ammianus, XXVII, 12, 14:

(7) Փառաս, Ե. 4: (8) Փառաս, Ե. 37:

ԵՐԸԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ

**ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ
ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ**



26.

ԵՐԸԺՇՏԱԳԻՏ ԱՍՀՍՍԿ վարդապետ

15րդ դարի հայ երաժշտութեան պատմութեան էջերում գծագրուում է երաժշտապետ Սահակ վարդապետի պայծառ կերպարը, որի մասին, սակայն, հայ երաժշտութեան պատմութեան մէջ մինչև օրս էլ դեռ որևէ տող չի արձանագրուած:

Իր երաժշտական պատրաստութեամբ և քաղցր ձայնով նա վայելել է իր ժամանակի ժողովրդի սէրն ու յարգանքը, միաժամանակ յայտնի է դարձել որպէս «կորովամիտ բանասէր» և լաւագոյն մանկավարժ: Ամբողջ հոգով նուիրուել է նա նոր սերնդի երաժշտական կրթութեանը և հայ ժողովրդին պարզեւել է գեղարուեստասէր պատանիներ ու երիտասարդներ: Նրա երախտագէտ աշակերտներից մէկն է վաստակաւոր գրիչ Աւետիք վարդապետը, որի 1416 թուականին գրած «Ժողովածու Մեկնութեան» ձեռագրի յիշատակարանում կարգում ենք. «... Այլև եղկելիս յամենայնի և թշուառացեալս ոգի, անարժանս և յետեալս յամենայնի Աւետիք... գծող այսմ տառի... աղաչեմ յիշել ի տէր զհոգեոր հայրս իմ և զյոյժ երախտաւոր ուսուցիչս իմ զտէր Սահակ բանի սպասաւորս և զքաղցրածայն երաժիշտս... ի թվականիս ՊԿԵ (865 + 551 = 1416)»:

Վաստակաւոր երաժշտապետի գործունէութեան զլխաւոր վայրը հանդիսացել է Երզնկայից զէպի Արևմուտք փոռած կապուսի պատմական վանքը, որ եղել է իր ժամանակաշրջանի հայ մշակոյթի և երաժշտական ու գրչական արուեստների զարգացման մի զլխաւոր կենտրոնը: Դեռ 1412 թուականին վաստակաւոր գրիչ Ռբստակէս Սերաստացին Աւագ վանքում գրած «Լուծմունք իմաստասիրական գրոց ԅովհաննու Որոտնեցոյ» խորագրով ձեռագրի յիշատակարանում արձանագրում է կապուսի վանքի անունը: Ահա գրչի սեղմ տողերը. «... Ո՛հ, զի Աստուածածնին կրեցի զթուղթս

ի յԱւագ վանքն և սուրբ Յակոբիս՝ ի կապուսի կու գրեմ, սառնասառոյց ցրտութեամբ»:

Երաժշտապետ Սահակ վարդապետը կապուսի մենաստանում ապրել է «ի դառն և ի դժնեայ ժամանակիս»: Դա 1425 թուականն է, երբ Աւթման բէկն՝ տէրն Աւթայ, արշաւում է Եզնկի վրայ, հրդեհում է գիւղերն ու աւանները և աւերում է վանքերը: Նա հրդեհում է նաև հռչակաւոր կապուսու վանքը: Անասելի ծանր դրութիւն է ստեղծուում ժողովրդի համար: Ժամանակակից գրիչ Աւետիքը 1425 թուականին իր ստացած ձեռագիր «Աստուածաշունչ»-ի յիշատակարանում ժամանակի տխուր անցքերն արձանագրել է հետեւեալ բնորոշ տողերով. «... Տարտամս և տառապեալս ողուղ Աւետիք աշակերտ բանի, ի Դարանաղեաց զաւտոէ, ի վաղուց հետէ փափազեալ ըղծայի այսմ վայելուչ... Աստուածաշունչն հին և նոր կտակարանացս... կամակցութեամբ և օժանդակութեամբ բազմերախտ հօրս իմոյ հոգեորի տէր Սահակ կորովամիտ բանասիրի և երաժշտապետի... տեսեալ զտեղնանս իմ առ այս անգին մարգարիտս՝ օգնական եղեալ յորդորեաց զմեզ... Արդ, որք ժառանգէք զսա յետ մեր... յիշման արժանի արարէք ի բարին: Մանաւանդ... զուսուցիչն իմ զտէր Սահակ... Եւ ստացաք զամենագով Աստուածաշունչս ի թուականիս հայոց ՊՁԳ (874 + 551 = 1425), ի դառն և ի դժնեայ ժամանակիս, զի մեծ պատուհաս պատահեցաւ Եկեղեցաց զաւտոխս... եկն տէրն Աւթայ ի վերայ Եզնկիս, և... հրդեհեաց զգեղաւանն առհասարակ և զվանօրայս, ընդ որ և հռչակելի մենաստանս մեր կապուսու վանքս հրդեհեալ աւերեցաւ: Եւ երեք ամ ի խսար պահեաց զքաղաքն, և առեալ ապա խաղաղացոյց, և խնամօքն Աստուծոյ սկիզբն եղև շինութեան զաւտոխս: Որ և մեք, ողորմութեամբն Աստուծոյ նորոգեցաք զսուրբ անապատս պայծառ շինուածով՝ առաւել քան զառաջինն»:

Թէ 1425 թուականից յետոյ երաժշտապետ Սահակ վարդապետը պատմական կապուսի վանքում գեղարուեստական ի՞նչ գործունէութիւն է ունեցել և ս՞րտեղ է գրտնըւում նրա գերեզմանը, յայտնի չէ: Պարզ է միայն այն, որ նա 15րդ դարի նոր սերնդի և հայ երաժշտութեան զարգացման խրնդրում ուշագրաւ դեր է կատարել:

27.

ԵՐԱԺՇՏԱՊԵՏ ՍԱՐԳԻՍ

Պատմական Կափոսի վանքի հպարտութիւնն ու պարծանքն է կազմում «քաջ երաժշտագետ» Սարգիսը, որի յայտնութեան համար պարտական ենք իր լաւագոյն աշակերտ և վաստակաւոր գրիչ Գրիգորին, որ դեռ 1416 թուականին, Կապոսի մենաստանում, իր երաժշտագետ ուսուցչի յորդորանքով, գրում է «Քարոզգիրք Գրիգորի Տաթևացոյ» խորագրով ձեռագիրը, որի յիշատակարանն արժէքաւոր է կրկնակի տեսակէտից. նախ՝ յիշատակում է իր սիրելի արուեստագէտ ուսուցչի անունը, յետոյ, որպէս ականատես և ականջալուր, գծում է ժամանակի քաղաքական մասլ գէպքերի պատկերը: Ահա գրչի տուեալները. «Փա՛ռք . . . որոյ ողորմութեամբն սկսայ և աւզնականութեամբ նորին աւարտեցի ըզփափագելի և զտենչալի զգիրս զայս Քարոզաց, արարեալ երիցս երանեալ մեծ հետորին Գրիգորի բարունագետին . . . Զորես եղկելիս, թափուրս յամենայն բարեգործութեանց, ծոյլս և տարտամս յամենայնի, Գրիգոր բանի սպասաւորս . . . գրեցի զսա, մանաւանդ յորդորմամբ և նպաստաւորութեամբ բազմերախտ և գորովագութ հորս իմոյ հոգևորի ուսուցչի տէր Սարգիս բան սիրողի և քաջ երաժշտագետի, զոր Տէր Յիսուս գրեացէ զսա՝ իւրաւաքն հանդերձ ի գիրն կենաց անջնջելի . . . Արդ, գրեցաւ սա ի սուրբ մենաստանիս, որ յորջորջեալ կոչի Կափոսի . . . ի թվականութեան հայկազեան տուժարիս յարեթական տոճմի ԸԾ. երորդի Կ. և Ն. յաւելորդի (1416), ի դառն և յանբարի ժամանակի, ի վերջ եկեալ անցաւորիս: Նաև առ մեզ կատարի բանն տէրունի, թէ՛ Յաւուրն յայնոսիկ յարիցէ ազգ յազգի վերայ և եղիցին սրածութիւնք և մահք տարածամք, զոր և միոյն ականատես եղաք և միւսոյն ականջալուր: Քանզի առ մեզ եղեալ մահ սաստիկ յեկեղեաց զաւորս, զոր ով կարացէ ընդ գրով արկանել զաղէտս տարակուսանացս: Այլև զնացեալ անօրէն բռնաւորն Սարա-Սուտեֆ կոչեցեալ, վառեալ շարութեամբ, և մտեալ ի Տաւն վրաց, և առեալ զքաղաքն Յաղիժիս, և զամենեսեան, առհասարակ, զարսն ի սուրն սուսերի մաշեալ, և զկանայս և զմանկունս գերի վարեալ- և այլ այսպիսի յուրվս զոյ տեսանելի հասեալ ժամուսս:

Ահա այս դառն ժամանակում ապրել է «քաջ երաժշտագետ» Սարգիսը: Նրա հասարակական արժէքն ու զեղարուեստական կերպարն արժէքաւորում է նրանով, որ նա Կափոսի վանքում կրթում և դաստիարակում է իր ժամանակի երաժշտական ձիրքով օժտուած նոր սերունդը և նրա սրտում միշտ վառ է պահում երաժշտական արուեստի սէրը:

Գրիգոր գրչի ձեռքով մեզանից 540 տարի առաջ գրուած յիշատակարանի տողերն ընդգծում են մի այլ հանգամանք: Արուեստագէտ Սարգիսն իր դարաշրջանում փայլել է իր երաժշտական խոր հմտութեամբ և հռչակուել է որպէս «քաջ երաժշտագետ», իսկ իր «գորովագութ» բնաւորութեամբ սիրուել և յարգուել է թէ՛ իր աշակերտներից, թէ՛ Կափոսի վանքի միաբաններից և թէ՛ ժամանակի արուեստասէր ժողովրդից:

28.

ԵՐԱԺՇՏԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ

Երևանի պետական Մատենադարանի ձեռագրատանը մեր անդին պապերից աւանդ մնացած բազմաթիւ թանկագին ձեռագրերի շարքում զուրգուրանքով պահում է նաև 1423 թուականին գրուած մի «Շտրակնոց», որը պատկանում է Յովհաննէս Եպիսկոպոս անեցու գրչին: Զեռագիրն արժէքաւոր է ո՛չ միայն երաժշտական արուեստի տեսակէտից, այլև նրանով, որ յիշատակարանում արձանագրուած է 15րդ դարում ազրոզ և հայ երաժշտութեան պատմութեան դեռ անյայտ մի վաստակաւոր երաժշտագետի և ուսուցչի անունը: Դա արուեստագէտ Յովհաննէսն է, որի կենսագրութեան համար, զժբախտաբար, փաստական տեղեկութիւններ չկան, իսկ ձեռագրի յիշատակարանում ընդգծուած են հետեւեալ տողերը. «Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուարութեանս հայոց ՊՋԲ (872 + 551 = 1423), ձեռամբ ախմար և փցուն գրչի Յով(աննէս) Եպիսկոպոսի Անոյ, ի խնդրոյ հոգելից և շնորհաց աթարանի՝ աշակերտի քաջ բարունոյ Ղազարու և ճըգնագգեաց հորագատի իւրոյ Յովաննու երաժշտագետի»:

Այս տողերն էլ նշում են, որ արուեստագէտ Յովհաննէսը միջնադարի հայ երաժշտական արուեստի վաստակաւոր մշակներից մէկն է, որ ապրել և գործել է 15րդ դարի առաջին շրջանում: Իր դարաշրջա-

նում նա յայտնի է զարձել իր երաժշտական լուրջ կրթութեամբ և հոչակուել է որպէս երաժշտագետ: Իր հասարակական գործունէութեան ընթացքում նա ամբողջապէս նուիրուել է հայ երաժշտական արուեստի զարգացմանը, միաժամանակ նոր սերնդի երաժշտական դաստիարակութիւն է տուել և նրանց սրտերում վառ է պահել հոգևոր և աշխարհիկ երաժշտութեան սէրը: Ահա թէ ինչու նա արժանի է ուշադրութեան և գնահատութեան:

Նշենք և այն, որ ձեռագիր «Ծարակնոց»ը սակիճածանջ զարդուք և զանազան զուտովք ծաղկել է 15րդ դարի մանրանկարիչ Յովհաննէս քահանան: Ահա իր տողերը. «Որ և ես ըստ կարի տկարութեան իմոյ յուսով անմահին և սիրով հոգւոյն սրբոյ ծաղկեցի զսա սակիճածանջ զարդուք և զանազան զուտովք, ի յիշատակ հոգւոյ իմոյ ծնաւդաց իմոց Վարդանայ և Թոնձի . . . »:

29.

ԵՐԱԺԻՇՏ ՍԱՐԿԱՆԱԿ

Միջնադարի հայ երաժշտագետների պայծառ կերպարները գծելու համար ձեռագրերի յիշատակարանները թանկագին աղբիւրներ են: Այդ տեսակէտից մի արժէքաւոր աւանդ է 15րդ դարի վաստակաւոր գրիչ՝ Թումայ Կաֆայեցու (*) 1422 թուականին, Տաթևի պատմական վանքում, ընդօրինակած մի ձեռագրի յիշատակարանը, ուր ցոլանում է հայ երաժշտութեան դեռ անձանթ երաժշտագետ Սարկաւազի գլեմանկարը: Նա մէկն է 15րդ դարի այն վաստակաւոր երաժշտագետներից, որ Տաթևի վանքում պաշտօնավարել է որպէս «վարժապետ և ուսուցիչ» և, որ կարեօրն է, փայլել է որպէս անհաս երաժիշտ և քաղցրածայն փիլիսոփայ: Այդ գեղեցիկ բարեմասնութիւններով էլ նա սիրուել է իր ժամանակի ո՛չ միայն ուսանողներից, այլ և ժողովրդից և հոչակուել է «մեծ պարոն» տիտղոսով:

Տաղանդաւոր երաժշտի լաւագոյն աշակերաններից մէկն է վաստակաւոր զբիւլ

Թումայ Կաֆայեցին, որ 1422 թուին ընդօրինակած մի ձեռագրի յիշատակարանում իր ուսուցչի մասին արձանագրել է թանկագին տողեր: Բացէք տաղանդաւոր բանասէր, հնախօս, պատմագէտ և բանաստեղծ Ղևոնդ Ալիշանի «Սիտական»ը (էջ 241) և այնտեղ պիտի կարդաք հետեւեալ բնորոշ տողերը. «Վարժապետս և զուսուցիչն, զանհաս երաժիշտն և զքաղցրածայն փիլիսոփայն, զմեծ պարոն Սարկաւազն, զուսուցիչն մանկանց նոր Սիոնիս»:

Նշենք և այն, որ Ղևոնդ Ալիշանի իր «Սիտական»ում արձանագրել է, թէ Թումայ Կաֆայեցու ձեռագրի յիշատակարանի Սարկաւազ երաժշտագետը Գրիգոր Տաթևացու յաջորդ Մխիթար Տաթևացին է: Այս տեսակէտը, սակայն, կարօտ է ստուգութեան: Բայց էականն այդ չէ, այլ երաժիշտ Սարկաւազի կերպարը: Անժխտելի է, որ վաստակաւոր անհաս երաժիշտը, իր երաժշտական լուրջ պատրաստութեամբ գրուել է իր ժամանակի ժողովրդի ուշադրութիւնն ու համակրանքը, իսկ Տաթևի հոչակաւոր վանքում փայլել է, որպէս լաւագոյն մանկավարժ: Պատմական մեծաստանում էլ նա դաստիարակել է երաժշտական ձիրքով օժտուած պատանիներին ու երիտասարդներին և նրանց հոգիներում վառ է պահել երաժշտական արուեստի սէրը: Անժխտելի է և այն, որ Սարկաւազի գեղարուեստական և մանկավարժական բեղմնաւոր գործունէութիւնը կարևոր նշանակութիւն է ունեցել հայ երաժշտական արուեստի զարգացման խնդրում (*):

(Վերջ՝ 14) Ս.ՐԱՄ ԵՐԵՎԱՆ

(*) Միջնադարեան հայ կոմպոզիտորների նիւթերը խմբագրելիս կարգացել ենք Երևանի պետ. թանգարանի պատմա-գրական բաժնի (ուր 1925-1927 թ. պաշտօնավարել ենք որպէս գիտական հոկիչ) և էջմիածնի թանգարանի ձեռագրերի յիշատակարանները: Նոյնպէս ուսումնասիրել ենք Մ. Տէր-Մովսիսեանի կազմած հայերէն ձեռագրերի ցուցակը, Ղ. Ղևոնդ Ալիշանի արժէքաւոր երկերի յիշատակարանները, Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի Մատենադարանի ձեռագրերի յիշատակարանները: Օգտագործել ենք նաև Ցաղրոս Տաշեանի «Յուշակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վիեննա» (1895 թ.), Գարեգին կաթողիկոսի «Ձեռագրաց յիշատակարան»ը, Լ. Ս. Խաչիկեանի «Հայերէն ձեռագրերի յիշատակարանները» և ուրիշներ: Բացի այս աղբիւրներից, թերթի ենք շնորհակալ Մատենադարանի, «Յուշակ»ի, «Նորակաթի»ի, «Էջմիածին» ամսագրի և այլ հանդէսների էջերը:

(*) Թումայ (Թովմայ) Կաֆայեցին Տաթևում 1421 թուին օրինակել է Գրիգոր Տաթևացու «Բարոզգիրքը», 1422 թուին՝ «Սակեփորիկը», իսկ 1424 և 1425 թուականներին՝ երկաթագիր և ծաղկագիր տառերով զարդարել է կարագետ զբիւլ գրած ձեռագիրը:

Կալկաթայի Ս. Նազարէթ Եկեղեցւոյ 250-ամեակի Տօնակատարութիւնը

Արտահայաստանի մեր ժողովուրդի գոյութեան դարաւոր և հիմնական ազգակեր հանդիսացեր է Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին, որուն հայութիւնը կապուած է անքակտելի զգացումներով: Հոն, ուր հայը լսեր է հայ քահանային «Հայր Մեր»ը, հոն, ուր հայ հոգիին մէջ հնչեր է Հայաստանեայց Եկեղեցւոյ զանգակներուն աղօթահունչ ղօղանջը, հոն, ուր հայը ներածեր է խունկի աննշարոյր ծուխը, կարողացել է պահել իր ազգային ինքնօրոյնութիւնը, հետեւաբար և հաւաքական գոյութիւնը իրրև այդպիսին: Այդ է պատճառը որ հայ ժողովուրդը քաղաքական, արնտեսական, ընկերային ամենադժուարին պայմաններու մէջ իսկ, ի դին նիւթական և բարոյական մեծ գոհուցութիւններու՝ շիներ է իր ազգային Եկեղեցին՝ իր հոգեկան պահանջներուն գոհացում տալու և իր ազգային գոյութիւնը պահպանելու համար: Տառապանքներուն ամենէն դառնը ճաշակած հայ ժողովուրդին համար Եկեղեցին հայկական նաւահանգիստ մըն է խաղաղ և հեռու նախանձի և քննախնդրութեան հասանքներէն: Եւ որ գրկին մէջ հայը ինքզինք կը զգայ շատ մօտ Աստուծոյ:

* * *

Այս տարի գիրջացու Կալկաթայի Հայոց Ս. Նազարէթ Եկեղեցւոյ հիմնադրութեան 250ամեակը: Ամբողջ երկու և կէս դար այս մեծ հաստատութիւնը հոգևոր սնունդ է մատակարարեր Կալկաթահայութեան:

Ս. Նազարէթ Եկեղեցին Կալկաթայի քրիստոնէական առաջին եկեղեցին է, կառուցուած 1707ին և ան կը նկատուի ամենահարուստ համայնքային եկեղեցին ամբողջ արեւելքի մէջ: Հայ ժողովուրդին պատիւ բերող բարեօրրական մեծ հաստատութիւն մըն է այս, որու նիւթական օ-

ժանգակութեան շնորհիւ ամբողջ 136 տարիներ, առանց ընդհատումի կանգուն է մնացեր Կալկաթայի Հայոց Մարդասիրական Ճեմարանը, որու գրասեղաններուն առջև դաստիարակուել են հազարաւոր հայ պատանիներ անցեալի մէջ և տակաւին կը դաստիարակուին այսօր:

Այժմ Եկեղեցւոյ ամսական քսան հինգ հազար բուրբի հասնող եկամուտին մէկ մասը կը յատկացուի Կալկաթահայ չքաւորներու, իսկ մնացեալը Մարդասիրական Ճեմարանի և այլ բարեօրրական նպատակներու համար:

Ս. Նազարէթ Եկեղեցին իր ամբողջ հարստութիւնը կը պարտի այն ազնուահոգի, զինանձն ու եկեղեցաւէր մեծահարուստներուն, որոնք իրենց կենդանութեան ժամանակ ամբողջ իրենց աշխատանքը ու յետ մահու բոլոր իրենց հարստութիւնը տրամադրեր են նիւթապէս ու բարոյապէս զօրացնելու համար կրօնական այս հաստատութիւնը:

Թէև պայմանները փոխուած են այսօր, սակայն Կալկաթահայութեան զգացումը մնացած է անփոփոխ հանդէպ իր դարաւոր եկեղեցիին: Կուսակցական վէճերէ ու կոխներէ հեռու այս հեռաւոր քաղաքի հայ բնակչութեան կարևոր մէկ մասը ամէն կիրակի կը փութայ դէպի իր սուրբ տաճարը: Կը ղօղանջեն զանգակները հայ եկեղեցւոյ ու պատարագի քառածայն երգեցողութիւնը կը հնչէ հաւատացեալներու հոգիին մէջ: Նախանձելի հայ գաղութ . . . Միջին Արեւելքի ազգային եկեղեցական կեանքի անհաճելի մթնոլորտէն եկած անձ մը, իսկապէս կը նախանձիմ այս փոքր գաղութի համերաշխ կեանքին:

Տեղին է այստեղ շեշտել որ Կալկաթայի Ս. Նազարէթ Եկեղեցւոյ պատուաբեր դիրքը, նոյնիսկ յաշտ օտարներու, կը պարտինք ժողովուրդի բոլոր խաւերու ունեցած հա-

մագործակցութեան և իրարհակացողութեան եկեղեցականներու և եկեղեցոյ վարչութեան հետ: Ամբողջութեամբ կալկաթահայութիւնը կապուած է Ս. Էջմիածնին և անոր արժանընտիր գահակալին՝ մենախորունկ զգացութեանով:

* * *

Կիրակի, 24 Նոյեմբերին շքեղ կերպով տօնախմբուեցաւ Կալկաթայի Ս. Նազարէթ եկեղեցոյ հիմնադրութեան 250ամեակը:

Առաւօտեան, յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ եկեղեցոյ հանգուցեալ բարերարներու հոգիներուն խաղաղութեան համար: Պատարագիչն էր Տէր Պօղոս Քհնյ. Պետրոսեան:

Եկեղեցոյ հիմնադրութեան պաշտօնական տօնակատարութիւնը տեղի ունեցաւ նոյն օր կէսօրէ կաք ժամը 4ին: Եկեղեցական արարողութիւններու ներկայ գրտնուեցան Նորին Վսեմափայլութիւն Պենկալ նահանգի կօնապարչուհի Օր. Փատմածա Նայտու, տարբեր յարանուանութեանց պատկանող բարձրաստիճան եկեղեցականներ, պետական անձնաւորութիւններ և տարբեր երկիրներու պետական ներկայացուցիչներ:

Արարողութիւնները սկսեցան «ուրախ լիր» շարականով, զոր երգեց Ճեմարանի շրջանաւարտներէն տաղանդաւոր մեներգիչ երիտասարդ Ալպերթ Մաչեսարեան, որու հնչեղ ձայնին քաղցր ելեւէջները լիցուցին ներկաներու սրտերը յուզումով ու հիացումով: Երգիչին կ'ընկերակցէր երգեհոնի վերայ դպրաց դասի ղեկավար, զաշնակահարուհի Օր. Վիվիէն Ալէքսեան, որուն կը պարտինք երգեցողութեան յաջողութիւնը:

Իպրաց դասը յաջորդաբար երգեց «Սուրբ Սուրբը», «Մարմին Տէրունականը», «Ամէն Հայր Սուրբը», «Հայր Մեր»ը և «Էջմիածին»ը. առաջին չորսը երգուեցան քառածայն:

Երգչախումբը և մեներգողներ սքանչացումի արտայայտութիւններ խլեցին առանց բացառութեան բոլոր ներկաներէն: Անգամ մը ևս օտար այս ափերու վրայ իր գոյութիւնը պահող ափ մը հայեր մեր սըրբաձայն շարականներով աղօթք ներշնչեցին հայուն, օտար յարանուանութեանց պատկանող եկեղեցականներուն, նոյնիսկ հնդիկին և մահմետականին:

Պաշտօնական արարողութիւններէն կաք, որոնք կատարուեցան եկեղեցոյ մէջ, ներկաներ հիւրասիրուեցան զոգացուցիչներով և անուշեղէններով՝ եկեղեցոյ բակին մէջ: Եկեղեցոյ վարչութեան անունով Տիար Իրիգոր Յարութիւնեան շնորհակալութիւն յայտնեց Նորին Վսեմափայլութեան կօնապարչուհիին և օտար հիւրերուն, որոնք իրենց ներկայութեամբ պատուած էին հայ եկեղեցին և հայ համայնքը:

Ս. Նազարէթ եկեղեցոյ հիմնադրութեան 250ամեայ տօնակատարութեան առթիւ Եկեղեցոյ Վարչութիւնը և հոգևոր զոյգ Հովիւները ստացած են բազմաթիւ շնորհաւորական հեռագրիներ և նամակներ: Ծառ յարմար կը նկատենք մէջբերել Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Տիրան Արքեպիսկոպոս Ներսայեանի նամակը, ուղղուած Կալկաթայի Հոգ. Հովիւ Տէր Արամայիս Քհն. Միրզայեանի: Պատրիարք Հօր աննախապաշար գրութիւնը կրնայ լուստարանել մի քանի գրութիւններու պատճառաւ վերջերս ստեղծուած հանրային թիւր կարծիքը ընդհանրապէս հընդկահայերի և մասնաւորապէս Կալկաթահայերի մասին:

«Աւրախ եղանք շատ՝ ստանալով եկեղեցոյ վարչութեան Մանուշազիրը, որ կը յայտնէ թէ յառաջիկայ Նոյեմբեր 24ին մեծ հանդիսութեամբ տօնուելու է Նազարէթայ Ս. Եկեղեցոյն հիմնադրութեան երկու հարիւր յիսունամեակը:

«Այս բարեպատեհ առիթով եկեղեցոյ վարչութեան և համայն ժողովրդեան կ'ուղղենք մեր հայրական օրհնութիւնները և մեր Միաբանութեան սրտապին շնորհաւորութիւնները և ջերմեռանդ բարեմաղթութիւնները: Կ'աղօթենք որ Յիսուս Քրիստոս մեր Տէրը միշտ կանգուն պահէ Կալկաթայի մեր Ս. Եկեղեցին և անոր պատուական ժողովուրդը և Ս. Նազարէթայ եկեղեցոյն բարեյիշատակ հիմնադիրներուն և աստուածասէր ու ազգասէր բարերարներուն նպատակները շարունակուին իրագործուիլ դարուց ի դարս, ի պատիւ և ի պայծառութիւն մեր ամենուս հոգևոր Մօր՝ Հայաստանեայց Ս. Եկեղեցոյն:

«Ընդհանրապէս Հնդկաստանի և մասնաւորապէս Կալկաթայի հայ հասարակութիւնը իր գոյութեան սկիզբէն ի վեր մեր

ազգի լրութեան մէջ յոյժ պատուարեր զիրք ունեցած և կտրեոր զեր կատարած է: Ոչ միայն հայ լրագրութեան Մատրասի մէջ առաջին ձեռնարկութեան պատիւը կը պատկանի Հնդկաստանի հայութեան, այլ նաև ազգային արդի գրականութեան դաշտին մէջ կալկաթայի հայութեան կատարած մշակութային գործը, աւելի քան երկու դարերէ ի վեր, և եկեղեցական ու կրօնական զբօսներու հրատարակութեան իր բերած մասնակցութիւնը փառքի գեղեցիկ պսակ հիւսած են Հնդկահայութեան ճակատին:

Տ. Ծմաւան Քահանայի, Մեսրոպ Թաղեալի, Մեսրոպ Աէթի նման զէմքեր անջնջելի հետք թողած են Հնդկահայութեան պատմութեան մէջ:

Ու տակաւին երկու քուկէս դարէ ի վեր Հայց. եկեղեցւոյ զաւակաց անստական զսոցութիւնները իրենց ազգին համար, անոնց պատուարեր զիրքը Հնդկաստանի մէջ, որով հայութեան անունը պանծացուցին Հեռուոր Արևելքի այդ մեծանուն երկրին մէջ, ամէն հայու սիրտը կը լեցնէ երախտագրութեամբ և արդար հպարտութեամբ:

Աղա Նազարի, Հազարալիանի, Առաքելանի, Չեալբի, Արգարներու նման զէմքեր իրենց նախնեաց անունը պանծացուցած են:

Այլ ալ կարելի է մեզ համար մոռնալ այն՝ որ Հնդկահայերը երուսաղէմի մեր Ս. Աթոռին զօրավիզ կանգնած են յաճախ իրենց առատածեան օժանդակութիւններով և ազնուօրէն ընդունելով մեր նուիրակները և ընելով իրենց կարելին անոնց առաքելութիւնը յաջողցնելու համար:

Այսպիսի ազնուութեան ամենազերջին ապացոյցը եղաւ այն ջանքը՝ զոր եկեղեցւոյ վարչութեան անդամները ի գործ գրին Ս. Աթոռոյս ի նպաստ կտակի մը գործադրութիւնը ապահովելու համար:

Անոնք անսրտասուչ է Հնդկահայութեան մէջ տեսնել այն նուիրումն ու հպարտութիւնը, զոր անոնք ցոյց տուած են հանդէպ մեր եկեղեցւոյ կեդրոնին և սրտին, էջմիածնի Մայր Աթոռին: Աէր և պաշտամունք՝ զոր Հնդկահայերը առած և բերած են Նոր Զուգայու իրենց ժողովուրդէն, որ իր ազգասիրութեան և քրիստոնէական

բարեպաշտութեան նշանակելի գործերով պատուոյ անուն ունի հայութեան մէջ:

Սեր Ջերմեանդ ազօթքն է առ Առտուած որ կալկաթայի հայութիւնը, հաւաքուած իր հինաւուրց եկեղեցւոյն շուրջ և վառուած իրենց հայրերուն հաւատքով և ազգին սիրով՝ շարունակեն այն գործերը որոնց համար իրենց նախնիքները նշանաւոր հանդիսացան և բարի անուն ժառանգեցին:

Սեւ Առտուած որ տուողն է ամենայն բարեաց և շնորհաց, ի լոյս երեսոց իւրոց հանգուցէ ընդ հովանեաւ սրբոյ եկեղեցւոյ հանգչող բարեխիշատակ հոգիները և առատապէս օրհնեցէ Ս. Նազարէթայ եկեղեցւոյն ժողովուրդը և հաստատ պահեցէ համայն եկեղեցին Հայաստանեայց, վասն մեծի փառաց անուան իւրոյ:

Այսպիսի զգացմամբ կը խնդակցինք Ձեզ ամենուզ, հոգևոր զաւակաց մերոց եկեղեցւոյս Հայաստանեայց և Միամբ

Հայրական ջերմ սիրոյ ողջունելու
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Պատրիարք Ս. Աթոռոյն երուսաղէմի

Պատրիարք Հօր նամակը Արթ. Տէր Արամայիս Քհն. Միրզայեան հրապարակաւ կարգաց եկեղեցւոյ մէջ հաւատացեալներու՝ որոնց հոգեկան մեծ մխիթարանք և գոհունակութեան զգացում բերաւ գրութիւնը:

Այս առթիւ կը շնորհաւորենք կալկաթայի Հոգևոր Հովիւներ՝ Տէր Արամայիս Քհն. Միրզայեանը, Տէր Պօղոս Քհն. Պետրոսեանը, Մատրասի Հոգևոր Հովիւ Տէր Եղիազար Քհն. Քէշիշեանը, ու եկեղեցւոյ վարչութեան անդամները, որոնց տարած աշխատանքներու շնորհիւ Ս. Նազարէթ եկեղեցւոյ հիմնարկութեան 250 ամեակը անցաւ մեծ յաջողութեամբ:

Կալկաթա

ՍՍՍՏՈՒՐ ԿԻՒՋԷԼԵԱՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Նախորդ հաղորդագրութիւնը բերած էինք այն կէտին ուր Վերաքննիչ Ատեանը չեղեալ հռչակած էր Երուսաղէմի Նախնական Ատեանի վճիռը որ տրուած էր ի նպատակ Տէրտէրեան Եպս.ի: Վերջինս դիմած էր Վճռարեկ Ատեանին: Բարձրագոյն այս Ատեանն ալ տուաւ իր վճիռը Դեկտ. 4ին, 1957, ի նպատակ Պատրիարքարանիս: Վճռարեկ Ատեանը իր դատավճիռը եզրակացութեան կը բերէր հետեւեալ բառերով. «Որովհետեւ ներկայ դատը վարչական որոշումներ բեկանելու (համար բացուած) դատ մըն է, եւ (որովհետեւ այս դատը) քաղաքային դատ մը չէ, վերեւ յիշուած պատճառներով, հետեւաբար Նախնական Ատեանը իրաւասու չէ այս դատը տեսնելու, եւ ուստի Վերաքննիչ Ատեանի որոշումը, (Նախնական Ատեանի տուած վճիռը) բեկանելու մէջ, օրինաւոր է, եւ մենք կը հաստատենք զայն, եւ կը մերժենք դիմումը»:

Կը սպասուէր բնականաբար որ եկեղեցիի եպիսկոպոս մը, թէ իսկ «փիլոնազուրկ եւ կախակայեալ», կորսնցնելէ վերջ բազմիցս անգամ իր իսկ բացած դատերը Արդարութեան Բարձրագոյն Ատեաններուն առջեւ, եւ դատապարտուելէ վերջ իր Միաբանութեանէն, եկեղեցիի Բարձրագոյն Իշխանութենէն եւ ամբողջ ազգին բարոյական կարծիքին առջեւ, քաշուէր հրապարակէն, գէթ մոռցնել տալու համար Միաբանութեան եւ Հայութեան անունին պատճառած իր ահաւոր վնասները: Բնական այս անկակալութեան հակառակն է որ կը պատահի դժբախտաբար: Արդարութեան եւ Օրէնքի առջեւ կորսնցնելէ վերջ, Տէրտէրեան Եպս. կը դիմէ անուղիղ եւ անխոստովանելիօրէն ապօրէն միջոցներու. միտքեր պղտորելով եւ աչքեր շլացնելով ուշացնել կ'աշխատի Արքայական Հրովարտակի ստացումը:

Տէրտէրեան Եպս. կը շարունակէ «յերկուս հետս կազալ», ժողովրդային բացատրութեամբ՝ երկու լարի վրայ խաղալ: Մինչ մէկ կողմէն երկրի Վեհապետին աղիոգորմ հեռագիրներ կը տեղացնէ Ս. Աթոռոյս ընտրեալ Պատրիարքը եւ անոր կողքին աշխատող զինուորեալ Միաբանութիւնը ներկայացնելով իբրեւ «վտանգաւոր համայնավարներ» զորս «մաքրագործելու» համար լիազօրութիւն կը խնդրէ, միւս կողմէ էջմիածին գացողներու հետ նամակներ կը դրկէ Վեհ. Կաթողիկոսին եւ տարբեր տարագով կը ներկայացնէ նոյն անձերը: Այս իրողութեանց տեղեակ կ'ըլլանք առ Վեհ. Քազաւոր դրկած իր հեռագիրներէն ինչպէս նաեւ էջմիածնէն անցած բարեկամի մը նամակէն, ուղղուած Արքայական Պատրիարքին, ուր ի միջի այլոց կ'ըսուի. «Եղիշէն (Վեհափառին գրած) այդ նամակին մէջ կը գրէր որ իբր թէ դուք (կ'ակնարկէ Արքայական Պատրիարքին) (այսինչի) միջոցաւ մարդ էք վարձեր որ զինք սպաննէք, դուք իբր թէ դաշնակցականներուն հետ համաձայններ էք Անթիլիասի հետ բարեկամանալ եւ ճանչնալ Չարեհը եւ նման բաներ...»:

Չարութիւնը յաճախ այսպէս ինքզինք կը հերքէ, արդարութեան խնայելով այդ տաղտուկը:

Դեկտ. 8ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ պետութենէն ճանչցուած Տեղապահի իր հանգամանքովը, Գեր. Տ. Սուրէն Եպս.ը՝ Միաբանական Ընդհ. Ժողովի Փոխ-Նախագահի իր հանգամանքով, Գեր. Տ. Շնորհք Եպս.՝ իբրեւ Լուսարարապետ Ս. Աթոռոյ, Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան՝ Միաբանական Ընդհ. Ժողովոյ Փոխ-Ստենապետը, Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գարիկեան՝ Միաբանական Ընդհ. Ժողովոյ Քարտուղարը, այցելեցին քաղաքիս Կառավարիչին եւ յանձնեցին անոր Վճռարեկ Ատեանի վաւերացեալ դատավճիռը եւ խնդրեցին որ ընթացք տրուի պատրիարքական ընտրութեան պետական ճանաչման գործողութեանց, որոնք կասած էին անցեալ Մարտ 20էն ի վեր, բացուած դատերու պատճառով: Այժմ կը սպասուի այս գործողութեանց աւարտման եւ Արքայական Հրովարտակի շնորհման:

Մինչ այդ Տէրտէրեան Եպս., նստած յԱմման, կը շարունակէ իր պայքարը անուղիղ միջոցներով, գործնականապէս անտեսելով իրեն եղած պաշտօնական եւ անպաշտօն ազդարարութիւններուն եւ շարունակելով «վնաս հասցնել Հայ եկեղեցուն եւ Երուսաղէմի Ս. Աթոռին»:

ԴԻՒԱՆ Ս. Ա.ԹՈՌՈՅ

ԵՊԻՍԿՍՊՈՍՍ. ԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ս. Ուխտիս Միաբաններէն, *Հոգ. Տ. Ասողիկ Ծ. Վրդ. Ղազարեան, Միաբանական Ընդհ. Ժողովոյ որոշմամբ արժանացաւ եպիսկոպոսական բարձր կարգին, շնորհարարչաութեամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի:

Հայր Ասողիկ կուսակրօն քահանայական կարգն ընդունած էր 1932ին եւ անկէ վերջ թէ Ս. Աթոռոյ մէջ եւ թէ արտասահման իր ծառայութեան ընթացքին յայտնաբերած էր նուիրումի անկեղծ ոգի: Վեհափառ Հայրապետը զինք նշանակած էր Հայրապետական Պատուիրակ Հեռաւոր Արեւելքի:

Եպիսկոպոսական ծեռնադրութիւնը կատարուեցաւ Նոյնմ. 24ի Կիրակին: Հայր Ասողիկի հետ նոյն բարձր կարգին արժանացած են նաեւ Հոգ. Տ. Բարզէն Վրդ. Վարժապետեան, որ վերջերս ընտրուած էր Առաջնորդ Հայոց Գալիֆորնիոյ թեմին: Ինչպէս նաեւ Ս. Էջմիածնի Միաբաններէն եւ Թիֆլիզի Առաջնորդ Տ. Կոմիտաս Վրդ. Տ. Ստեփանեան, Վեհին հաճութեամբ եւ Թիֆլիզի Եկեղեցական Մարմիններու խնդրանօր: Վերջին երկուքն ալ իրենց կրօնական ուսմունքը առած էին Երուսաղէմի Ժառ. Վարժարանի եւ Ընծայարանի մէջ:

Գեր. Տ. Ասողիկ Եպս. Դեկտ. 5ին մեկնած է Կեդրոնական Ասիոյ վրայով՝ Հինդկաստան, Կալիֆթա, որ ասկէ վերջ իր իրաւասութեան սահմանին մէջ պիտի իյնայ, եւ ապա մի առ մի պիտի այցելէ իր ճամբուն վրայ, Սինկարուր եւ Ծակարդա, հուսկ ապա հասնելու համար իր տեղը Սիւնի, Աւստրալիա:

ՍԻՈՆ, յանուն Պատրիարք Հօր եւ Միաբանութեան, կը շնորհաւորէ Եկեղեցւոյ նոր հոգեւոր իշխանները եւ կը մաղթէ իրենց առաջնորդական ծաղկեալ գործունէութիւն իրենց պատկան վայրերուն մէջ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԳԻՐ ԵՐԱՆԱՇՆՈՐՀ Տ. ԿԻՐԵՂ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՇԻՐՄԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

6 նոյեմբեր, 1957 թ., Թեհրան

Ամենապատիւ Տ. Տիրան Արքեպսկ. Ներսիսեան
Պատրիարք Ս. Երուսաղեմայ Հայոց
Ամենապատիւ Ս. Հայր.

Խօսին յազմունքով եւ արցունքոտ աչքերով կարդացինք Սիրանի Յուլիս-Օգոստոս 1957 թ. համարում յոյս ընծայուած Ս. Աթոռոյ երանաբեան Պատրիարք Տ. Կիրեղ Խաչէկեանի — տղերս ստորագրող կրօնէր եղբոր՝ շիրիմաբարին բացման արարողութեան մասին:

Հեռաւոր այս վայրէն, բոլոր տեղի, սայն համեստ տղերով, իմ ու մեր գերդաստանի կողմից, մեր անհուն երախտագիտութեան յայտնել նախ՝ Ձերդ Ամենապատեալութեան եւ Ս. Յակոբի Միաբանութեան, Ձեր աշխատանքային ուսուցչութեան համար, ապա՝ տղերս բոլոր այն յարգարժան կազմակերպութիւններին եւ ազգայնաց, որոնք մանկայն յօժարակամութեամբ ընծայութեան իրենց լաւագոյնը, հանդիսաւոր այդ օրուան՝ ծաղկազարդելով իմ յուրձ անմուտք եղբոր դամբարանը:

Անեղծական եւ յասուկ երախտագիտութեան խօսք ունինք յայտնելու նաեւ ազնուագործ Տիրան Պ. Հինդկեանին, իր յուրձ յիշատակելի նուիրագործման համար, որ Աստուծալայել մեծահոգութեամբ՝ հոգացել է շիրիմաբարին ամբողջ ծախքը: «Թո՛ղ երկնքի արխայութեան երանութիւնը շնորհիւ Հինդկեան գերդաստանի համայն ցնչեցելոց»:

Ի վերջոյ եւ ի խօսքոյ արեւ, մաղրում ենք Աստուծային օրհնութիւն եւ արեւուտալիք Ձերդ Ամենապատեալութեան եւ Ս. Յակոբի Միաբանութեան, ինչպէս նաեւ յարգելի Տիրան Պ. Հինդկեանին եւ համայն Երուսաղեմայ ազգայնաց:

Խոնարհարար
Մեծամ Ձերդ Ամենապատեալութեան
ԳԺՏՈՒՇԻ ՕՇԱՆԵԱՆ (ԻՍՐԱՅԷԼԵԱՆ)

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՄԱՍՆԱԿԻ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՔ Ա. ՅԱԿՈԲԱՅ ՄԷՋ

Նոյեմբեր 19էն սկսեալ պաշտամունքները դադար առին Ս. Յակոբայ Մայր Տաճարի մէջ եւ սկսանք մեր առօրեայ ժամերգութիւնները եւ Ս. Պատարագները կատարել Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, որովհետեւ ձեռնարկուեցաւ մասնակի նորոգութիւններու Ս. Յակոբէն ներս: Այս մասին աւելի ընդարձակօրէն պիտի անդրադառնանք պաշտօնաթերթիս յառաջիկայ թիւերէն մէկուն մէջ: Այս առթիւ սա չափը կ'ուզենք ըսել որ նախ նորոգուեցան տաճարի բոլոր պատուհաններու փեղկերը, որոնք բոլորովին հինգած եւ գրեթէ փճացած էին տարիներու գործածութեամբ: Անոնք փոխարինուեցան երկաթեայ նոր փեղկերով: Ս. Յակոբայ տանիքին կից Առաքելոց մատրան արտաքին պատերը, որոնք վանուցս հնագոյն պատերը կը նկատուին «բէօհլէ» եղան:

Ապա Ս. Մինասի մատուռը, որ Ս. Յակոբայ Տաճարին կից անոր հնագոյն մասն է, նորոգուեցաւ. վար առնուեցան պատերուն ձեւերը, որոնք խոնաւութենէն թուլցած եւ թափթփած էին, եւ երեսն եկան եկեղեցւոյ հին պատերը որոնք հիւսուած էին առաւելաբար անհարթ քարերէ, որոնց անհարթութիւնը աւելի շեշտուած էր դարերու ճնշման եւ խոնաւութեան պատճառած կտրատումներով: Անոնք վերստին չճածկուեցան, այլ խնամքով մաքրուելէ վերջ՝ առանց եղծելու քարերու հնադրոշմ նկարագիրը, «բէօհլէ» եղան:

Իսկ Մայր Տաճարի նաւին սայլարները որոնք մաշած եւ բրտացած էին դարերու կիրարկութեամբ, բոլորովին վերցուեցան եւ եկեղեցւոյ ամբողջ յատակը ազնիւ մարմարով սալարկուեցաւ: Այս առթիւ պատահական պեղումներ եւս կատարուեցան թէ՛ Ս. Մինասի մատրան մէջ եւ թէ՛ Ս. Յակոբայ յատակին վրայ, եւ երեսն եկան հետաքրքրական եւ պատմական արժէք ներկայացնող գերեզմաններ եւ մոզայիքներ որոնց մասին հանգամանօրէն եւ պատկերներով կ'անդրադառնանք յառաջիկային: Եկեղեցին պատրաստ էր արդէն պաշտամանց համար Ս. Յակոբ Մծբնայ հայրապետի նախատօնակին՝ Դեկտ. 27ին:

ՃԱՇԿԵՐՈՅԹ Ի ՊԱՏԻ ԅՈՐԳԱՆԱՆՈՒ
ՎԵ ՀԱՓԱՌ ԹԱԳԱՒՈՐԻՆ

Դեկտ. 18, Չորեքշաբթի օր տօնական օր մը եղաւ երուսողէմ քաղաքի համար, որովհետեւ իր երիտասարդ թագաւորը իրեն պաշտօնական այցելութիւն տուաւ: Օրեր առաջ քաղաքը եռուզեւեւ մէջ էր: Յաղթական կամարներ կը շինուէին քաղաքի բոլոր պողոտաներու եւ գլխաւոր փողոցներու վրայ, պաշտօնական կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու կողմէ: Ս. Աթոռոյս վիճակուած էր իր կամարը կառուցանել Դեթսեմանիի Չորին մէջ, Ս. Աստուածածնայ տաճարին առջեւ: Ամենէն աչքի զարնող կամարներէն էր իր կառուցուածքով եւ արքայական հսկայ թագի վրայ թագաւորի մեծկակ նկարով:

Ս. Աթոռոյս կողմէ քաղաքիս օղակայանը գացին թագաւորը դիմաւորելու համար Պատր. Փոխանորդ Դեր. Տ. Սուրէն Եպս., Լուսարարապետ Դեր. Տ. Շնորհք Եպս. եւ Աւագ Թարգման Հոգ. Տ. Վազգէն Արքայ: Օղակայանը լեցուած էր պաշտօնական հիւրերով, եւ ժողովուրդի մեծ բազմութեամբ: Քաղաքէն օղակայան տանող 7 քիլոմէթրոնց ճամբան կամարներով զարդարուած էր եւ հազարաւոր աշակերտներ եւ սկաւտական խումբեր շարուած էին ճամբուն երկու եզերքները զանազան համազգեստներով: Այստեղ էին նաեւ Ս. Թարգմանչաց վարժարանի, Հայ երիտասարդաց Միու-

թեան, Հայ Բարեսիրական Միութեան եւ Հայ Մարմնակրթական Լնդհ. Միութեան արինքը իրենց տարագով եւ դրօշակներով: Ժամը 12.30ին հասաւ արքայակիր օդանաւը, եւ երբ սանդուխին վրայ երեւցաւ երիտասարդ եւ շնորհալի թագաւորը՝ ողջունուեցաւ ամենքի խանդավառ ծափերով եւ ազգային երգով, զոր նուագեց պետական զինուորական նուագախումբը: Թագաւորը աչքէ անցնելէ վերջ զօրաց ջոկատ մը, առաջնորդուեցաւ օդակայանի հիւրանոցը ուր բոլոր պաշտօնական հիւրեր մօտեցան եւ բարի գալուստ մաղթեցին իրեն ձեռք թօթուելով: Ապա ինքնաշարժներու հսկայ թափօրով առաջնորդուեցաւ հօթել Ամպասատօր, ճամբան եւ պանդոկին առջեւ արժանանալով ժողովրդային խանդավառ ծափերու եւ ուրախութեան բացազանջութիւններու:

Ժամը 1.30ին Քաղաքապետարանը մեծ ճաշկերոյթ մը պատրաստած էր վերոյիշեալ հօթէլին մէջ: Ներկայ էր քաղաքին ամբողջ ընտրանին, հոգեւորական, զինուորական, առևտրական եւ քաղաքային պաշտօնեաներ եւ նախարարական կազմը, որ թագաւորին ընկերացած էր Ամմանէն այս մեծ այցելութեան ընթացքին: Պատրիարքարանէս ներկայ էին ճաշկերոյթին, Ամն. Ս. Պատրիարք Հայրը, Լուսարարապետ Կեր. Տ. Շնորհք Եպս. եւ Պատր. Փոխանորդ Գերբ. Տ. Սուրէն Եպս.: Եղան ճառախօսութիւն-



Տեսարան մը արքայական ճաշկերոյթէն

Պատկերին մէջ ձախ աւելուք կ'երեւի թագաւոր, երկտարեղ ղեմավ, եւ Ամեն. Պատրիարք Հայր խորին հոգեւորականաց սեղանին վրայ:

ներ, որոնց պատասխանեց թագաւորը: Ապա նոյն շրախումբով եւ փառաւորութեամբ մեկնեցաւ Ամման ինքնաշարժով: Ծամրուն վրայ նոյն կամարները եւ նոյն խանդավառ արտայայտութիւնները շարունակուեցան ժողովուրդին եւ անձայր դպրոցական աշարտայայտութիւնները կողմէ: Սրբոց Թարգմանչաց վարժարանի աշակերտութիւնը զիրք գրաւած կերտներու կողմէ: Սրբոց Թարգմանչաց վարժարանի աշակերտութիւնը զիրք գրաւած էր Գեթեմանի ձորը մեր կամարին բով. լատինաց եկեղեցիին առջեւ կար իրենց կամարը իրենց աշակերտներով: Ամն. Ս. Պատրիարք Հայրը միշտ բարձրաստիճան հիւրերու հետ հետեւեցաւ թագաւորի շքերթին մինչեւ Բեթանիա ուր Յունաց Պատրիարքը եւ եղբայրական զրոյց ունեցան հանդերձ պատուասիրութեամբ: Սրբայական նախորդ ընդունելութեանց մասնակցողներու վկայութեամբ երուսաղէմ քաղաքի այս ընդունելութիւնը բացառիկ եւ աննախընթաց էր եղած իր սիրելի թագաւորին համար: Աստուած պահէ մեր երիտասարդ արքան:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Դեկտ. 14ին, Ամմանի Ամերիկեան Դեսպանը, Մր. Մէլլըրի եւ իր տիկինը, Երուսաղէմի Փոխ-Հիւպատոս Մր. Գիլկոր եւ իր տիկինը այցելութիւն տուին պատրիարքարանս: Նախ առաջնորդուեցան Ս. Յակոբայ Մայր Տաճարը ուր Ամնն. Պատրիարք Հայրը անծամբ պտըտցուց եւ բացատրութիւններ տուաւ Սրբավայրի մասին, եւ ապա իրենց ցոյց տրուեցան մեր զանձատան թանկարժէք զգեստներէն եւ ձեռագիրներէն նմոյշներ: Պատուարժան հիւրեր առաջնորդուեցան պատրիարքարան եւ ունեցան մտերիմ խօսակցութիւն Պատրիարք Հօր հետ եւ վայելցին Ս. Յակոբայ պատուասիրութիւնը: Գրեթէ ժամուկէս վանուցս մէջ անցնելէ վերջ ամենագոհ տպաւորութեամբ հրաժեշտ առին Սրբազան Պատրիարք Հօրմէն:

ՊԷՅՐՈՒԹԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՏՆՕՐԷՆԻՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՍՆԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Դեկտ. 23ին, Պատրիարքարանս այցելեցին Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Տնօրէնը՝ Մր. Բիթըր Լէօնարտ եւ Երուսաղէմի Ամերիկեան Հիւպատոսը՝ Մր. Է. Պրրտ, Անգլիական նախկին Հիւպատոսը՝ Մր. Վիլսըն եւ նոր Փոխ-Հիւպատոսը՝ Մր. Մաք Կրէկոր, որ եկած էր փոխարինելու մեկնող Հիւպատոսը: Այս առթիւ հիւրաբար մեր մէջ էին նաեւ Պէյրութի ծանօթ ազգայիններէն Տրթ. Գարեգին Քալուրեան եւ իր որդին՝ Արա: Լուսարարապետ Տ. Ծնորհք Եպս. զանոնք առաջնորդեց Մայր Տաճար եւ տուաւ պատշաճ ծանօթութիւններ եկեղեցիի մասին: Ապա Պատրիարք Սրբազանը եւս Եկեղեցի իջած ըլլալով պատուական հիւրերուն ցոյց տրուեցան թանկարանիս արժէքաւոր եկեղեցական զգեստներ եւ սպասներ ինչպէս նաեւ մեծարժէք ձեռագիրներ: Ներկաներու համար մտքի եւ հոգիի իսկական վայելք մը եղաւ տեսնել այսքան մեծարժէք իրեր ուր արուեստի ճարտարութիւնը եւ նիւթին թանկ արժէքը զիրար գեղեցկապէս կը լրացնէին: Ապա մեծարգոյ հիւրերը մեծարուեցան պատրիարքարանի դահլիճին մէջ եւ մտերիմ խօսակցութենէ վերջ մեկնեցան լաւագոյն տպաւորութիւններով:



Ամեն. Ս. Պատրիարք իր հիւրերով, աշին՝ Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Տնօրէնը ու Ամերիկեան Հիւպատոսը, իսկ ձախից՝ Անգլ. Հիւպատոսը:

Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ն Ե Բ

Նորին Վեհափառութիւն, Հիւսէյն Ա. Քաղաւոր, Գշ. 18 Գեկտեմբեր Նուսադէմ իր այցելութեան առիթով, Քրիստոնեայ երեք զրկաւոր համայնքներու Ս. Ծննդեան սօնի օրերը, Արեւայական բարձր երահանգով յայտարարեց, ամբողջ բազաւորութեան համար, պաշտօնական արձակուրդի օր:

Ս. Ծննդեան սօներուն պիտի նուազէ Արեւայական նուազախումբը Քերպեհէմի մէջ, բաժնիներէ առաջ սպասող հանրութեան համար:

Ա.Մ.Ն. Պատրիարք Սրբազանը, յանուն Նուսադէմի Հայոց Պատրիարքարանի եւ Յորդանանի Հայ ժողովուրդին, հետեւեալ հեռագիրը զրկեց Յորդանանի Հաշիմական Քաղաւորութեան Արեւոնապետին:

1957/12/22

معالي رئيس الديوان الملكي العالي المحترم - عمان
 باسمي وباسم اخوية مار يعقوب وباسم الطائفة
 الأرمنية الأرثوذكسية بالأردن أرجو أن ترفعوا
 لمقام حضرة صاحب الجلالة الملك الحسين المعظم
 بأخلص آيات الشكر على تكريم جلالته وتلفه
 بشمول الطوائف المسيحية بسابغ عطفه بمناسبة أعياد
 الميلاد المجيد ضارعين إلى الله أن يحفظ جلالته ويأخذ
 بيده.

رئيس الأساقفة تيوان نرسويان
 القائمقام والبطريرك المنتخب لطائفة الأرمن
 الأرثوذكس بالقدس

(Քաղաքականութիւնը արտօրերէն ընկալին)

22/12/57

Նորին Վսեմութիւն

Արեւոնի Գիւանապետ

Ամման

Իմ եւ յանուն Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ յանուն Յորդանանի Հայ ուղղափառ համայնքին, կը խնդրեմ որ Ներկայացնէ Նորին Վեհափառութիւն Հիւսէյն Քաղաւորին խորին շնորհակալութիւններ, Նորին Վեհափառութեան Քրիստոնեայ համայնքները իր հովանաւորութեան ներքեւ առեկալ շնորհին համար:

Ս. Ծննդեան սօնին առիթով կ'աղօթենք Աստուծոյ որ իր Վեհափառութիւնը անսասան պահէ եւ արեււոտութիւն պարգեւէ:

ՏԻՐԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Տեղապահ եւ Ընտրեալ Պատրիարք Հայոց Նուսադէմի

Նորին Ամենազատութիւն, Պատրիարք Սրբազան Հայրը, Նոր Տարւոյ եւ Ս. Ծննդեան Հաշտափառ սօնին առիթով հետեւեալ հեռագիրը ուղղեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառ Կարգիկոսին Ամենայն Հայոց:

31 Գեկտ. 1957, Նուսադէմ.

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա.

Կարդղիկոս Ամենայն Հայոց

Էջմիածին

Նոր Տարւոյ եւ Ս. Ծննդեան սօնին առիթով, հանեցիք ընդունիլ խոնարհ շնորհաւորութիւններ իմ եւ Ս. Յակոբեանց Միաբանութեան կողմէ:

Կ'աղօթենք որ Տեքն մեր Յիսուս Քրիստոս Ձեր Սրբութիւնը հաստատ պահէ Ձեր սուրբ զօրծին մէջ:

Խոնարհ յարգանքով եւ սիրով
 ՏԻՐԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ

ԵԿԵՂՆՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Շարունակուեցան անցնող երեք ամիսներու ընթացին կանոնադարձ սօճական ճանդիսութիւնները Ս. Յակոբեանց Մայր Տաճարի եւ Տնօրինական Ս. Տեղեաց մէջ, յարակից քաղաքներով: Կը յիշատակենք անցնցմէ գլխաւորները միայն:

Խ Ա Չ Վ Ե Ր Ա Յ

Շարաթ 28 Սեպտ.ին Խաչիբրացի մեծահարգէս նախատեսակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Հանդիսացան էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, որ նախատեսակէն ետք Ս. Խաչափայտին մատուցը հանդիսիս փոխադրեց Աւագ Սեղան:

— Նորին Ամենապատուութիւնը նախագահեց նաև գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ պաշտուեալ զեկուստի արարողութեան:

Սեպտ. 29ի կիրակին, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մեծ հանդիսաւորութեամբ Սուրբ Պատրարք մատոյց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և քարոզեց՝ ներկայացնելով խաչը իրրև զոհողութեան ու փրկութեան խորհրդանիշ մը միանգամայն: Իրեն կը ողբասրբէին Տ. Զաւէն Վրդ.ը և Տ. Վազգէն Արեղան: Քարոզէն ետք, ըստ ընկալեալ սովորութեան, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռոյս և ազգիս բարերարներ կարասցիտ և Գրիգոր Մելգոնեաններու հոգիներուն ի հանդիստ, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանի: Ս. Պատրարգէն ետք, Միաբանութիւն և ժողովուրդ երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Ս. Պատրիարքը բաժնեց ներկաներուն օրհնուած նշխարներ:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Խաչիբրացի մեծահարգէս շնորհաւատանը, ի ներկայութեան հոծ բազմութեան: Հանդիսացան էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը:

Վ.Կ. Հայրապետի Գառնակուրեան Տարեկարծ

Հոկտ. 6ի կիրակին, Ս. Յակոբեանց Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ՝ ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի Օծման Բ. տարեկարծին առթիւ ժամարան էր Հոգ. Տ. Կիրեղ Վրդ. Գարիկեան: Քարոզեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը (սեւ Սիոն, Հոկտ. - նոյ., էջ 257), և նախագահեց Հայրապետական մաղթանքի արարողութեան:

● Եր. 12 Հոկտ. — Ս. Կեդրայ զօրավարին: Մայր Տաճարին մէջ պաշտուած առաւօտեան ժամերգութեանէն ետք, Միաբան Հայրեր, Գեր. Տ. Նորայր Եպս. Պոզարեանի գլխաւորութեամբ, մեկնեցան Ղպտոց Ս. Կէդրայ վանքը, ուր մատուցուեցաւ Ս. Պատարագը ժամարան էր Հոգ. Տ. Օհան Արդ. Գապագեան: Քարոզեց Գեր. Հանդիսացիտ Սրբազանը, օրուան Առաքելական ընթերցուածը ունենալով իրրև նիւթ (Բ. կորն. Ա. 3-7), և բացատրեց թէ Քրիստոսի համար ա-

ռաւելագոյն չարչարանք կրողը պիտի ունենայ նաև առաւելագոյն միջիմարութիւն և վարձատրութիւն: Ս. Պատարագէն ետք, Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ղպտոց Հոգ. Տեղէն:

Տօն Վարապայ Ս. Խաչին

Տօնին նախօրեակի կէսօրէ վերջ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շարաւարտուով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցաւ նախատեսակը մեր վերնամաստան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս թափօրապետ էր Հոգ. Տ. Կիրեղ Վրդ. Գարիկեան:

Հոկտեմբեր 13ի կիրակին, գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն. Բ. Գողգոթայի վերնամաստան մէջ: Այս, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Կերեղմանին վրայ և քարոզեց, ընտրան ունենալով օրուան ծաշու Աւետարանէն «Այլ ինձ քաւ լիցի պարծիլ, բայց միայն ի խաչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Պաղտ. Զ. 14), խօսելով նաև օրուան տօնին ծագման շուրջ:

Տօն Մրցութեան Կիւլպինկանց

Շարաթ 26 Հոկտ.ին, հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ: Պատարագեց և քարոզեց Հոգ. Տ. Թարգոմ Վրդ. Մանուկեան, զուգակշիռը ընելով թարգմանիչներու ապրած զարուս և ներկայ զարուս ու երբակցեցնելով թէ մեր թարգմանիչ վարդապետները եղան իսկական շուշուր օրդիներ: Օրհնեցմէ ճառագայթող յոյսը լիցուցած էր նաև իրենց գարաշըմանը, ուր մեր ապրած օրերէն նուազ չէր մեղքին ու չարին ազդեցութիւնը: Ու խօսեցաւ նաև սրբութեան խորհուրդին շուրջ: Ըստ ընկալեալ սովորութեան, Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռոյս մեծ բարերար Վսեմ. Գալուստ Պէշ կիւլպինկեանի, ինչպէս նաև իր տիկնոջ և ծնողաց հոգիներուն համար, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

● Եր. 2 Նոյ. — Ս. Նորից անտարանց տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի դաւթիւթ՝ Ս. Յովհ. Աւետարանչի հայապատկան մատրան մէջ:

Քիւս Խաչ

Եր. 9 Նոյեմբերի կէսօրէ վերջ, Միաբանութիւնը, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, շարաւարտուով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Գիւս Խաչի արբաւայրին կից՝ Ս. Գր. Լուսաւորիչ հայապատկան եկեղեցւոյն մէջ պաշտուեցաւ օրուան նախատեսակը: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն

ներս: Թափօրացիներն էր Գեր. Տ. Շնորհք եպո. Գալուստեան:

10 Նոյեմբերի Կիրակիին, գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտօնեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորիչ: Ժամաբարն էր. Պէշուրթէն հիւրարար Ս. Աթոռ ժամանած, Հոգ. Տ. Գիւտ Արղ. Նագրաշեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ երազարձ մեծահանդէս թափօր՝ Քրիստոսի Սուրբ Գերեզմանին և սպա Պատանատեղւոյն շուրջ, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, որ ամպօնականի տակ Ս. Խաչափայտի ճանաչագոյ ժասունքով հ'օրհնէր Տաճարը լիցնող հոգիներով: Թարգմանչաց վարժարանի բովանդակ ուսանողութիւնը: Թափօրը վերջացաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Խրիմեան Հայրիկի Յիշատակ

17 Նոյ.ի Կիրակիին, Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամաբարն էր Հոգ. Տ. Վաղգէն Արղ. Կրպարախան: Քարոզից Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, որ անգրագառնայէ ետք երէկուան Ամենայն Որբոց տունին, խօսեցաւ Խրիմեան Հայրիկի կեանքին ու գործերուն մասին, և Ս. Պատարագէն ետք նախագահեց անոր մահուան յիսնամեակին առթիւ կատարուած հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտամունքին:

● Եր. 23 Նոյ. — Տօն Ս. Լըբեսակագացոցի: Առաւօտեան ժամերգութիւնն, ու Ս. Պատարագը մատուցուեցան Ս. Լըհշտակապետ եկեղեցւոյ մէջ: Ժամաբարն էր Հոգ. Տ. Օհան Արեղայ Գապագեան: Ըստ ընկալի սոփորութեան, Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն՝ Ս. Աթոռոյս բարերարներ Աղաւնի ձէվահիրճեանի և զաւակաց հոգիներուն համար, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր: Ապա Միաբանութիւնը հիւրատիրութեան վանուց տեսչարանին մէջ՝ Տեսուչ Հոգ. Տ. Կորիւն վրդ. Մանուէրեանի կողմէ:

● Դշ. 4 Դեկտ. — Ընծայումն Ս. Ասուածամծի: Ս. Պատարագը ի Ս. Լըհշտակապետ մատուցչ Հոգ. Տ. Թորգոմ վրդ. Մանուկեան: Ս. Պատարագէն ետք՝ ըստ ընկալի սոփորութեան, կատարուեցաւ հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն՝ Ս. Աթոռոյս բարերար Կիւլլայի Կիւլլայեանի և Կիւլլայեանի գերդաստանի համայն ննչիցիոց հոգիներուն համար, Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Բ

● Կիր. 22 Դեկտ. — Քաղաքիս Ամերիկեան Հիւպատոսարանի կազմին կողմէ, Ս. Ծննդեան տունին առթիւ սարքուած թէյասեղանի երեկոյթին ներկայ եղաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը:

● Եշ. 26 Դեկտ. — Կէսօրէ առաջ, Եւրոպացւոց Ս. Ծննդեան տունին առթիւ, Պատր. Փոխանորդ Գեր. Տ. Սուրէն Սրբազանի գլխաւորութեամբ,

Միաբան Հայրեր շնորհաւորական այցելութիւն տուին Ֆրանչիսկեանց Միաբանութեան Կիւսթոտին և Հասինայ Ամեն. Ս. Պատրիարքին:

— Իսկ Լուսարարացեալ Գեր. Տ. Շնորհք եպո. ընկերակցութեամբ մի քանի վարդապետ Հայրերու, շնորհաւորութեան գնաց Անկիլիքան Գեր. Արքեպս.ին, Պապական Նուիրակին, Ամերիկեան, Անգլիական և Լիբանանեան Հիւպատոսներուն:

— Նոյն առթիւ, Հոգ. Տ. Հայկասեր վրդ., հետն ունենալով մի քանի Հոգ. Հայրեր, այցելեց Յոյն և Հայ Կաթոլիկ Մեծաւորներուն, Մարտիր Յպս.ին և Լուսերակեաններու երէցին:

● Ուր. 27 Դեկտ. — Քաղաքիս Շմիթ Աղջըկեանց Քօլէճի վերատեսուչ և բաղամտայ պաշտօնեայ Հայր Սօննէնի յուղարկաւորութեան, ի զմայ Պատրիարքարանիս, ներկայ գտնուեցաւ Հոգ. Տ. Զաւէն վրդ. Չինչինեան:

● Կիր. 29 Դեկտ. — Քաղաքիս Սպաղնա Պիճիգական Օղանաւային Ընկերութեան Տնօրէնութեան կողմէ Ամպասատոր Պանդոկի մէջ սարքուած ընդունելութեան ներկայ եղան Հոգ. Տ. Զաւէն վրդ. Չինչինեան և Տիար Կ. Հինգիսան:

Հ Ա Յ Ո Յ Հ Ա Յ Ր Ի Կ

Մ Կ Ի Ք Տ Ի 2 Ա. Կ Ա Ք Ո Ղ Ի Կ Ո Ս Խ Ր Ի Մ Ն Ա Ն Ի Մ Ս Ա Ռ Ի Ս Ե 50-Ա Մ Ն Ա Յ Հ Ա Ն Գ Ի Ս Ո Ւ Ք Ի Ն

14 Դեկտ. 1957 Շարաթ երեկոյեան, Ս. Բակորեանց Մշակութային Յանձնախումբի կարգադրութեամբ, ժառ. վարժարանի հանդիսարանին մէջ կատարուեցաւ Խրիմեան Հայրիկի մահուան յիսնամեակին նուիրուած յիշատակի երեկոյթ մը՝ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, և ի ներկայութեան բովանդակ Միաբանութեան, ուսանողութեան և ժողովուրդի ստաւար բաղձութեան:

Հանդէսը բացուեցաւ յ. մ. ժամը 7.30ին՝ արքայական քայլերգով, որմէ ետք ժառանգ. վարժարանի բարեջան Տեսուչ՝ Հոգ. Տ. Թորգոմ վրդ. Մանուկեան ըրաւ բացման խօսքը. ապա Իրազորձուեցաւ գեղարուեստական յայտագիր մը:

Երգչախումբը գեղեցիկօրէն կատարեց «Ամէն Հայր», «Հայրիկ, Հայրիկ» երգերը և շէջ միաձինն ի Հօրէ՛», շարականը. Արտաստուեցան Գ. Վարուժանի «Կերթամ աղբիւր լոյսին» և Խրիմեանի «Սերմանացանին աղօթքը» օտանաւորները. Կատարուեցան նաև Խրիմեանի զանազան գործերէն ընթերցումներ:

Օրուան բանախօսներն էին Հոգ. Տ. Կիրեղ և Տ. Զաւէն վարդապետները. որոնցմէ առաջինը ներկայացուց Խրիմեանը որպէս գործիչ (եսն էջ 302) և երկրորդը՝ Խրիմեան որպէս գրագէտ (եսն էջ 305):

«Տէր կեցո» մաղթերգէն ետքը, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ըրաւ հանդէսին փակումը. ներկաները հոգեկան բաւարարութիւն ստանալով գոհունակութեամբ մեկնեցան Տէրունական Աղօթքի միաբերան երգեցողութիւնէն ետքը:

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալությամբ եւ օրհնությամբ կ'արձանագրենք 1957 տարւոյ ընթացից Ս. Յակոբեանց Մայր Տաճարին եւ այլ Արքայալայրերու տրուած հետեւեալ բարեպատեալացան նուէրները:

1. — Կ. Պալեսցի Օր. Վարդանուշ Պարոնեան ձեռք մը ժամարարի լրիւ զգեստ (շուրջառ. փոքրուարք, վահաս, բազպանս եւ գոտի) կը նուիրէ Ս. Յակոբեանց Տաճարին:
2. — Երուսաղէմարեանկ Տիարք Պետրոս Հինգրջեան եւ Յ. Թապուրեան հինգ նոգկական ծաղկամաններ կը նուիրեն Ս. Գերեզմանին:
3. — Երուսաղէմէն Տիկին Ազնիւ Հինգրջեան, Ս. Յակոբեանց Տաճարին կը նուիրէ երկու արծաթեայ ծաղկամաններ եւ պարսկական զորք մը՝ ի յիշատակ մօրեղբոր՝ Տիգրան փառազեանին:
4. — Քէմախցի Տէ. Հայկունի խաչատուրեան Ս. Գլխաղբի ձեռագործ վարագոյր մը կապոյտ առջաքի վրայ, հետեւեալ յիշատակագրութեամբ. «Յիշատակ է Ս. Գլխաղբի. 1957. Տիկ. Հայկունի Խ. խաչատուրեան Քէմախցի»:
5. — Հալէպէն Տիկ. Արուսեանկ Պատուէլեան կը նուիրէ մէկ քանթըլ ձեռագործ, մասի պնակի ծածկոց:
6. — Մինայէն (Թրքիոյի) Տիկ. Մարի ձիվէլէկեան մասի պնակի ծածկոց մը կը նուիրէ Ս. Յակոբեանց Տաճարին:
7. — Տիկ. Զարուհի Ֆարանեան կորփուրայ մը Ս. Յակոբեանց Տաճարին:
8. — Տիկ. Մարիամ Պապեան խաչի (ձեռաց) բռնիչ մը Ս. Յակոբեանց Տաճարին:
9. — Ոմն, ճերմակ ձեռագործ կորփուրայ մը Ս. Յակոբեանց Տաճարին:
10. — Պաղտատցի Տիկ. Զարուհի Սարգիսեան 6 կանգուն կապոյտ թաւիչ կը նուիրէ Ս. Յակոբեանց Տաճարին:
11. — Հալէպէն Այնթապցի Տէ. Նեկտար Բաթանեան մէկ Այնթապցի գործ գրակալի ծածկոց:
12. — Երուսաղէմէն Ակնցի Տիկին Մէրի Քէօրօզլանեան մէկ կանաչ նոր զարդի շապիկ:
13. — Երուսաղէմէն Այնթապցի Տիկին Մարի Շէօմէլեան մէկ բաց կապոյտ փոքր շապիկ զարդի:
14. — Պէյրուսէն Ատանայի Տիկին Գլխաղբի Փիրոյեան կը նուիրէ Սկիհի ձեռագործ ծածկոց մը, բանուած Ս. Գլխաղբին, լեցուած ք գործ մետաքս Բրիպ Սալքիի վրայ:
15. — Հալէպէն Ուրֆայի Օր. Նուարդ Քուտանեան կը նուիրէ թաւիչ ձեռաց խաչի բռնիչ մը:
16. — Երուսաղէմէն Այնթապցի Պր. Կարպիս Սէմէրճեան կը նուիրէ նոգաբանեան աշտանակ մը, ի յիշատակ իր եղբոր Սարգիսին՝ Ս. Սարգսի տունին առթիւ:
17. — Այնթապցի Տէ. Լուսիա Պելլիզըրզեան Սկիհի ծածկոց մը, բանուած Բրեալ Սաքեցի վրայ:
18. — Ուստուար Տէ. Զուարթ Պեղճեան ձեռագործ կորփուրայ մը:
19. — Տիկին Մարի Տէմիրճեան՝ ասեղնագործ խաչի բռնիչ մը:
20. — Պաղտատէն Օր. Վիքտորիա Լաջիեան՝ փուլի գործ ճերմակ կորփուրայ մը:
21. — Պէյրուսէն Սսեցի Տիկ. Վարդունի Մինասեան՝ փուլի գործ ձեռաց խաչի բռնիչ մը:
22. — Պէյրուսէն Հանընցի Տիկին Մաքրունի Բարալէրեան ասեղնագործ խաչի բռնիչ մը:
23. — Պաղտատէն Մարգարիտ Թէրզեան, Արշալոյս, Մելքոն եւ Արիս Պատալեան կը նուիրեն չորս կտոր մասի պնակի եւ այլ ծածկոցներ:
24. — Պէյրուսէն Ատիամանցի Տիկ. Զարուհի Գոյանեան կը նուիրէ Ս. Գլխաղբին մէկ մետաքսեայ ինթէպի գործ Ատենի Աւետարանի ծածկոց:
25. — Պէյրուսէն Տիկ. Թամամ Պոյանեան կը նուիրէ մէկ Ատենի Աւետարանի ծածկոց:
26. — Ատիս Ապէպայէն Ա. Իսկենտերեան կը նուիրէ մէկ թաւիչի գործ կորփուրայ:
27. — Ատիս Ապէպայէն Գալուստ Մալեան կը նուիրէ մէկ Ատենի Աւետարանի ծածկոց:
28. — Ռատուլայէն Պր. Յակոբ Շահինեան կը նուիրէ սունալուայի անձնոց մը:
29. — Խարբերդցի Տիկին Աղաւնի Կանդելեան կտոր մը եկեղեցական զգեստոց:
30. — Երուսաղէմէն Գուրգյէլէնցի Այլի Տէ. Փարիս Քէօլէեան կը նուիրէ լման ձեռք մը պատարագիչի զգեստ իր բոլոր մասերով (շուրջառ, փոքրուարք, բազպանս եւ գոտի, անձնոց եւ կորփուրայ), ու երկու գրակալի ծածկոցներ:
31. — Ամերիկայէն Տէր եւ Տիկին Պաղ. Պաղտիկեան (Հարթֆըրս), կը նուիրեն փուլի գործ, իրենց իսկ ձեռքով գործուած սկիհի ծածկոց մը:
32. — Միսսք եւ Լուսանիս Արփանեաններ կը նուիրեն վարագոյրցու 6 կանգուն կտոր, վասն Ս. Թորոս եկեղեցւոյ:
33. — Օր. Արշալոյս Լեւտարանի բռնիչ:
34. — Պէյրուսէն Օր. Լուսին Թապազեան կը նուիրէ Ս. Յակոբեանց Տաճարին ճերմակ սաքիցի վրայ փուլի գործ սկիհի ծածկոց մը:
35. — Ֆրիլաուէլֆրայէն (Միաց. Նահանգներ), Օրդ. Արաքսի Պուստաղեան եւ Նի. Երօքէն Օրդ. Զապէլ Լուկասեան կը նուիրեն չորս շապիկներ, վարագոյն մետաքս նիւթ, եւ երկու երկայն ուրարներ, ի յիշատակ իրենց ուխտաւորութեան կատարուած 1956ի Զատիկին:
36. — Պաղտատէն Վարդունի խաչատուրեան կը նուիրէ երեք վարագոյրցու կտորներ Ս. Յակոբեանց Տաճարին:
37. — Պաղտատէն Լուսին Լիմիրեան կը նուիրէ մէկ վարագոյրցու կտոր:
38. — Պէյրուսէն Տիկին Սապոնճեան կը նուիրէ ձեռաց խաչի ձեռագործ բռնիչ մը:
39. — Երուսաղէմէն Տիկին Լիլիզ Աղայարեան կը նուիրէ կենաց փայտի ճանաչիչ համար երկու կտոր նուրբ սքաւ:
40. — Երուսաղէմէն Լիլիզ Մայրապետ Մամեան կը նուիրէ վարագոյր մը Սուրբ Գերեզմանի դրան համար՝ եւ զոյգ մը Սարկաւապի ինքնանոգաբարծ վզնոց՝ Ս. Յակոբեանց Տաճարին:

Լուսարարապետ Ս. Արքայ
ՇՆՈՐՀՔ ԵՊՍ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Ս Ի Ո Ն

ՅԱՆԿ ՆԻԻՐՈՅ 1957 ՏԱՐԻՈՅ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն . —		Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ . — Սեւ գոյժը	283
ՍԻՐԱՐՓԻ ՏԷՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ . — Վարդան		ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՓ . —	
Այգեկցիի վերագրուած խրատ մը	18	Նոր մատուռի հիմնարկէք Սոֆիայի մէջ	113
ՀԱՅԳ ՊԷՐՊԷՐԵԱՆ . — Սեբաստիոյ Սուրբ		Նոր եկեղեցիի հիմնարկէք Շաւիլի մէջ	113
Նշան վանին հիմնադիրը	59	Խարբուրի նոր եկեղեցին եւ հայերը	113
Էջմիածին 1655ին (քրգմ.)	268	Օղլենքի նորաշէն եկեղեցին	163
Մ. ՄԿՐԵԱՆ . — Նարեկացու կեանքը	238, 272	ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ . —	
Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ Ա Կ Ա Ն . —		ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ . — Միջնադարեան հայ կոմպոզիտորներ 26, 187, 230, 276, 320	
ԱՐՇԱՄ ՏԱՏՐԵԱՆ . — Նարեկ	14	ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ . —	
Անցար ...	15	Գարոցական արդիւնքը	39
ԱՐՇԱՂՈՅՍ ՄԱՐԳԱՐԵԱՆ . — Երեկոն		Օրմանեանի կարծիքը 1866 - 1877ի Սիօնի մասին	39
Արարատեան դաշտում	15	Սանակ Կարողիկոսին նամակը	114
Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ . — Աղաչանք	16	«Ի՛նչ էք լոյս աշխարհի»	150
Քառեակներ	16	Քելիամի ասուածաբանական դպրոցը Անգլիոյ մէջ	197
Գարուն	58	Լոզանի Կրօնական Համալսարանային ժողովը եւ Հայաստան-Եայ եկեղեցին	245
Հայաստանին	100	ԽՄԲԱԳՐԱԿԱՆ . —	
Չայնիզ դիմաց	152	Երեսնամեայ վաստակ	1
De Profundis	178, 315	Ուխտաւորութիւնը	90
Մեր մեծագոյն փառքին	225	Կրթական մեր ձեռնոցը	169
Գերգալստութիւն	261	Կրօնի մասին մտաւր տեսակետներ՝ պատճառ մեր տաղանթներուն	217
ՋԱԻԷՆ Վ. Չ. — Չայնութիւն	17	«Հաւատամք եւ ի մի միայն ...»	249
Իսկալ	99	Սուրբ եկեղեցի»	298
Աչքերն խորունկ դիտելու (քրգմ.)	261	«Թշուարք առն՝ քնտնելի իւր»	298
ԱՆՆԱԿ . — Աստուծոյ սակ բոլորին	57	ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԻ ՓՈՒՍՔԷՆ . —	
ՅԱԿՈՒՅ ԱՆՏԱՆԵԱՆ . — Տարեկարծ	98	Բացման նառ՝ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Միաբ. Անգլ. ժողովի առաջին նիստին	137
Գ. ՃԻՆԻՎԻԶԵԱՆ . — Փառք Քեզ, Տեր	100	ԿՐՕՆԱԿԱՆ . —	
ՄԱՌԻ ԱՅՄԱՃԵԱՆ . — Վարդան Մա. միկանեան	151	ՇՆՈՐՀՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ . — «Սիրոն» օրակա կրօնական ամսագիր	6
ՅՈՎՀ. ՇԻՐԱՋ . — Բարբ	152	ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ . — Սայրափիլ եւ վերականգնելի	52
ՀԱՄՍՈ ՍԱՀԵԱՆ . — Նայիբեան դպար	180	Մեռնողի երգը	312
Բարդի	180	ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊՍ . — Նոր Կիւրակէ	95
**	180	«Քանգի ի սմա ծագեաց մեզ լոյս»	257
Կակաչ	224	ԻՍԱՀԱԿ ՎԱՐՎԱՊԵՏ . — եկեղեցի	96
**	224	ՎԱՋԳԷՆ Ա. ԿԱՅՈՒԿԱՆՍ . — «Եկայի շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»	175
ԱՐՍԷՆ ԵՐԿԱՅ . — Առասպել	261		
Կեանքը			
ՍԻՎԱԿԱՆ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ . — Սիրոյ խօս. բերից	225		
Թ. — Աղօթք վասն Հայ եկեղեցւոյ	260		
ԳՐԱՆՈՒՅՈՍԱԿԱՆ . —			
ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ . — «Ժամագիրք»	106		
ՍՍՍ - ՎԱՆԻ . — «Միսրիկ Տաւիղ»	195		
ԳՐԱԿԱՆ . —			
ԹՈՐԳՈՍ ՎՐԳ. ՄԱՆՈՒԿԵԱՆ . — Գրա. կան բաժինը «Սիրոն»ի մէջ	31		

Ազոբի Ս. Եղիեկ վարդապետի Քրիստոսի Այլադեպոսիանի սոնին առքիւ	144	Քաղաւածք՝ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի նիստերի արձանագրութիւնից	38
Ազոբի Ներսէս Հայրապետի խաղաղ օրհնութեան համար	173	Հաղորդագրութիւն Ս. Արոսոյ Գիւանէն	40, 73, 122, 205, 284, 326
Ազոբի եւ օրհնութիւն Ս. Յովնանու Ոսկեբերանին	221	Շուտադիմի Յունաց Պատրիարքի ընտրութիւնը	46
Ճառ Բարսեղ Հայրապետի	255	Կոնգակ՝ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի	49
Հ Ա Յ Կ Ա Կ Ս Ն Վ Ա Ն Ք Ե Ր . —		Ս. Արոսոյ ընտել Պատրիարք	65
Ն. ԵՊՍ. Մովսէս ԱՆ. — Սիրահայեաց Ս. Ասուածածին	279	Ընտրութիւն պատրիարքի Առաքելական Ս. Արոսոյ	67
Մ Ա Տ Ե Ն Ս Գ Ր Ա Կ Ա Ն . —		Կենսագրական գիծեր՝ Ամեն. Տ. Տիրան Արեւազ. Ներսոյեանի	69
Ն. ԵՊՍ. Մովսէս ԱՆ. — (Խել) Յովնան. Եւ թղիւրացի	157, 190, 234, 283	Ս. Արոսոյ Լուսարարապետի ընտրութիւնը	72
Մ Ե Ր Թ Ե Մ Ե Ր Է Ն . —		Շնորհաւորական հեռագիրներ՝ Ամեն. Տ. Տիրան Արեւազ. ի պատրիարք ընտրութեան առքիւ	74, 121
Բժիշկ Ն. Տէր ԿԱՐԱՊԵՏԵԱՆ. — Ասրպեհանի քեմի այսօր	110	Շնորհաւորական նամակներ՝ Ամեն. Տ. Տիրան Արեւազ. ի պատրիարք ընտրութեան առքիւ	115, 160
Յունաստանի հայութիւնը եւ Արեւելի Հայոց Ա. Գր. Լուսարարիչ եկեղեցին	241	Տեղեկատուութիւն Ս. Տեղեաց Գիւանի	87
Պ Ա Տ Մ Ա . — Բ Ա Ն Ս Ի Ր Ա Կ Ա Ն . —		Շնորհաւորական նամակ՝ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին	89, 297
Հ Ր Ա Ն Գ Ք . Ա Ր Մ Է Ն . — Պայ Արեւիկունի	22, 62, 101, 153, 181, 226, 262, 317	Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան Խնամակալներուն այցելութիւնը	128
Ս . Յ Ա Կ Ո Ւ Թ Ի Ն Ե Ր Ս Է Ն . —		Պատրիարքական Փոխանորդի նշանակում	132
Յուն. — Փետր. Ամսօրեայ լուրեր	41	Հոգ. Տ. Թարգոմ վրդ. Մանուկեանի այցելութիւնը Սուրիա եւ Լիբանան	198
Մարտ	»	Ձեռնագրութիւն կուսակցոյն ֆանատիկներու	200
Ապրիլ — Մայիս	»	Կիսօտարկաւազութեան եւ Գպրութեան ասիանաներու սրչութիւն	202
Յունիս	»	Նրանաւորի Տ. Կիւրեղ Պատրիարքի շքանշանին բացումը	203
Յուլիս — Օգոստոս	»	Ս. Էջմիածնի Հոգեւոր ձեռնարանը	204
Սեպտեմբեր	»	Խարբուրդի եկեղեցիին բարերարը	204
Հոկտ. — Նոյեմբ.	»	Գրիգոր Գեորգ Կարապետեան կսակ	216
Գեկեմբեր	»	Խնդակցութեան հեռագիրներ	289
Տ Խ Ր Ո Ւ Ն Ի . —		Մայր Արոս Ս. Էջմիածնի դիւանասան հաղորդագրութիւնը	290
Գերենիկ Գեմիքեան	47	Անիպ նամակ մը Խրիմեան Հայրիկին	310
Շաւարե Միսաքեան	47	Նպիսկոպոսական ձեռնագրութիւն	327
Տ. Խորէն Ա. Քնյ. Շուշանեան	48	Շնորհակալութեան գիր Նրանաւորի Տ. Կիւրեղ պատրիարքի շքանշանին	327
Տ. Գեորգ Ա. Քնյ. Գեորգեան	48	Բարեպաշտական նուէրներ	334
Տ. Յովնանեկ Ա. Քնյ. Կեղեկեան	48		
Ներսէս Կիւլպենկեան	167		
Տ. Գրիգոր Նպս. Կարապետեան	168		
Տ. Յովնանեկ Ա. Քնյ. Տեր Սարգսեան	168		
Աւետիք Իսահակեան	283		
Տ. Փառնեկ Նպս. Մելիքեան	295		
Միսաքեան Պողոս Քեչիքեան	296		
Տոբ. Ռաֆայէլ Արմասունի	296		
Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Ք . —			
Կ. Վ. Գ. — Փոքր բայց օրինակելի հայ գաղութ մը	36		
ԿԻՐԵՂ ՎՐԻ. ԳԱՔԻԿԵԱՆ. — Խրիմեան օրպէս գործիչ	302		
ՋԱԻԷՆ ՎԱՐԳԱՊԵՏ. — Գրագէտը՝ Հայոց Հայրիկ Մ. Խրիմեանի մէջ	305		
ԱՍՏԱՆԻՐ ԿԻՐԵՂԵԱՆ. — Կալկարայի Ս. Նազարէր եկեղեցւոյ 250ամ. եակի սօնակատարութիւնը	323		



Լոյս Տեսան

ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՍ ՏՊԱՐԱՆԷՆ

ՄԻՋՆԱԿԱՐԵԱՆ

ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

ՕՐԱՑՈՅՑ
1958

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ
(ԸՍՏ ՀԻՆ ՏՈՄԱՐԻ)

Եւ

Բուն Թուականին Հայոց
ՏՆԾ - ՏՆԾԱ = 4450 - 4451

Եւ

Տոմարական Թուականին Հայոց
ՌՆԷ - ՌՆԸ = 1407 - 1408

ՏՊԱՐԱՆ ՄՐՈՑ ԾԱԿՈՐԵԱՆՑ
ԵՐՈՒՍԱԸԵՄ

Գ Ր Ե Ց

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ



ՏՊԱՐԱՆ ՄՐՈՑ ԾԱԿՈՐԵԱՆՑ
ԵՐՈՒՍԱԸԵՄ
1958


Էջ՝ 176 >< Գին՝ 100 Ֆիլս

Էջ՝ 216 >< Գին՝ 150 Ֆիլս

«ԱՒՈՆ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԿԱՐԱՆԸ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄԱՂԹԱՆՔ ՎԱՍՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԻԻՍ - (Բազմազգուած):
ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (Ա. Գիրք) - Հ. Ամիրբան:
ԵՐԿԻՐ ԽՈՒՎՔԻ - Արմէն Անոյշ: Նուէր «Յուսաբեր»էն: [գարեան (նրոս.):
ՆՄՈՅՇՆԵՐ ՊԱՐՍԻԿ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՆՑ - Քրզմ. Իսկանդար Իսկան-
ՏՈՒՆ ՓԵՍԱՑ (Կատակ. 3 Արար) - Հրատ. եւ նուէր Համազգայինի Թատեր. Միութեան:
HOLY CROSS ARMENIAN CHURCH - Union City, N. J. - 50th Anniversary.
THE ECONOMIC & SOCIAL DEVELOPMENT IN THE COUNTRIES OF THE ARAB
LEAGUE. 1st Edition (In Arabic). Burham Ghazal.
ՇԻՐԱԿ ԵՐԳԱՐԱՆ (Դ. Տպագրութիւն, 1957) - Նուէր Կ. Օհաննէսեանէ:
ԽՈՑԵՐ ՈՒ ԲՈՑԵՐ - Ա. Սոփոկլեան (նուիրատու):
ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒ ԿԱՏԱՐԻՆ - Ժողէֆ Հաճեան (նուիրատու):
ՄԵՆ ԳԵՐԻՆ ԱՐՏԱՒԱԶԴ (Թատր. 3 Արար) - Արմենակ Տէր Յակոբեան (նուիրատու):

Շարունակելի)



ՄԵՄԱՆՈՒՆ ԳՐԱԳԷՏ-ՔՆՆԱԴԱՏ

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԳԱՍԱԳԻՐՔԸ

ԱՐԵՎՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՍՆ ՀԱՐԻՐՈՄԵՍՅ ՎԱՍՏԱԿԸ
(1850 - 1950)

Ազգային վարժարաններու բարձրագոյն կարգերուն եւ եկեղեցական վարժարաններուն համար կարեւոր դասագիրքը:

Բազմաթիւ կենսագրական ծանօթութիւններ, հարիւրաւոր գրական վերլուծումներ, վարսուն բարագրական նիւթեր եւ բացատրութիւններ:

ՄԱՔՈՒՐ ԹՈՒՂԹ ԵՒ ՇՔԵՂ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Էջ՝ 688

Գին՝ ՄԷԿ Արերլին

Սուրբա - Լիբանան 10 Լ. Ոսկի, Ամերիկա 5 Տոլար, Ֆրանսա 1500 Ֆրանկ:

ՏՊԱՐԱՆ ՄՐՈՑ ՅԱԿՈԲՅԱՆ

ՀՐԱՆԳՔ. ԱՐՄԷՆԻ

ՊԱՊ ԱՐՇԱԿՈՒՆԻ

(Պատմա-Բանասիրական երկասիրութիւնը)

Ներածութիւն՝ էջ 9-27, Առաջին Մաս՝ ԱՐՇԱԿ Բ., էջ 31-158, երկրորդ Մաս՝ ՊԱՊ, էջ 161-296, Մասնագրութիւն՝ էջ 297-299, Յատկումա՞ծ Ա — Աղբիւրներ, էջ 300-308, Յատկումա՞ծ Բ. — Ժամանակագրական խնդիրներ՝ էջ 309-313, Յատկումա՞ծ Գ. — Ներսէս Կարողիկոս, էջ 314-315, քննարկներ 318 էջ, Գին՝ 250 Ֆիլա:

تصديدها - بطريق كية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول -- صاحب النيابة الاسقف هايكازون أبراهاميان
طبع في مطبعة دير الارمن - القدس العدد ١٢
ديسمبر - ١٩٥٧

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Bishop Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

ՅԱԻԵԼՈՒԱԾ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Պաշտօնաթերթս սպագրուած էլ թղթասարութեան
յանձնուելու վրայ էր՝ երբ պաշտօնապէս հաղորդուեցաւ
մեզի որ վեճաբեկ Ա.Տեանը հաստատած է վերափոխու-
թեան Ա.Տեանի տուած որոշումը ի նպաստ Պատրիարքա-
րանիս : — Մանրամասնութիւնք՝ յաջորդիւ :

ԳԻՒԱՆ Ս. Ա.ԹՈՌՈՅ